ԴՐՕՇԱԿ

ISSN 2579-2954



Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ

(78-րդ տարի) **Թիվ-3** (1685) Մարտ 2024

Բովանդակություն

«Դրօշակ» ամսաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության պաշտոնաթերթ
Հիմնադիր՝ «ՀՅԴ պատմութեան թանգարան հիմնադրամ»
Երևան, Միեր Մկրտչյան փ. 12/1
Հեռ. (+374) 10-52-18-90
Էլ. հասցե՝ droshak@arf.am
Կայք՝ hhttps://www.droshak.am

Գլխավոր խմբագիր՝ Արտաշես Շահբազյան
Խմբագրական խորհուրդ

1- Առաջնորդող

Ոտատակ ընկած Նիկոլ, ոտատակ եղող Հայաստան (էջ 1-3)

2- Իրավաքաղաքական

Արփի Աբրահամյան
Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգության և նրա ընտրած զարգացման ուղու երաշխավորն ու աջակիցն է (էջ 4-6)

Տաթևիկ Աղաջանյան
Խնդիրներով լեցուն ներկա ու անորոշ ապագա. արցախցիները բռնի տեղահանությունից հետո (էջ 7-9)

3- Հայ դատ

Արմեն Մարուքյան
Արցախի Հանրապետության բնակչության նկատմամբ Ադրբեջանի վարած հանցավոր քաղաքականության իրավաքաղաքական գնահատականը (էջ 10-13)

Մելինե Անումյան
Կեղծ մզկիթների երկիրը կամ հայկական մշակութային հետքերը վերացնելու թուրքական մեթոդները (էջ 14-17)

4- Հասարակություն

Մանվել Մկրտչյան
Ի՞նչ է ամբոխը, ինչո՞ւ է նա տենդորեն նոր առաջնորդ փնտրում (էջ 18-20)

5- Աշխարհաքաղաքական

Լուսինե Մխիթարյան
Երրորդ համաշխարհային պատերազմի ուրվականը (էջ 21-23)

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն
Հովանավոր պետությունների դերը ներկայիս աշխարհակարգում. ունի՞ արդյոք Հայաստանը աշխարհաքաղաքական հովանավոր (էջ 24-26)

6- Դեմքեր և դեպքեր

Մովսէս Ծիրանի
... Դուք ձեր արիւնէն է, որ պէտք է վախնաք (էջ 27-31)

Անի Մելքոնյան
Հայ հեղափոխության նահապետի գործն ու պատգամը (էջ 32-36)

7- Ընթերցումներ

Մարգարիտա Խաչատրյան
Հանուն հայության վաղվա օրվա (էջ 37-38)

8- Ընկերական զրույցներ

Վրէժ-Արմէն
Երբ չենք յարգեր երթեւեկի կանոնները (էջ 39-40)

Ոտատակ ընկած Նիկոլ, ոտատակ եղող Հայաստան

2024 թ. փետրվարի 16-18-ին Մյունխենի անվտանգության համաժողովում Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Ուկրաինայի հարցով Հայաստանը Ռուսաստանի դաշնակիցը չէ»: Իսկ փետրվարի 22-ին «France 24» լրատվական հեռուստաալիքին տված հարցազրույցում Փաշինյանն ասել է. «Փաստացի Հայաստանը սառեցրել է իր անդամակցությունը ՀԱՊԿ-ին»: Նույն այդ օրերին շրջանառվում են խոսակցություններ, իսկ շաբաթներ անց հայտնի է դառնում, որ Հայաստանը Ռուսաստանի սահմանապահ ծառայությանը պաշտոնական նամակով տեղյակ է պահել սույն թվականի օգոստոսի 1-ից «Զվարթնոց» օդանավակայանում վերջիններիս ծառայությունը դադարեցնելու մասին: Միաժամանակ տարածվում է այն տեղեկատվությունը, թե սպասվում է Զելենսկու այցը Հայաստան (այս վերջինը տեղի չունեցավ. գուցե առայժմ): Հարց է ծագում՝ ինչն է ստիպել Հայաստանի իշխանություններին կատարելու կտրուկ և ամբողջական դիմաշրջում դեպի Արևմուտք՝ ուղիղ համեմատությամբ սրելով հարաբերությունները Ռուսաստանի հետ: Գուցե սա յուրատեսակ հաշվետվություն-հավաստիացո՞ւմ է Արևմուտքին, որն այդ հստակությունն է պահանջում քաղաքական ճարպկությունների սովոր Հայաստանի վարչապետից: Գուցեն Արևմուտքն է շտապում հակառուսականության նոր ճակատ բացել Անդրկովկասում, երբ Ուկրաինան ակնհայտորեն տանուլ է տալիս պատերազմում: Եվ արդյո՞ք Հայաստանի անվտանգության, եթե չասենք, գոյության հաշվին խաղարկվող այդ սցենարի մասին չի վկայում Միացյալ Թագավորության ռազմական նախարար Ջեյմս Հիպիի հայտարարությունը, թե Լոնդոնը «կաշխատի եվրաատլանտյան դաշնակիցների հետ՝ աջակցելու Հայաստանին Ռուսաստանի պատասխան սպառնալիքների դեպքում» (https://alikonline.ir/political/16115): Ինչպես ասում են. «Աչքներս լույս»: Միացյալ Թագավորության նախաձեռնությամբ եվրաատլանտյան դաշնակիցները կաջակցեն Հայաստանին Ռուսաստանի հետ հակամարտության մեջ մտնելու դեպքում: Իսկ այդ հավանականությունը ենթադրվո՞ւմ է, թե հրահրվում. որևէ պարագայում այն նույն մահացու հեռանկարն է Հայաստանի համար: Շատ ծանոթ բան չի՞ հիշեցնում այս ընթացքը: Ռուս-ուկրաինական պատերազմի սկսվելուց 1 ամիս անց՝ 2022 թ. մարտին, թուրքական միջնորդությամբ Անթալիայում տեղի ունեցան ռուս-ուկրաինական բանակցություններ, ձեռք բերվեցին որոշակի համաձայնություններ, որոնք հանգեցին նախաստորագրման հանգրվանի, բայց քանի դեռ կողմերը չէին հասցրել վավերացնել փաստաթուղթը, Կիև թռավ Միացյալ Թագավորության վարչապետ Բորիս Ջոնսոնը և խոստանալով ամենայն աջակցություն՝ դրդեց հրաժարվելու հաշտության պայմանագրի

կնքումից և շարունակել պատերազմը: Հիշեցնե՞նք Հայաստանի իշխանություններին, թե ինչ վիճակում է այսօր Ուկրաինան: Պարզապես արձանագրենք, որ այս երկիրն արդեն կորցրել է մոտ չորս այսօրվա Հայաստանի չափ տարածք, 45 միլիոնանոց երկրի բնակչության թվաքանակը մոտավորապես կիսվել է (Ռուսաստանի քաղաքացի դառնալով, փախչելով երկրից և մոտ կես միլիոն զոհ տալով), ավերվել է երկրի տնտեսական-էներգետիկ համակարգի մեծ մասը, Ուկրաինային սպառնում է տարածքների հետագա մասնատումը նաև եվրոպացի հարևանների միջև: Ըստ լուրջ կանխատեսումների՝ Եվրոպայի ամենամեծ երկրին սպառնում է պետականության կորուստն ու կազմալուծումը: Իհարկե, նույն այս ճանապարհին՝ Զելենսկուն, իսկ հաջորդ հանգրվանում Սահակաշվիլուն հերթափոխելու ճանապարհին գտնվող Փաշինյանին արդեն հաջողվել է հայկական իշխանության ներքո գտնվող երկրի 30 տոկոսից ավելին տանուլ տալ, այնուամենայնիվ սա սթափեցնելու և համարժեք հետևությունների տանող եզրակացության չի մղել նրան և նրա խամաճիկային թիմին: 2018 թվականից Հայաստանին պարտադրված քաղաքականությունը շարունակվում է: Որպես այս սցենարը ամբողջացնող այուժետային ծանոթ գիծ դրսևորվում է Եվրոպայի և եվրոպական կառույցների առաջնորդների հիացմունքը Հայաստանի իշխանությունների ժողովրդավարական բարեփոխումների կուրսի հանդեպ: Եվրամիությունն ասում է, թե ՀՀ-Եվրամիություն հարաբերությունները երբեք այսքան խորն ու ամուր չեն եղել: Մնում է կանխագուշակել, թե ինչպես են արտահայտվում այդ «խորն ու ամուրը»՝ բացի ՀՀ իշխանությունների ամբողջովին Արևմուտք թեքվելուց և Ռուսաստանին հակադրվելուց: Միաժամանակ հրավեր է հնչում հերթ կանգնելու Եվրամիության անդամի թեկնածու դառնալու համար թեկնածուների երկար շարքում:

Նիկոլ Փաշինյան քաղաքական թյուրիմացությանը ծնած ՀՀԾ-ի իշխանությունից հետո Հայաստանը զգուշավոր քայլերով զարգացնում էր հարաբերությունները Արևմուտքի հետ և անգամ մասնակցում էր ՆԱՏՕ-ի ինչ-ինչ ծրագրերի: Փոխլրացնող (կոմպլեմենտար) այս քաղաքականությունը ջղագրգռություն չէր առաջացնում Հայաստանի դաշնակիցների և մյուս գործակիցների մոտ, որովհետև Հայաստանն իր քաղաքականությունն իրականացնում էր բաց՝ առանց կողմերի շահերի վրա հակադրություններ սարքելու գավառական պարզունակ ճարպկության, հստակորեն ցուցադրում էր քաղաքական առաջնահերթություններին հավատարմությունը, իսկ, որ ամենակարևորն է, այդ հարաբերությունները չէր կառուցում ի հաշիվ և ընդդեմ տարբեր կողմերի: Քաղաքական կապերը դիվերսիֆիկացնող այս քաղաքականությունը վտանգավոր մարտահրավերներ չէր ստեղծում Հայաստանի համար: Ներկայիս ճակատագրական պատմափուլում, երբ անփորձ իշխանությունը ունակ չէ թշնամական սպառնալիքները հաղթահարելու, 180 աստիճանի շրջադարձ կատարելով, գործիք է դարձել Ռուսաստանին Անդրկովկասից դուրս մղելու նպատակը հետապնդող ուժերի ձեռքին, այսպես ասած, «եվրոպամետ քաղաքականությունը» փորձում է ներկայացնել որպես անկախ Հայաստանի անցած ճանապարհի համար չտեսնված ու շատ առաջադիմական մի բան: Թերևս կարելի է չզարմանալ՝ ընդունելով, որ Նիկոլ Փաշինյանն ու իր արկածախնդրական թիմը ցանկության դեպքում անգամ այլևս այլ բան չեն կարող անել, որովհետև խորանում է կախումը արտաքին հովանավորներից և երկիրը հոշոտել ցանկացող թշնամիներից:

Այլապես մի՞թե Նիկոլ Փաշինյանից լավ որևէ մեկը գիտի, թե ինչ հետևանքներ են ենթադրում Ռուսաստանի հետ հարաբերությունների սրումը և աշխարհաքաղաքական բախման պայմաններում այլոց կռվի մեջ ոտատակ ընկնելը:

Փաշինյանը լավ գիտի, որ Ռուսաստանին թշնամության մղելը Հայաստանին սպառնում է ամեն տարի մոտ մեկուկես միլիարդ տրանսֆերտային գումարների կորստով, որոնք այդ երկրում աշխատող հայերն ուղարկում են իրենց հարազատներին՝ հսկայական սոցիալ-տնտեսական խնդիր լուծելով Հայաստանում: Դա նշանակում է ատոմակայանի հումքի, ադամանդի, էժան նավթամթերքի, հացահատիկի և այլ ապրանքի հոսքի դադարեցում կամ մեծ տոկոսով թանկացում, նշանակում է հայկական՝ հիմնականում գյուղատնտեսական արտադրանքի առջև այս մատչելի և առայժմ անայլընտրանք շուկայի դռների փակումը, Ռուսաստանում աշխատող մի քանի հարյուր հազար հայերի վտարումը և այլն: Այս շարքը կարելի է շատ երկարացնել՝ չանդրադառնալով անգամ ամենակարևոր՝ անվտանգային խնդիրներին: Փաշինյանը և իր բախտախնդիրների թայֆան իշխանության գալուց առաջ և գալու առաջին օրվանից իրականացրել են հայ ժողովրդի մեջ հակառուսական տրամադրություններ բորբոքելու, հայ-ռուսական հարաբերությունները խզման տանելու քաղաքականություն: Եթե Նիկոլ Փաշինյանը այս նպատակը չունենար և փոքր-ինչ ազնիվ լիներ, կխոստովաներ, օրինակ, որ 2020 թ. պատերազմի կեսին ստիպված էր լինելու ամբողջական պարտություն ընդունել, եթե ամեն օր ինքնաթիռները Ռուսաստանից զինամթերք չհասցնեին Հայաստան: Եթե նա ազնիվ լիներ, կհիշեր, որ հոկտեմբերի 19-ին Ռուսաստանի նախագահն առաջարկեց դադարեցնել պատերազմը առկա դիրքերում, որ Ալիևին համոզել է համաձայնել դրա հետ, և եթե ինքը չմերժեր, այսօր Արցախը պահպանված կլիներ, և 2000-ից ավելի հայ զինվորի կյանքը կփրկվեր: Փաշինյանը չի հիշի այն մասին, որ ռուսներն առաջարկում էին Արցախի հարցի լուծումը սառեցնել՝ կարգավիճակի խնդիրը թողնելով ապագային, և այս առաջարկի հետ եթե ինքը համաձայներ, այսօր Արցախը լինելու էր պահպանված և պաշտպանված՝ ապագայում կարգավիճակի լուծման հեռանկարով: Նիկոլ Փաշինյանը, սակայն, պետք է մերժեր այս բոլորը և շարունակեր քայքայել Ռուսաստանի հետ հարաբերությունները՝ հստակ առաջնորդվելով այն նպատակներով, որոնք իրականացնելու համար ստանձնել էր իշխանությունը: Նիկոլ Փաշինյանը ռուս սահմանապահներին դուրս է հանում օդանավակայանից, իսկ մոտ ապագայում նա ընդհանրապես հրաժարվելու է ռուսական ռազմուժի, այդ թվում՝ հայ-թուրքական սահմանի պաշտպանությունն իրականացնող սահմանապահ զորքի ներկայությունից մեր երկրում:

Հայաստանի իշխանությունն իր առաջնորդի գլխավորությամբ հրաշալի հասկանում է, որ ՀԱՊԿ-ի հետ կապերը խզելուց և ռուսական զինված ուժը մեր երկրից դուրս բերելուց հետո Հայաստանը դառնալու է ամբողջովին բաց թուրքական ներխուժման համար, հետևաբար այդ ներխուժման անհրաժեշտությունը չի էլ լինելու, առանց դրա էլ Հայաստանն ընկնելու է թուրքական ազդեցության տակ: Որպես Արևմուտքի և ՆԱՏՕ-ի ներկայացուցիչ՝ հենց Թուրքիան է մտնելու Հայաստան՝ իհարկե, նախևառաջ հետապնդելով Անդրկովկասում Ռուսաստանին փոխարինելու, Զանգեզուրի միջանցքը իր անվերահսկելի հսկողության տակ վերցնելու և պանթուրանիզմի ճանապարհը գործարկելու նպատակները: Գուցե

հենց այդ հաշվարկով էլ այժմվանից Հայաստանի իշխանությունը կատարում է զիջումներ, որոնք կպահանջվի, երբ երկիրը փաստացի կվերածվի թուրքական կամ թուրք-ադրբեջանական գաղութի: Այլապես հասկանալով, թե հասարակության մեջ ինչ դժգոհություն է բորբոքվում՝ ինչի համար են իշխանությունները կանխավ տարածքները հանձնում և, ըստ թուրք պաշտոնյաների հայտարարությունների, համաձայնում Զանգեզուրի միջանցքի վերաբերյալ թուրքական պահանջներին, խոսում նոր Սահմանադրության մասին, թուրքական գաղափարախոսություններին համապատասխան փոփոխում հայագիտության հիմնարար գաղափարները, տվյալ ճյուղերի կարգավիճակը կրթական համակարգում: Անգամ հասնելով սրբապղծության՝ պատերազմի հերոսների նկարները հանում են փառքի անկյուններից: Ալիևը իր գրպանում համարելով Հայաստանի ութ գյուղերը ստանալու հարցը՝ խոսում է այժմ արդեն «Ադրբեջանի դեմ ռազմական հանցագործություններ գործած» հայաստանցիներին հանձնելու պահանջի մասին: Հայտարարելով, թե ինքը Հայաստանի Հանրապետության վարչապետն է՝ Փաշինյանն ամբողջովին հրաժարվում է և՛ հայոց պատմական անցյալից, և՛ հիշողությունից, և՛ հայ դատից, և՛ այն ազգային արժեքներից, որոնք առնչվում են այդ ամենի հետ:

Ինչ վերաբերում է նրան, թե Արևմուտքը մեզ կպաշտպանի, այդ հեքիաթին իշխանությունն անգամ չի հավատում: Նախ արևմտյան ղեկավարներն են հայտարարել, որ Հայաստանը պաշտպանելու համար զինվոր չեն ուղարկի տարածաշրջան, մյուս կողմից էլ, երբ իշխանությունը ժողովրդին շանտաժի է ենթարկում Ադրբեջանի հնարավոր հարձակման սպառնալիքով, հաստատում է այն տեսակետը, որ ինքն իսկ չի հավատում Արևմուտքի միջամտությանն ու աջակցությանը: Ի դեպ, այդ նույն Արևմուտքը փոխլրացնող ամուր տնտեսաքաղաքական կապերի մեջ է Ադրբեջանի և նրա հովանավոր Թուրքիայի հետ և անգամ շրջափակման երկար ամիսներին ոչ միայն օգնության ձեռք չմեկնեց հայությանը, այլև որոշ երկրների ներկայացուցիչներ իրենց հերթին էին պահանջում արցախցիներից լքելու իրենց բնօրրանը՝ սպառնալով հնարավոր ցեղասպանությամբ: Ակնառու փաստ է, որ եվրոպական ղեկավարների ու կառույցների՝ Ադրբեջանին ուղղված բոլոր հայտարարություններին և ընդունած որոշումներին հակառակ՝ Ալիևը անխոով շարունակում է իր սպառնալիքներն ու հակահայ քայլերը՝ դրանով փաստելով ոչ միայն արևմտյան բոլոր որոշումների, այլև նիկոլական իշխանության հույսերի սնանկությունը:

Պետք է հստակ լինի նաև, որ Հայաստանի իշխանությունների արտաքին քաղաքականության մեջ քաղաքական հիմքեր փնտրելը անիմաստ է՝ այդ քաղաքականությունը ամբողջովին պայմանավորված է այն ազդեցություններով և կախումներով, որոնք այս խառնախմբի համար գոյություն են ունեցել դեռևս իշխանության գալուց առաջ և արտահայտվել են շատ հստակորեն, երբ նա դեռ ջուր էր պղտորում ընդդիմադիր դաշտում: Չունենալով արտաքին քաղաքականություն իրականացնելու փորձառություն, խորթ լինելով ազգային մտածողությանն ու ազգային ռազմավարական շահերին, չհասկանալով աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային առանձնահատկություններով պայմանավորված անկախ Հայաստանի որդեգրած քաղաքական ուղեգծերը՝ վերջապես, որպես զիվորական պարտադիր ծառայությունից խույս տված դասալիք, Փաշինյանն իր օտարասուն համախոհների հետ հավատաց արտաքին հովանավորների խոստումներին ու նետվեց դաժան գործընթացների հորձանուտի մեջ: Լողալ չիմանալով՝ այդ ալեկոծումների մեջ կործանեց Արցախը, կործանման շեմին կանգնեցրեց Հայաստանը՝ մեր երկիրը դարձնելով մեծ շահերի բախման և անվերջանալի ցնցումների ներուժ պարունակող փորձադաշտ: Ոտատակ ընկնելով մեծ խաղերի մեջ՝ նա այստեղ ներքաշեց նաև երբեմնի կայուն, հեղինակություն ու հարգանք ներշնչող երկիրը: Նիկոլ Փաշինյանը խուսափելով ուղիղ հնչող հարցերից՝ չունի հիմքեր և չի կարողանում որևէ երաշխիք ներկայացնել, որ ինքը կարող է երկիրը դուրս բերել անվերջանալի անկումների այս ընթացքից: Չունենալով երկիրը փրկելու հույս և հասկանալով, որ երկրի ու ժողովրդի առաջ այսչափ հանցագործություններ կատարած մեկը չի կարող չկանգնել անխուսափելի պատասխանատվության առջև՝ նրա և իր թիմի համար ինքնանպատակ իշխանությունը դարձել է ինքնապաշտպանության գրաի, որի գոյատևումն էլ կախված է հովանավորների և իր դավաճանական իշխանության երկարաձգման մեջ շահագրգիռ թշնամիների բարեհաճությունից: Այդ պատճառով էլ նա իր քաղաքական գործունեությունը պայմանավորում է թվարկված ուժերի կամակատարությամբ, իսկ թշնամիներ է համարում նրանց, որոնց համարում է վտանգ իր իշխանության համար, մասնավորապես՝ Հայաստանի ժողովրդին, արցախցիներին ու նաև ռուսներին: Այս իշխանությունը կարծում է, որ եթե ռուսներին մերժի և ջայլամի պես գլուխը մտցնի ավազի մեջ, Ռուսաստանը կանհետանա, այնինչ այս երկիրը եղել է, կա և, ուզենք, թե չուզենք, տեսանելի ապագայում մնալու է հիմնական դերակատար այս տարածաշրջանում և անկախ յուրաքանչյուրի նախասիրությունից՝ այս իրողության նկատմամբ քամահրանքը շատ ծանր կարող է նստել մեզ վրա: Կհաջողվի՞ Հայաստանը դուրս բերել ոտատակ ընկածների այս խաղաբեմից: Այլ ելք չկա, մնում է, որ հրաբխի պես պայթյունի պատրաստ ժողովուրդը կարողանա տեսնել և ընդունել պայքարը հաջողությամբ ավարտելու ունակ իր առաջնորդներին: Նիկոլ Փաշինյանի իշխանությունը թե՛ քաղաքականապես և թե՛ բարոյապես պարտության հոգեվարքի մեջ է, բայց այս վիճակը անվերջանալիորեն կարող է ձգվել, քանի դեռ հրապարակում չի հայտնվել այդ հոգեվարքին վերջ դնող ուժը: ■

Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգության և նրա ընտրած զարգացման ուղու երաշխավորն ու աջակիցն է

Արփի Աբրահամյան
Քաղաքագիտության և ազգային անվտանգության հարցերի մասնագետ

Ինչպես տեսանք, ՀՀ իշխանությունը սառնասրտորեն հրաժարվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (Արցախի Հանրապետության) ժողովրդի անվտանգության երաշխավորը լինելուց, Արցախի Հանրապետությունը, Արցախի մեր հայրենակիցները մնացին միայնակ, մարտնչեցին հանուն Արցախի պետականության, հանուն ինքնության:

Իրականացան Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի ձգտումները, տեղի ունեցան ազգային զտումների նոր դրսևորումներ, ֆիզիկական բնաջնջման եզրին կանգնած արցախցին հարկադրաբար լքեց հայրենի հողը:

Ոտնահարվել են ՀՀ Գերագույն խորհրդի 8 հուլիսի, 1992-ի Հ. Ն-0663-1 փաստաթղթում ներառված հետևյալ որոշումները.

«1. Հետևողականորեն սատար կանգնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա բնակչության իրավունքների պաշտպանությանը:

2. Հայաստանի Հանրապետության համար անընդունելի համարել միջազգային կամ ներպետական ցանկացած փաստաթուղթ, որտեղ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նշված կլինի Ադրբեջանի կազմում»[1]:

Արցախում տեղի ունեցած ոճրագործությունները, հայ ազգի բռնի, հարկադրված տեղահանումը որակվում է ցեղասպանություն, որին միջազգային հանրությունը չտվեց լիարժեք գնահատական:

Արցախի բռնազավթումը չկանգնեցրեց թշնամուն, շարունակվում է Ադրբեջանի կողմից հայկական հողերի զավթման հաղթարշավը, այն պայմանավորված է մի շարք արտաքին գործոններով: Կարևորենք, որ Ադրբեջանի առաջխաղացումը առաջին հերթին պայմանավորված է տարածաշրջանում Թուրքիայի ակտիվ քաղաքականությամբ:

Թուրքիան, որպես հավաքական Արևմուտքի մաս, վերջինիս հովանավորությամբ ստանձնել է հայ-ադրբեջանական հարաբերությունները կարգավորողի դերակատարությունը:

Թուրք-ադրբեջանական դաշինքը ոչ միայն չի հրաժարվում հայկական հողերի նվաճողական քաղաքականությունից, այլև իրականացնում է «Մեծ Թուրանի» ծրագիրը:

Ադրբեջանը, դիրքավորվելով արևմտյան հարթակներում, շարունակում է հայատյաց քաղաքականությունը, բացահայտ նկրտումները Հայաստանի տարածքների նկատմամբ, հստակ ծրագրված գործողություններով պահանջատեր է Հայաստանի հողերին մինչև Սյունիք և ավելին:

Այս ամենի ներքո ՀՀ իշխանությունը թուրք-ադրբեջանական դաշինքի հետ «խաղաղասիրական դարաշրջան» է կերտում, քողարկում ՀՀ պետական և ազգային անվտանգությանը սպառնացող մի շարք սպառնալիքները:

Հարց է ծագում՝ Թուրքիայի և Ադրբեջանի վարած քաղաքականությունը չի՞ հակասում ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին (ազգային շահեր), հնարավո՞ր է հայատյաց թուրքի հետ խաղաղության խաչմերուկ ստեղծել:

Հիշեցնենք, որ ՀՀ ռազմական դոկտրինում սահմանվում է՝ Հայաստանի Հանրապետությունը հավանական գործընկերներ է համարում ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքներին չհակասող քաղաքականություն իրականացնող բոլոր պետություններին ու անվտանգության կազմակերպություններին և պաշտպանական ռազմավարությունն իրականացնելիս հենվում է նրանց հետ ունեցած ընդհանրությունների վրա[2]:

Անդրադառնանք ՀՀ ռազմական դոկտրինում նշված արտաքին և ներքին սպառնալիքների որոշ դրույթներին, որոնք իրականացել և իրականանում են հայ ազգի և հայոց պետականության նկատմամբ.

- «Հայաստանի Հանրապետության բնակչության ֆիզիկական գոյության, պետության անկախության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխե-

լիության նկատմամբ այլ պետությունների ձեռնարկած ոտնձգությունները, միջամտությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերին, Հայաստանի Հանրապետության սահմանների մոտ զորքերի խմբավորումների ստեղծումը, տեղաբաշխումը, դրանց խոշորամասշտաբ կուտակումները և տեղաշարժը, այդ թվում՝ զորավարժությունների անվան տակ (օր.՝ Նախիջևանում թուրք-ադրբեջանական զորավարժություններ),

- Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված դաշինքների ստեղծումը, ամրապնդումն ու ընդլայնումը, մասնավորապես՝ Թուրքիայի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության ռազմավարական դաշինքը, վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետությունը շրջափակելու քայլերը, որոնք դիտարկվում են որպես ուժի կիրառում,
- Հայաստանի Հանրապետության տնտեսական-տրանսպորտային և հաղորդակցային մեկուսացումը կամ մեկուսացման փորձերը, սահմանակից պետություններով տարանցիկ ուղիների խափանումը,
- Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների նկատմամբ հայատյացություն և ազգատյացություն սերմանող քարոզչության իրականացումը, Հայաստանի Հանրապետության մասին ապատեղեկատվության տարածմամբ և այլ միջոցներով Հայաստանի Հանրապետության նկատմամբ տեղեկատվական պատերազմի վարումը, կրոնական և էթնիկական ծայրահեղականության հրահրումը,
- Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգը (ՀՀ Սահմանադրության, ՀՀ զինանշանի փոփոխման պահանջը թուրք-ադրբեջանական դաշինքի կողմից),
- Հայաստանի Հանրապետության և զինված ուժերի վարկաբեկմանն ուղղված գործողությունները կամ դրանց փորձը,
- սահմանամերձ շրջաններում ՀՀ քաղաքացիների արտագաղթը, դրանք խթանող գործողություններն ու գործոնները,
- Հայաստանի Հանրապետության տարածքում և սահմանամերձ շրջաններում արտակարգ իրավիճակների առաջացման սպառնալիքը կամ դրանց առաջացումը, ինչպես նաև պատերազմի հետևանքներից բնակչության պաշտպանության և տնտեսության կայունության ոչ լիարժեք ապահովումը,
- բարոյահոգեբանական և հայրենասիրական դաստիարակության, պետականության հանդեպ պատշաճ հարգանքի, առողջ ապրելակերպի, ընտանիքի ավանդական դերի և ազգային ինքնության աղավաղումը և այլն»[3]:

Մյուս կողմից՝ օտարածին հասարակական տարբեր կազմակերպությունների առկայությունը մեր երկրում, նրանց առաջխաղացումը, հովանավորչությունը նպաստեցին հայ հասարակության պառակտմանն ու անհամերաշխությանը:

Ցավալի է, որ հայ հասարակության զգալի հատվածը իրատեսորեն չի գնահատում ստեղծված իրավիճակը:

Կորցնելով Արցախի Հանրապետությունը՝ Հայաստանը միայնակ կանգնել է ներքին և արտաքին գոյաբանական պայքարի առջև:

Ազգային ի՞նչ երաշխիքներ ունենք՝ սպառնալիքներին դիմակայելու.

1. Ազգային ուժերի միաբանություն, համայն հայության համախմբում:
   ՀԱՅ ԱԶԳԸ պետք է միաբանվի ու պայքարի ինքնության պահպանման, տարածքային ամբողջականության վերականգման և հայոց պետականությունների վերականգման, հարատևության համար:
2. Ռազմական անվտանգության ապահովում, բանակ-բանակաշինություն:

Ռազմական անվտանգության ապահովման ազգային երաշխիքը մարտունակ, արդիական սպառազինությամբ զինված, մարտական ու բարոյահոգեբանական բարձր պատրաստվածությամբ, Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը պաշտպանելունակ, ռազմական անվտանգության սպառնալիքների կանխմանն ու չեզոքացմանը պատրաստ զինված ուժերն են[4]:

Համազգային նպատակներին հասնելու համար հայոց բանակին դեպի հաղթանակներ առաջնորդելու համար պետք է ունենալ այնպիսի իշխանություն, որը կառաջնորդվի ազգային գաղափարախոսությամբ, ազգային ծրագրով, կառաջնորդվի ազգային և պետական շահով, կառաջնորդի հայ ազգին, կպաշտպանի պետության կենսական նշանակություն ունեցող շահերը:

Միայն ազգային իշխանությամբ, ազգային գաղափարախոսությամբ հայոց բանակը և հայ ազգը կարող են հաղթել թշնամուն:

«Մենակ ենք և պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու և թե՛ երկրի ներսում կարգ հաստատելու»:

Արամ Մանուկյան

Հղումներ

1. ՀՀ ԳԽ որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստեղծված իրավիճակի մասին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=3278 /մուտք՝ 17.03.2024/.
2. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116 /մուտք՝ 17.03.2024/.
3. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116 / մուտք՝ 17.03.2024/.
4. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին, https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=41116 / մուտք՝ 17.03.2024/.

Խնդիրներով լեցուն ներկա ու անորոշ ապագա. արցախցիները բռնի տեղահանությունից հետո

Տաթևիկ Աղաջանյան
Լրագրող, Արցախ

2023 թ. սեպտեմբերի 19-ին, Արցախի Հանրապետության վրա Ադրբեջանի հարձակումից մի քանի օր անց սկսվել է արցախահայերի զանգվածային բռնի տեղահանությունն իրենց դարավոր բնօրրանից: Վեց օրվա ընթացքում 100 000-ից ավելի արցախցիներ, օրերով ճանապարհին հերթի մեջ սպասելով, հատել են Հակարիի կամուրջը: Բնաջնջման վտանգից փրկված արցախցիները կամրջի այս կողմում բախվել են սոցիալական, ֆինանսական, հոգեբանական ու այլ խնդիրներին: Դրանց մեջ առաջնահերթը կեցության ու առաջին անհրաժեշտության ապրանքների հարցն էր, քանի որ շատերն իրենց տները լքել էին հապճեպ՝ առանց գոնե փաստաթղթերը վերցնելու:

2023 թվականի հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունը որոշում էր ընդունել Արցախից բռնի տեղահանված անձանց ժամանակավոր պաշտպանության տակ վերցնելու մասին, ինչը հավասարազոր է փախստականի կարգավիճակին:

Նոր կարգավիճակի հետ կապված՝ արցախցիները պետք է հաշվառում անցնեն, որպեսզի կարողանան օգտվել նպաստներ ու թոշակներ ստանալու իրավունքից: ՀՀ կառավարության որոշմամբ՝ 2023 թ. դեկտեմբերի 1-ից արցախցիները կարող էին դիմել իրենց նպաստների ու թոշակների նշանակման համար: Այդ ժամանակից ի վեր արցախցիները օրերով ու ժամերով հերթ են կանգնում անձնագրային բաժանմունքների դիմաց՝ հաշվառում անցնելու, նոր անձնագիր ստանալու կամ այլ հարցերով:

Շատերը գիշերը ժամը 3:00-4:00-ից են հասնում անձնագրային բաժիններ, որպեսզի կարողանան այդ օրը սպասարկվող մի քանի տասնյակ անձանց շարք ընդգրկվել: Սկզբնական շրջանում մարդկանց թիվն անհամեմատ մեծ էր, ու հերթերն էլ՝ անկառավարելի: Դրանք հաջողվել է կարգավորել ստուգված մեթոդով, որը կիրառվել է շրջափակման օրերին կտրոնով հացի համար հերթ կանգնելու ընթացքում. տետրի մեջ գրում են իրենց անունը, հերթական համարը ու սպասում հերթին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացնում է, որ Արցախից բռնի տեղահանված անձանց կենսաթոշակներն ու նպաստները ՀՀ-ում նշանակվում և վճարվում են գործող օրենսդրությանը համապատասխան: Ըստ այդմ՝ տեղահանված անձանց համար կենսաթոշակի նշանակման պայմանները (այդ թվում՝ կենսաթոշակային տարիքը, աշխատանքային ստաժի չափը) նույնն են, ինչ ՀՀ քաղաքացիների համար: ՀՀ օրենսդրությամբ

սահմանված կարգով նշանակված և հաշվարկված կենսաթոշակի չափը կարող է տարբերվել Լեռնային Ղարաբաղում նշանակված և վճարված կենսաթոշակի չափից:

Մեկ այլ հարց է մշտական աշխատանք գտնելու խնդիրը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի բնակվարձերը և մյուս ծախսերը հոգալ:

Արցախցիների մի ստվար զանգված պետական համակարգում էր աշխատում: Հաշվի առնելով սեպտեմբերի 20-ից հետո Արցախի Հանրապետության շուրջ ստեղծված իրավիճակը՝ նախագահ Սամվել Շահրամանյանը ստորագրել էր հրամանագիր, համաձայն որի՝ 2023 թվականի հոկտեմբերի 1-ից պետական և համայնքային հիմնարկների, պետության և համայնքների կողմից հիմնադրված, ինչպես նաև նրանց մասնակցությամբ կազմակերպությունների, պետության և համայնքների կողմից ստեղծված հիմնադրամների աշխատողներն ազատվել են զբաղեցրած պաշտոններից՝ բացառությամբ Արցախի Հանրապետության նախագահի, նախագահի աշխատակազմի ղեկավարի, Անվտանգության խորհրդի քարտուղարի, Արցախի Հանրապետության պատգամավորների, հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, Արցախի Հանրապետության դատավորների, մարդու իրավունքների պաշտպանի,

կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, գլխավոր դատախազի, պետական նախարարի, նախարարների, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի ղեկավարի, կառավարության գործերի կառավարչության պետի, Արցախի Հանրապետության պետական կառավարման այլ մարմինների ղեկավարների, Արցախի Հանրապետության բնակարանային հարցերի կոմիտեի նախագահի, ՆԳՆ ոստիկանության պետի և արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի, Ստեփանակերտի քաղաքապետի, Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարների, համայնքների ղեկավարների, Արցախի Հանրապետության կողմից հիմնադրված ընկերությունների (բացառությամբ պետական ոչ առևտրային կազմակերպությունների) և հիմնադրամների ղեկավարների, որոնք շարունակում են պաշտոնավարել հասարակական հիմունքներով (առանց վարձատրության):

Արցախից բռնի տեղահանվածների համար կառավարությունը մի շարք աջակցության ծրագրեր է իրականացրել՝

- առաջնային սպառողական ծախսերի նպատակով՝ միանվագ 100 հազար դրամ աջակցության ծրագիր,
- կոմունալ ծախսերի և ժամանակավոր կացարանների վարձավճարների համար վեցամսյա 40+10 հազար դրամ աջակցության ծրագիր,
- սպառողական ծախսերի նպատակով՝ երկամսյա 50 հազար դրամ աջակցության ծրագիր,
- մասնագիտական ուսուցման, վճարովի պրակտիկայի և զբաղվածության ապահովման պետական աջակցության ծրագիր:

Սակայն այս ծրագրերը չէին կարող լիարժեք լուծել տուն-տեղ, ամեն ինչ կորցրած մարդկանց խնդիրները. հատկապես ծանր է բնակարանների հարցը, որոնց գները բռնի տեղահանության հենց առաջին օրերից կրկնապատկվել էին:

Փետրվարի 27-ին փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանը հայտնել է, որ ապրիլ ամսից 40+10 աջակցությունից կօգտվեն միայն անչափահաս երեխաները, իսկ կենսաթոշակառուները, հաշմանդամություն ունեցողները լրավճար կստանան 20.000 դրամի չափով: Նա նաև մանրամասներ է հայտնել ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար ՀՀ կառավարության կողմից մշակվող բնակարանային ապահովման աջակցության ծրագրի մասին: Ըստ այդմ՝ միջոցառումը նախատեսվում է իրականացնել փուլերով՝ յուրաքանչյուր չափահաս անձի համար նախատեսելով շուրջ 3 մլն դրամ: Անչափահասների մասով տրվող աջակցության չափը կլինի անվե-

ռադարձ, չափահասներինը՝ վերադարձելի, բայց ոչ աջակցության առաջին օրից սկսած: Կառուցվող կամ ձեռք բերվող տանը կամ բնակարանում 10 տարի ապրելու և ֆինանսական որոշակի պարտավորություններ կատարելու դեպքում այն կդառնա տվյալ ընտանիքի սեփականությունը:

Կառավարության հաշվարկներով՝ ծրագիրը թույլ կտա բոլորին բնակարանով ապահովել 5 տարվա ընթացքում: Խաչատրյանը նշել է, որ առաջնահերթությունը տալու են 3 և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքներին: Ծրագիրը մեծ դժգոհություն է առաջացրել արցախցիների շրջանում, քանի որ նրանք համոզված են, որ դրանով բնակարանային հարցը չի լուծվի, և շատերը կարտագաղթեն:

ՀՀ կառավարության կողմից մշակվող Արցախից բռնի տեղահանված հայրենակիցների աջակցության ծրագրերի կապակցությամբ հայտարարություն են տարածել ԱՀ Ազգային ժողովի բոլոր խմբակցությունները՝ նշելով, որ փոխվարչապետի միջոցով արցախյան հանրության համար ՀՀ կառավարության կողմից նախատեսվող ծրագրերը համարժեք չեն առկա իրավիճակին:

Արցախի խորհրդարանը նաև տեղեկացրել է, որ մինչ այժմ իրականացված որևէ ծրագիր չի քննարկվել Արցախի Հանրապետության ժողովրդի կողմից լեգիտիմ մանդատ ունեցող որևէ կառույցի, այդ թվում՝ ժողովրդի ուղղակի քվեով ընտրված Ազգային ժողովի հետ, իսկ զանազան միջոցներով իրենց կողմից ներկայացված առաջարկներն անտեսվել են:

«Հատկապես անընդունելի է Արցախից տեղահանված ժողովրդի համար բնակարաններ ձեռք բերելու կապակցությամբ դեռևս քննարկվող ծրագիրը, որը հարցի քաղաքական և սոցիալական համակողմանի քննարկման արդյունքում ակնհայտորեն չի բավարարելու բռնի տեղահանված մեր հայրենակիցների նվազագույն սպասելիքներն ու ակնկալիքները: Նման որոշումների կայացումը հանգեցնելու է մեր հայրենակիցների հիասթափությանն ու դժգոհությանը, որի արդյունքում կխթանվի արտագաղթը և բողոքների ալիքը, կխաթարվի մեզ համար օրախնդիր հավաքական վերադարձի ակնկալիքը»,- նշել են պատգամավորները՝ կոչ անելով զերծ մնալ չկշռադատված ոչ համարժեք քայլերից:

Կառավարության կողմից քննարկվող ծրագրից օգտվելու համար պարտադիր պայման կլինի ՀՀ քաղաքացիություն ունենալը: Բռնի տեղահանված արցախցիները չեն կարողանում ընդունել, որ պետք է ՀՀ քաղաքացիության իրենց անձնագրերը փոխարինեն նորերով: Մինչ այժմ ՀՀ քաղաքացիություն ընդունած արցախցիների թիվը չի անցնում 1000-ից: Մասնագետները նշում են, որ կառավարությունն իր որոշմամբ Արցախից բռնի տեղահանվածներին զրկել

է ՀՀ քաղաքացիությունից, և այժմ նրանք չգիտեն, թե մինչև հիմա ո՞ր երկրի քաղաքացին էին ու ո՞ր երկրի անձնագրի կրողը:

Բացի վերոնշյալից՝ հարցերի հարցը մնում է արցախցիների անորոշ ապագան ու Արցախի հարցի ներկա հանգրվանը: Պետական մակարդակով ամեն ինչ արվում է Արցախի հարցը «թաղելու», նույնիսկ անունը մոռացության տալու համար:

2024 թ. հունվարի 18-ին ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը հայտարարել է Արցախի հիմնական քաղաքական ուժերի հետ համագործակցությամբ Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և հիմնարար այլ իրավունքների պաշտպանության նպատակով հանձնախմբի ձևավորման մասին:

Նա համակարգելու է այդ աշխատանքները: Օսկանյանը նշել է, որ հանձնախմբի գլխավոր խնդիրը լինելու է միջազգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հավաքական հայրենադարձության և իր հայրենիքում ապահով, անվտանգ ու արժանապատիվ ապրելու իրավունքի պաշտպանությունը և հետապնդումը:

«Այսօր, առավել, քան երբևէ, պատեհ առիթը կա, որ հայկական կողմը Ադրբեջանի հարատև և անհավանական պահանջների դիմաց բանակցությունների սեղանին դնի միջազգային երաշխիքներով արցախահայության հավաքական հայրենադարձության հարցը:

Այս պահանջի միջազգային-իրավական բոլոր հիմքերը կան: Ավելին, երբ հայ ժողովրդի մի հատվածը տեղահանված է իր բնօրրանից, միայն այս խնդրի իրականացումը կնպաստի ժողովուրդների միջև իրական խաղաղության հաստատմանը»,- համոզմունք է հայտնել Օսկանյանը:

Արցախի Հանրապետության բնակչության նկատմամբ Ադրբեջանի վարած հանցավոր քաղաքականության իրավաքաղաքական գնահատականը

Արմեն Մարուքյան
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արցախի Հանրապետության բնակչության նկատմամբ Ադրբեջանի վարած հանցավոր քաղաքականությանը միջազգային իրավունքի տեսակետից գնահատական տալու առումով նախ հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան» և «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան բոլոր պետությունների, այդ թվում՝ Բաքվի հանցավոր ռեժիմի վրա մարդկանց ազատ տեղաշարժն ապահովելու և նրանց բռնի տեղահանումից պաշտպանելու պարտավորություններ են դնում:

«Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործի շրջանակներում ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը Հայաստանի հայցի հիման վրա անդրադարձել է Լաչինի միջանցքի շրջափակմանը: Թեև գործի քննությունը հիմնված էր ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի ենթադրյալ խախտման համար պետությունների պատասխանատվության վրա, այդուհանդերձ դատարանն անուղղակիորեն հաստատեց ցեղասպանության հանցագործության էական բաղադրատարրերը, որոնք ամրագրված են Ցեղասպանության մասին կոնվենցիայի II հոդվածի «գ» կետում: Դատարանի նախնական եզրակացություններում հստակ նշվել է, որ Լաչինի միջանցքի արգելափակումը Լեռնային Ղարաբաղում ապրող հայերի էթնիկ խմբի առողջության և կյանքի համար իրական և անմիջական սպառնալիք է ստեղծել[1]: Հարկ է նշել, որ դեռ Սրեբրենիցայի գործի վերլուծության մեջ Արդարադատության միջազգային դատարանը որոշել է, որ «սննդից, բժշկական օգնությունից, կացարանից կամ հագուստից զրկելը» Ցեղասպանության մասին կոնվենցիայի II հոդվածի «գ» կետի իմաստով ցեղասպանություն է[2]: ՄԱԿ-ի դատարանի այս երկու որոշումների համադրումից ակնհայտ է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շրջափակումը, ինչով խոչընդոտվեց սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների հասանելիությունը, համապատասխանում է Ցեղասպանության կոնվենցիայի II հոդվածի «գ» կետի բովանդակությանը, այն է՝ Արցախում բնակվող հայկական էթնիկ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը[3]:

2023 թ. հոկտեմբերի 30-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ցեղասպանության կանխարգելման հարցերով նախկին հատուկ խորհրդական Խուան Մենդեսի զեկույցում իրավական որակում տալով արցախահայերի հարկադիր տեղահանությանը՝ նշվում է, որ հեռանալու որոշումը պայմանավորված էր հարձակմամբ, ինչպես նաև սննդից և դեղորայքից ինը ամիս զրկված լինելու հանգամանքով, որ Ադրբեջանի պաշտոնական այս քաղաքականության և գործողությունների հետևանքով հայ բնակչությանը լուրջ հոգեկան վնաս էր պատճառվել, ինչը համապատասխանում է Ցեղասպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի «բ» կետի սահմանմանը՝ խմբի անդամներին լուրջ մարմնական կամ հոգեկան վնաս պատճառելը: Նոյեմբերի 17-ին Արդարադատության միջազգային դատարանը հաստատեց պրոֆեսոր Մենդեսի վերլուծությունը և արձանագրեց, որ Լեռնային Ղարաբաղում 2023 թ. սեպտեմբերի 19-ին Ադրբեջանի ռազմական գործողության մեկնարկից հետո ավելի քան 100.000 հայեր հարկադրված են եղել լքել իրենց բնակավայրը և հասնել Հայաստանի սահման»[4]:

Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ առանց միջազգային իրավունքով թույլատրված հիմքերի՝ բնակչության տեղահանումը կամ բռնի տեղափոխումը որակվում է որպես մարդկայնության դեմ հանցագործություն: ՄՔԴ-ը պարզաբանել է, որ

նախնական բնակության վայրից մարդկանց ուղղակի ֆիզիկապես տեղափոխելուց բացի՝ ուժի սպառնալիքի կիրառումը, ինչը կարող է արտահայտվել բռնության հնարավոր գործադրման կամ կալանավորման վախի տարածման, ինչպես նաև հոգեբանական ճնշումների այլ ձևերով, նույնպես բավարար է այդ գործողությունները մարդկության դեմ հանցագործություն որակվելու համար[5]:

Այսպիսով՝ միջազգային իրավունքի նորմերի տեսակետից բավարար հիմքեր կան պնդելու, որ 2022 թ. դեկտեմբերից Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի արգելափակումը և Արցախի դեմ 2023 թ. սեպտեմբերի 19-ին ձեռնարկված ռազմական հարձակումը Ցեղասպանության մասին կոնվենցիայի II հոդվածի «բ» և «գ» կետերի համաձայն՝ կարող են որակվել որպես ցեղասպանություն, իսկ դրանից հետո իրագործված էթնիկ զտման կամ բռնի տեղահանության գործողությունը համապատասխանում է Հռոմի ստատուտի 7-րդ հոդվածի «դ» կետի դրույթներին և որակվում է որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Ինչ վերաբերում է ցեղասպանության հանցագործության հանցակազմի սուբյեկտիվ կողմին՝ հանցավոր մտադրությանը, ապա այն ապացուցելի է Ադրբեջանի նախագահի կողմից հայերի դեմ ուղղված բազմաթիվ սպառնալից հայտարարություններով: 2021 թ. դեկտեմբերի 7-ին Արդարադատության միջազգային դատարանը Ադրբեջանին ներկայացվող ռասայական խտրականության մեղադրանքը ապացուցված համարեց՝ հիմք ընդունելով ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների, առաջին հերթին՝ նախագահի հայտարարությունները:

Հայկական մշակութային ժառանգության պղծումը և դրա նկատմամբ վանդալիզմի դեպքերը նույնպես որակվեցին որպես ազգային ատելության և ռասայական խտրականության դրսևորում: Դատարանը միաձայն որոշեց Ադրբեջանին պարտավորեցնել ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու հայերի նկատմամբ ռասայական ատելության և խտրականության հրահրումը և քարոզչությունը, այդ թվում՝ իր պաշտոնյաների և պետական կառույցների կողմից[6]:

Ռասայական խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն Ադրբեջանին վերաբերող իր զեկույցում նույնպես խոր մտահոգություն արտահայտեց այդ երկրում՝ համացանցում, սոցիալական ցանցերի միջոցով հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից հայերի նկատմամբ ռասայական ատելության տարածման, ինչպես նաև նման գործողությունների համար պատասխանատվության ենթարկելու դեպքերի վերաբերյալ տեղեկատվության իսպառ բացակայության կապակցությամբ[7]:

«Բոսնիան ընդդեմ Սերբիայի» գործով 2007 թ. որոշման մեջ Արդարադատության միջազգային դատարանը սահմանեց այն սկզբունքը, որ Ցեղասպանության մասին կոնվենցիայով այդ հանցագործությունը կանխելու պարտավորության կատարումն առաջանում է այն պահից, երբ պետությունը տեղեկանում է կամ պետք է, որ տեղեկացված լիներ, որ գոյություն ունի ցեղասպանության լուրջ վտանգ»[8]: Այսինքն՝ այն պահից, երբ պետությունը տիրապետում է այնպիսի տեղեկատվության, որ կան ցեղասպանության իրականացման ռիսկեր, նա պարտավոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ որևէ խմբի ներկայացուցիչների ֆիզիկական ոչնչացումը կանխելու կամ դադարեցնելու ուղղությամբ: 2023 թ. փետրվարի 22-ի որոշմամբ հենց ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանն էր փաստորեն Ադրբեջանին տեղեկացնում Լաչինի միջանցքի արգելափակման հետևանքով Արցախում ցեղասպանության վերահաս վտանգի մասին՝ պարտավորեցնելով ձեռնարկել բոլոր միջոցները՝ միջանցքի երկու ուղղություններով մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղափոխումն ապահովելու ուղղությամբ, ինչը վերահաստատվեց նաև նույն դատարանի 2023 թ. հուլիսի 6-ի որոշմամբ[9]:

ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի նիստը՝ «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» հարցով

2022 թ. դեկտեմբերի 21-ին կայացրած որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես Արբեջանին պարտավորեցնում էր իր իրավասության շրջանակներում ձեռնարկել բոլոր միջոցները՝ Հայաստանում բժշկական օգնության կարիք ունեցող ծանր հիվանդների, ինչպես նաև ճանապարհին առանց ապաստանի և ապրուստի միջոցների մնացածների Լաչինի միջանցքով անվտանգ անցումը ապահովելու ուղղությամբ:

Միջազգային դատական ատյանների նախազգուշացումներից հետո էլ Ադրբեջանի նախագահը գիտակցաբար շարունակում էր արգելափակված պահել Լաչինի միջանցքը՝ Արցախում խորացնելով հումանիտար աղետը և ցեղասպանության վտանգները: Արդարացումներն առ այն, որ դա կատարվել է բնական պաշարների մաքսանենգությունը կամ Արցախ զենքի և ականների փոխադրումը կանխելու նպատակով որևէ կերպ չեն կարող արդարացնել հումանիտար աղետի ստեղծման միջոցով ցեղասպանության իրագործումը Արցախում: Ավելին՝ ապրիլի 23-ին Ադրբեջանը Հակարիի կամրջի վրա անցակետ տեղադրեց՝ վերահաստա-

Լաչին միջանցքում Արցախի շրջափակումը

տելով միջազգային այդ ծանր հանցագործության մեջ իր պատասխանատվությունը: Ցինիզմի և միջազգային արդարադատության նկատմամբ ծաղրի դրսևորում պետք է համարել Ադրբեջանի նախագահի այն հայտարարությունը, թե Հակարիի կամրջի անցակետն իբր տեղադրվել է ի կատարումն ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշման:

Միջազգային դատական ատյանների որոշումները բացահայտ արհամարելու պայմաններում ծագում է Արցախի բնակչության նկատմամբ շարունակական հանցագործությունների համար Ադրբեջանի ղեկավարությանը և առաջին հերթին նախագահին միջազգային իրավական պատասխանատվության կանչելու հնարավորությունների հարցը:

Ինչպես հայտնի է, 2023 թ. նոյեմբերի 1-ին Հայաստանն իր վավերագիրը պաշտոնապես ի պահ հանձնեց ՄՔԴ-ին: Հռոմի ստատուտը Հայաստանի համար ուժի մեջ է մտնում 2024 թ. փետրվարի 1-ից, սակայն Հայաստանն իր դիմումում դատարանին խնդրել է, որ վերջինիս իրավասությունը հետադարձ ուժով սկսի գործել 2021 թ. մայիսի 10-ից՝ նպատակ ունենալով Ադրբեջանի ղեկավարությանը պատասխանատվության կանչել 2021 թ. մայիսին և 2022 թ. սեպտեմբերին Հայաստանի ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված ռազմական հարձակումների համար:

Քանի որ Ադրբեջանը Հռոմի ստատուտի մասնակից պետություն չէ և չի ճանաչում իր տարածքում դատարանի իրավազորությունը, ապա տեսականորեն ՄՔԴ-ի՝ միջազգային քրեական դատարանի կողմից Ադրբեջանի բարձրաստիճան ղեկավարությանը պատասխանատվության կանչելու երկու տարբերակ կարելի է մատնանշել:

Առաջին տարբերակը Հռոմի ստատուտի 13-րդ հոդվածի «բ» կետի հիմքով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի (այսուհետ՝ ԱԽ) որոշմամբ 2022 թ. դեկտեմբերից հետո Լաչինի միջանցքում և Լեռնային Ղարաբաղում տիրող իրավիճակի քննությունը ՄՔԴ-ին փոխանցելն է: ՄՔԴ-ը նախկինում նման նախադեպեր ունեցել է: 2005 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի 1395 բանաձևով Դարֆուրում տիրող իրավիճակի քննությունը փոխանցվեց ՄՔԴ-ին և հինգ տարի անց Սուդանի նախագահ Օմար ալ-Բաշիրին ցեղասպանություն իրագործելու մեղադրանք առաջադրվեց: 2011 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ը Լիբիայում տիրող իրավիճակը փոխանցեց ՄՔԴ-ին և Լիբիայի նախագահ Մուամար Քադաֆիին ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների մեղադրանքով ձերբակալության օրդեր տրվեց:

Այս տարբերակը, սակայն, քիչ հավանական ենք համարում՝ հետևյալ հանգամանքներից ելնելով: Արդարադատության միջազգային դատարանը կոնվենցիայի մասնակից պետություններին պարտավորեցրել է չսպասել մինչև ցեղասպանությունը իրականացվի, այլ անմիջապես կանխել կամ գոնե փորձել կանխել այդ հանցագործությունը նախքան դրա կատարումը[10]: 2023 թ. ընթացքում ԱՄՆ պետքարտուղար Բլինկենը և Ֆրանսիայի նախագահ Մակրոնը Ադրբեջանի նախագահից մի քանի անգամ պահանջել են դադարեցնել Արցախի շրջափակումը՝ հիշեցնելով Լաչինի միջանցքը բացելու Արդարադատության միջազգային դատարանի որոշումը կատարելու պարտավորության մասին, սակայն ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ էլ Ֆրանսիան Ադրբեջանին չեն զգուշացրել ցեղասպանության վտանգի և վերջինիս համար դրա հնարավոր ծանր հետևանքների մասին: Ճապոնիայից բացի՝ ՄԱԿ-ի ԱԽ-ի մյուս 14 անդամ պետությունները Ցեղասպանության մասին կոնվենցիայի մասնակիցներ են և այդ հանցագործությունը կանխարգելելու պարտավորություն են ստանձնել, սակայն նրանցից և ոչ մեկը որևէ քայլ չձեռնարկեց Արցախի հայերի դեմ ցեղասպանության վտանգը կանխելու ուղղությամբ[11]: Թեև բազմաթիվ մասնագիտացված միջազգային կառույցներ ու հեղինակավոր փորձագետներ Արցախում տեսնում էին ցեղասպանության մոտալուտ վտանգը և զգուշացնում էին դրա մասին, 2023 թ. օգոստոսի 16-ին ՄԱԿ-ի ԱԽ-ի նիստում քննարկումներն առանց որևէ վճռական որոշման ավարտվեցին, մինչդեռ ԱԽ-ն առնվազն պետք է Ադրբեջանին պարտավորեցներ՝ կատարելու Արդարադատության միջազգային դատարանի ժամանակավոր միջոցների մասին որոշումը: ԱԽ նիստի ընթացքում գոնե Հայաստանը պետք է փորձեր առաջարկել, որ ԱԽ-ը Լաչինի միջանցքի արգելափակման և Արցախում ստեղծված հումանիտար աղետի իրավիճակի հարցը փոխանցեր ՄՔԴ-ին, ինչը, սակայն, նույնպես չարվեց: Ինչպես նկատելի է, համաշխարհային քաղաքականության ազդեցիկ ուժային կենտրոնների, հատկապես ԱԽ մշտական անդամ պետությունների միջև եղած շահերի հակասություններն ու մրցակցությունը գրեթե անհնարին են դարձնում այդ տարբերակի հավանականությունը:

Երկրորդ տարբերակը ՄՔԴ-ի Բանգլադեշում/Մյանմարում (նախկին Բիրմա) իրավիճակի քննության գործով դատարանի նախադեպի հիման վրա Ադրբեջանի նախագահին Արցախի բնակչության նկատմամբ

Ընթանում է դատարանի նիստը

ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություն իրականացնելու մեղադրանքով պատասխանատվության կանչելու հնարավորությունն է: ՄՔԴ-ը Բանգլադեշի/Մյանմարի գործով հաստատել է իր իրավասությունը շարունակական բնույթի հանցագործությունների նկատմամբ, որոնք սկսվել էին ՄՔԴ անդամ չհանդիսացող Մյանմարի տարածքում և շարունակվել էին ՄՔԴ-ի մասնակից Բանգլադեշի տարածքում: 2017 թ. ավելի քան 1 միլիոն ռոհինջա հետապնդումների, անմարդկային գործողությունների հետևանքով Մյանմարի Ռաքիայն նահանգից բռնի տեղահանվեց դատարանի անդամ-պետություն հանդիսացող Բանգլադեշի տարածք[12]: Այս նախադեպն ուղղակիորեն համապատասխանում է Արցախում տիրող իրավիճակին, քանի որ Ադրբեջանի կողմից շրջափակման և 2023 թ. սեպտեմբերի 19-ի ռազմական ագրեսիայի հետևանքով Արցախի Հանրապետության օկուպացված տարածքից ավելի քան 100.000 արցախահայեր Լաչինի միջանցքով հարկադրված տեղահանվեցին Հայաստանի Հանրապետության տարածք, ինչը նշանակում է, որ Ադրբեջանի կողմից իրականացված հանցագործությունների շարունակությունը և դրանց հետևանքները տեղափոխվել են նաև ՄՔԴ անդամ ՀՀ տարածք[13]: Տվյալ պարագայում Հայաստանը միանգամայն կարող է դիմել ՄՔԴ՝ Բանգլադեշի/Մյանմարի գործի նախադեպի հիման վրա Արցախի բնակչության նկատմամբ ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություն իրականացնելու մեղադրանքով Ադրբեջանի նախագահի դեմ վարույթ նախաձեռնելու դիմումով, ինչի դեպքում տուժողներն իրավունք կունենան տեղեկատվություն տրամադրելու ՄՔԴ դատախազությանը:

Նման դատական գործի նախաձեռնումն, անշուշտ, պետք է ապահովագրված լինի Ադրբեջանի դեմ դրան նախորդող և դրան զուգահեռ ընթացող քաղաքական և քարոզչական-տեղեկատվական գործընթացով, ինչը կարող է նպաստել ՄՔԴ-ում վարույթի օբյեկտիվ ընթացքին և համապատասխան որոշման կայացմանը: Իհարկե, ՄՔԴ որոշումները կյանքի կոչելու ոչ այդքան հաջող պրակտիկան որոշակի կասկածների տեղիք է տալիս, սակայն այս գործընթացի հաջողությունը զգալիորեն կզսպի հետագայում Ադրբեջանի և նրա թիկունքում գործող Թուրքիայի ագրեսիվ կեցվածքը և միջազգային իրավական հիմքեր կնախապատրաստի Արցախի ու արցախահայերի իրավունքների հետագա պաշտպանության համար: ■

Հղումներ

1 Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) (Order on Provisional Measures), February 22, 2023, paras 62, 67:

2 Ocampo L. M., Expert Opinion. Genocide against Armenians in 2023, New York, August 7, 2023, https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/:

3 Տե՛ս Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (adopted December 9, 1948), 78 UNTS 277 (Genocide Convention) art II(c):

4 Ocampo L. M., Expert Opinion. Genocide against Armenians in 2023, New York, August 7, 2023, https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/:

5 International Criminal Court (ICC), Elements of Crimes, Footnote 12, 2013, The Hague, https://www.icc-cpi.int/sites/default/files/Publications/Elements-of-Crimes.pdf.

6 Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) (Order on Provisional Measures) [2021] ICJ Rep 361, para 91:

7 UN Committee on the Elimination of Racial Discrimination, 'Concluding observations on the combined tenth to twelfth periodic reports of Azerbaijan' (September 22, 2022) UN Doc. CERD/C/AZE/CO/10-12, para. 4(c):

8 Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro) (Merits) [2007] ICJ Rep 43 Bosnian Genocide Judgment (n 46), para 431:

9 Application of the International Convention on the Elimination of All Forms of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) (Order on Request for Modification of Provisional Measures) July 6, 2023, para 30:

10 Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro), Judgment, I.C.J. Reports 2007:

11 Ocampo L. M., Expert Opinion. Genocide against Armenians in 2023, New York, August 7, 2023, https://luismorenoocampo.com/lmo_en/report-armenia/.

12 Situation in the People's Republic of Bangladesh/Republic of the Union of Myanmar, ICC-01/19, https://www.icc-cpi.int/bangladesh-myanmar.

13 Ocampo L. M., Current genocides and the consistent international practice to deny them. Summary of the case of Nagorno-Karabakh, REPORT-USP-Innovation-on-Global-Order.-Nagorno-Karabakh-case%20(1).pdf:

Կեղծ մզկիթների երկիրը կամ հայկական մշակութային հետքերը վերացնելու թուրքական մեթոդները

Մելինե Անումյան
Թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

Ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում գտնվող հայկական ճարտարապետական ժառանգության կարգավիճակը և վերջինիս նկատմամբ Թուրքիա պետության պարտավորություններն ամրագրված են Լոզանի պայմանագրով: Մասնավորապես հիշյալ պայմանագրի 42-րդ հոդվածի համաձայն՝ «Թուրքիայի կառավարությունը պարտավորվում է ամեն ձևով պահպանել փոքրամասնությունների եկեղեցիները, սինագոգները, գերեզմանները և մյուս կրոնական հաստատությունները»[1]:

Չնայած միջազգային պայմանագրով հաստատված այս և այլ պարտավորություններին՝ հանրապետական Թուրքիայի ամբողջ պատմության ընթացքում արձանագրվել է հայկական և Թուրքիայում փոքրամասնություն համարվող այլ ազգերի մշակութային հուշարձանների հետևողական վերացում, որը կատարվել է և՛ առերևույթ ոչ դիտումնավոր՝ որպես բնության արհավիրքների հետևանք, և՛ որպես բացահայտ ոչնչացման քաղաքականություն:

Թեև ՄԱԿ-ի կողմից 1948 թ. ընդունված «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի վերջնական տարբերակում չէր ներառվել մշակութային ցեղասպանության մասին դրույթը, սակայն հայտնի է, որ այդ դրույթը ևս մշակվել և նախնական տեքստով ներկայացվել էր Ռաֆայել Լեմկինի կողմից: Դրա համաձայն՝ «պատմական ու կրոնական հուշարձանների սիստեմատիկ ոչնչացումը կամ դրանց օգտագործումն այլ նպատակով»[2] պետք է համարել մշակութային ցեղասպանություն:

Թուրքիայի Հանրապետության ամբողջ պատմության ընթացքում այս հարցում պետական մակարդակով իրականացված քաղաքականության հետևանքով ներկայում ականատես ենք խիստ անմխիթար պատկերի, ըստ որի՝ ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում և նախկինում հայաբնակ եղած այլ շրջաններում հայկական հուշարձանները կա՛մ գրեթե լիովին անհետացել եմ, կա՛մ գտնվում են ծայրահեղ վատթար վիճակում:

Այսպես՝ եթե 20-րդ դարի սկզբներին Կ.Պոլսո հայոց պատրիարքարանի իրավասության տակ էին գտնվում մոտ 2000 հայկական եկեղեցիներ, ապա ներկայում նրանց թիվը 40-ից էլ ցածր է. այսօր Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի ենթակայության ներքո են մնացել ընդամենը 38 հայկական եկեղեցիներ, որոնցից 33-ը գտնվում է Ստամբուլում, 2-ը՝ Դիարբեքիրում, 1-ը՝ Կեսարիայում, 1-ը՝ Վաքֆլը գյուղում, 1-ն էլ՝ Իսքենդերունում (պատմ. Ալեքսանդրետում)[3]: Ինչ վերաբերում է ամբողջ Արևմտյան Հայաստանի տարածքում և ներկայիս Թուրքիայի Հանրապետության սահմաններում նախկինում գտնված հայկական բազմաթիվ դպրոցներին, ապա դրանց թիվն այսօր սահմանափակվում է միայն Ստամբուլում գործող 16 հայկական վարժարաններով:

Թուրքիա պետությունը հայկական մշակութային հետքերի ոչնչացումն իրականացնում է հետևյալ մեթոդներով.

1. Ուղղակի ոչնչացում

Այս մեթոդը կիրառվում է ճարտարապետական կամ պատմական հուշարձանների բացահայտ վերացմամբ: Վերջին տարիներին դրա ամենավառ օրինակը կարելի է համարել 2013 թ. Մուշի Քալե թաղամասում սկսված հայկական պատմական տները քանդելու գործընթացը: Թուրքիայի կառավարության բնակելի շենքերի հարցերով զբաղվող վարչությունը ավերեց մոտ 500 նման տուն՝ այդ թաղամասում նոր բնակելի շենքեր կառուցելու պատճառաբանությամբ[4]: Նմանատիպ գործընթաց կատարվեց և շարունակում է կատարվել նաև Դիարբեքիրում և այլ հայկական պատմական շրջաններում: Թուրքիան նաև արհեստական ջրամբարներ է կառուցում պատմական հուշարձաններ ընդգրկող վայրերում, և նման դեպքերում դրանք ինքնաբերաբար ջրի տակն են անցնում:

Մշո Սուլթան Սուրբ Կարապետը՝ նախկինում և այժմ

2. Հուշարձանների բարձիթողի վիճակ

Հայկական ճարտարապետական կոթողները բարձիթողի վիճակում թողնելով կամ այնտեղ անօրինական կերպով մարդկանց բնակեցնելով՝ թուրքական պետությունը միտումնավոր վարում է դրանք վերջնականապես ոչնչացնելու քաղաքականություն: Շատ դեպքերում պատմական հուշարձանները ենթարկվում են բնության արհավիրքներին կամ գանձ որոնողների անօրեն գործողություններին և տարեցտարի կորցնում ոչ միայն իրենց նախկին տեսքը, այլև վերջնականապես անհետանում: Նման օրինակ է դարձյալ Մուշում գտնվող Սուրբ Կարապետ վանական համալիրը, որից այսօր գրեթե ոչինչ չի մնացել:

3. Պատմական հուշարձանի կարգավիճակի փոփոխություն

Թուրքիայի իշխանությունները երբեմն իրենց հովանու տակ են վերցնում որևէ պատմական հուշարձան կամ որոշում վերականգնել այն: Սակայն իրական նպատակը ոչ թե պատմական ժառանգության պահպանումն է լինում, այլ պատմական հիշողության աղավաղումը, քանի որ նման դեպքերում, օրինակ, հայկական եկեղեցին վերածվում է մշակութային կենտրոնի, գրադարանի կամ այլ մշակութային օբյեկտի՝ տարիների ընթացքում կորցնելով իր առաջնային գործառույթը: Վերջին տարիներին թուրքական մամուլը լիուլի է նման պատմություններով, սակայն ամենավառ օրինակը Աղթամար կղզու Սուրբ Խաչ հայկական եկեղեցին է, որտեղ թեև թուրքերը «մեծահոգաբար» թույլ են տվել տարեկան ընդամենը մեկ անգամ պատարագ մատուցել, սակայն այն գործում է թանգարանի կարգավիճակում:

4. Հուշարձանների պատմական հիշողության աղավաղում

Թուրքիայի իշխանությունները հայկական հետքերը վերացնելու ընթացքում կիրառում են նաև մեկ այլ մեթոդ: Խոսքը պատմական հուշարձանների հիշողության աղավաղման մասին է: Այդ քաղաքականության համաձայն՝ նրանք փորձում են հայկական եկեղեցու կամ մեկ այլ հուշարձանի մոտակայքում կեղծ օրակարգով միջոցառումներ կազմակերպել: Նման վառ օրինակ է 2024 թ. սկզբներին գրանցված մի դեպք, երբ Թուրքիայի կենտրոնական իշխանության հրահանգով մի շինծու կազմակերպություն՝ Վանի ինչ-որ ցեղի միություն, դիմել էր Վանի նահանգապետարան՝ պահանջելով հուշարձան կանգնեցնել 1915 թ. իբրև թե «հայերի կողմից կատարված կոտտանքների և բռնաբարությունների փոխարեն՝ մահը նախընտրած թուրք կանանց և երեխաների պատվին»: 2024 թ. հունվարին նրանք մի շարք միջոցառումներ են կազմակերպել, այսպես կոչված, «Վանում 1915 թ. հայերի կոտորածի ժամանակ սպանվածների և բռնաբարության սպառնալիքի տակ գտնվող կանանց հիշատակին, որոնք իբրև թե նախընտրել են իրենց ջուրը նետել Աղթամար կղզու մոտակայքում, որպեսզի փրկեն իրենց պատիվը»[5]: Բնականաբար պատահականություն չէ, որ ընտրվել էր հենց Վանի Աղթամար կղզին, որտեղ գտնվում է Սուրբ Խաչ հայկական եկեղեցին, որը թեև գործում է թանգարանի կարգավիճակի ներքո, այնուամենայնիվ համայն հայության ուխտավայրերից մեկն է ներկայում...

Նման կեղծ օրակարգերով և պատմական փաստերի խեղաթյուրմամբ թուրքական իշխանությունները փորձում են կեղտաբիծ թողնել հայկական հուշարձանի, տվյալ դեպքում՝ Սուրբ Խաչ եկեղեցու վրա: Այդ-

Հիշողություն ոչնչացվող պատմական Մուշից

պիսի միջոցառումները հենց հայկական եկեղեցու շրջակայքում կազմակերպելով՝ թուրքական իշխանությունները նաև ձգտում են վախ սերմանել համայն հայության և, հատկապես, արևմտահայության շրջանում՝ այդպիսով սահմանափակելով նրանց այցը հայկական եկեղեցի:

5. Քրիստոնեական հուշարձանների իսլամացում

Ինչպես հայտնի է, դեռևս օսմանյան ժամանակաշրջանից թուրքերը յուրաքանչյուր շրջան գրավելուց անմիջապես հետո ձգտել են իսլամացնել ոչ միայն տեղի բնակչությանը, այլև քրիստոնեական հուշարձանները: Դրա ամենավառ և հանրահայտ օրինակը Կոստանդնուպոլսի Սուրբ Սոֆիա տաճարն էր: Հիշեցնենք, որ 1453 թ. Ստամբուլի գրավումից արդեն մի քանի օր անց Այա Սոֆիան վերածվել էր մզկիթի:

Ուշագրավ է, որ ներկայում Թուրքիայում կան 60-ից ավել մզկիթի վերածված եկեղեցիներ: Դրանցից միայն 26-ը գտնվում է Ստամբուլում[6]: Հիշեցնենք, որ, օրինակ, Սուրբ Սոֆիան և դարձյալ Ստամբուլում գտնվող Խորայի Սուրբ Փրկիչ եկեղեցին կամ Քարիյե տաճարն Աթաթյուրքի կողմից սկսված աշխարհիկացման գործընթացի շրջանակներում վերածվել էին թանգարանի, սակայն Թուրքիան իսլամացման տանող Էրդողանի կառավարությունը 2020 թ. որոշում կայացրեց այդ երկու քրիստոնյա տաճարները վերստին մզկիթի վերածելու մասին: Իսկ իրականում ի՞նչ էր նշանակում Այա Սոֆիայի նշանակության տաճարն իսլամացնելու իրողությունը 15-րդ դարաշրջանի համար: Դա նույնն էր, եթե ներկայում, ասենք, «Իսլամական պետությունը», Աստված մի արասցե, գրավի և մզկիթի վերածի Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարը: Նման նշանակության ճարտարապետական գոհարները քրիստոնեական տաճարից մզկիթի վերածած օսմանյան և թուրքական իշխանությունների քաղաքականության առանցքում տվյալ շրջանը լիովին և անվերադարձ յուրացնելն ու վերջնականապես իսլամացնելը և թուրքացնելն է: Հայկական պատմական հուշարձաններից մզկիթի վերածված հայ եկեղեցու ամենավառ օրինակը Կարսի Սուրբ Առաքելոց եկեղեցին է:

6. Հայկական հուշարձաններին թուրքական-իսլամական անցյալ վերագրելու փորձեր

Թուրքական պետությունը մամուլի և քարոզչության այլ միջոցների օգնությամբ շարունակաբար ձգտում է թուրքական-իսլամական անցյալ վերագրել հայկական հուշարձաններին: Դրա ամենավառ օրինակը Անիի ավերակներն են: Այսպես, օրինակ, թուրքական զանգվածային լրատվամիջոցները Անի միջնադարյան հայկական քաղաքի մասին հրապարակումներ տարածելիս գրեթե առանց բացառության այն ներկայացնում են որպես զանազան քաղաքակրթությունների օրրան՝ լռության մատնելով Անիի զուտ հայկական բնույթը: Այսինքն՝ թուրքական պարբերականները Անիին անդրադառնալիս տարբեր քաղաքակրթությունների անվանումներ են տալիս, այդ թվում նաև՝ «սելջուկյան»: Երբեմն, իհարկե, կեսբերան նշում են, որ այն Բագրատունյաց արքայատոհմին էլ է պատկանել, սակայն գրեթե երբեք չեն գրում «հայ», «հայոց», «հայկական» բառերը: Եվ թեմային անտեղյակ ընթերցողների մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե Անին հիմնվել է ոչ թե հայ Բագրատունյաց արքայատոհմի, այլ մեկ այլ թագավորության կողմից, և որ այն ուրիշ իշխանությունների հետ մի կարճ ժամանակ գտնվել է նաև Բագրատունիների տիրապետության տակ: Իսկ թե որ Բագրատունիների մասին է խոսքը՝ «հայ», թե «վրաց», թուրքական մամուլն, իհարկե, լռում է: Թուրքական պետության հսկողությամբ թուրքական զանգվածային լրատվամիջոցներն այդպիսով վարում են Անիի հայկական անցյալը լիովին մոռացության մատնելու գործընթաց:

Նույն նպատակով թուրքական իշխանությունները քրիստոնյա, մասնավորապես՝ հայկական եկեղեցիները գիշերային լուսավորությամբ հագեցնելիս ձգտում են ընդգծել, օրինակ, իրենց կողմից արհեստականորեն պարտադրված թուրքական դրոշը, սակայն ոչ երբեք խաչը կամ քրիստոնեական այլ ատրիբուտ: Այսպես՝ 2023 թ. տարեվերջին թուրքական մամուլում հրապարակումներ եղան այն մասին, թե Աղթամար կղզին արհեստական լուսավորությամբ է ապահովվել: Թուրքական լրատվամիջոցներում տարածված նկարներից նկատելի է, որ արհեստական լուսավորության միջոցով վառ կերպով լուսավորվել է Թուրքիայի դրոշը, իսկ եկեղեցու գմբեթի խաչը մնացել է մթության մեջ[7]:

7. Հուշարձանների հայկական անվանումների աղավաղում և թուրքացում

Ինչպես հայտնի է, Թուրքիան պետական մակարդակով շարունակում է վարել նաև ոչ թուրքական բնակավայրերի և հուշարձանների անվանումները փոխելու, թուրքացնելու քաղաքականություն: Դրա



Հայ ուխտավորները Ախթամարի Սուրբ Խաչ եկեղեցու բակում (20-րդ դարի սկիզբ)



Մզկիթի վերածված Կարսի Առաքելոց եկեղեցին

ամենավառ օրինակներից են Անիի ավերակները և հայկական Աղթամար կղզին, որի վրա է գտնվում Սուրբ Խաչ եկեղեցին: Ինչպես հայտնի է, Աղթամարը թուրքական բոլոր լրատվամիջոցներում և պետականորեն կոչվում է Akdamar (թուրքերեն՝ «սպիտակ երակ»), իսկ Անին՝ Ani (թուրքերեն՝ հուշ, հիշողություն): Թեև պոլսահայ մամուլը և Թուրքիայի հայ հասարակությունը բազմիցս ուղղել են թուրք լրագրողներին և հիշեցրել այդ հուշարձանների իսկական անվանումները, սակայն թուրքական մամուլը, իշխանությունների հրահանգմամբ, շարունակում է համառորեն կիրառել այդ արհեստական անունները:

Ամփոփում

Այսպիսով՝ թեև Թուրքիան վերջին տասնամյակներին փորձում է առերևույթ հայերի և այլ փոքրամասնությունների մշակութային ժառանգությունը պահպանելու միտում ցուցադրել, սակայն իրական նպատակը նման հուշարձանների կարգավիճակի փոփոխությունն է նրանց իրական գործառույթներն աղավաղելու միջոցով, ինչպես նաև զուտ ֆինանսական շահը, այն եկամուտը, որ բերում են զբոսաշրջիկներն այդ հուշարձաններն այցելելիս:

Կարելի է արձանագրել, որ եթե Հայոց ցեղասպանության գլխավոր դերակատարները առաջնորդվում էին «Չկան հայեր, չկա Հայկական հարց» տրամաբանությամբ, ապա Թուրքիայի ներկայիս իշխանություններն էլ համառորեն ընթանում են «Չկան հայկական հետքեր, չի եղել հայկական անցյալ» նպատակի ուղղությամբ: Եվ եթե հայկական մշակութային ժառանգությունը պահպանելու համար արտաքին ճնշումներ չգործադրվեն, ապա, ցավոք, կանխատեսելի ապագայում Թուրքիայում գրեթե լիովին վերացած կլինեն հայկականության բոլոր հետքերը...

Դիտում

1. Լոզանի պայմանագրի ամբողջական տեքստը տես https://www.ismetinonu.org.tr/lozan-baris-antlasmasi-tam-metni/ (վերջին դիտում՝ 29.01.2024):
2. Անուշ Հովհաննիսյան, Հայերի ուսեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում եւ քեմալական Թուրքիայում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016, էջ 69:
3. Այդ մասին ավելի մանրամասն տես Օհաննես Քըլըչդաղի հեղինակությամբ և «Հրանտ Դինք» հիմնադրամի պատվերով պատրաստված «Նեղ շապիկ. Թուրքիայում հայկական հաստատությունների խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկներ» վերնագրով զեկույցը՝ https://hrantdink.org/images/bolis/TEKHS_Rapor.pdf?fbclid=IwAR0qQUJ_KYt9osXSplJrYCcfX3Z9s3YRIYVFj7YGjDm11u11H_JSSaXWh8g (վերջին դիտում՝ 29.01.2024):
4. https://www.agos.com.tr/tr/yazi/5207/musta-ermeni-evlerinin-yerine-toki-konutlari-yapiliyor (վերջին դիտում՝ 09.03.2024) :
5. https://www.yenicaggazetesi.com.tr/ermeni-mezaliminden-kacanlar-icin-iffet-aniti-talebi-755930h.htm (վերջին դիտում՝ 09.03.2024):
6. https://www.aydinlik.com.tr/haber/turkiyede-camiye-cevrilen-kiliseler-451197 (վերջին դիտում՝ 09.03.2024):
7. https://www.dha.com.tr/gundem/akdamar-adasi-isiklandirildi-2365407 (վերջին դիտում՝ 09.03.2024):

Ի՞նչ է ամբոխը, ինչո՞ւ է նա տենդորեն նոր առաջնորդ փնտրում

Մանվել Մկրտչյան
Հրապարակախոս

Վստահ եմ, որ այս բառերը լսողներից յուրաքանչյուրն անմիջապես մտաբերեց մեր օրերում հնչող, այսպես ասած, «ամենաօրակարգային» խոսքերը՝ «Լավ, բա ո՞վ գա սրանց փոխարեն…»: Եթե, օրինակ, կոնկրետ անուն տաս, տվյալ «գիտունիկը» առաջ կմղի իր քաղաքագիտական, դիվանագիտական և «ազգագիտական» ողջ «հանճարեղ զինանոցը» և տարբեր բնութագրումներ տալով՝ գետնին կփռի առաջարկված մարդու կերպարը: Սա ի՞նչ է նշանակում, սա պատահակա՞ն բան է, թե՞ դիտավորություն: Այս վարքագիծը հասկանալու համար նախ՝ պետք է լավ պատկերացնել, թե ի՞նչ ասել է «ամբոխ», ինչպե՞ս է կազմավորվում ամբոխը, ինչպիսի՞ վարք է դրսևորում մարդը ամբոխի մեջ և վերջապես ինչերի՞ է այն ընդունակ: Սա շատ հիմնարար հարց է, և դրա որոշակիացումը մի շարք երևույթների և հանգամանքների վրա լույս կսփռի: Եվ այսպես, երբ ասում ենք «հասարակություն» և փորձում ենք այն պատկերացնել, ակամայից դեմ ենք առնում մի մեծ աբստրակտ պատկերի, քանի որ միայն հասարակության սոցիալ-քաղաքական շերտերի, նրանց պատկերացումների և վարքագծի միաժամանակյա առկայությունը արդեն նշանակում է, որ այդպես էլ կարող են չգտնվել հստակ բնութագրիչներ: Ամբոխի պարագայում փոքրինչ այլ է. ամբոխը հասարակության առավել կոնկրետ, անխելք ու ագրեսիվ հատվածն է, որը երբեք չի ստեղծում, չի արարում, այն միայն ավերում է: Ամբոխը կոլեկտիվ անգիտակցականի նյութեղեն մարմնացումն է, այն հիմնականում կազմավորվում է տարերայնորեն՝ լուծելու համար այս կամ այն խնդիրը: Ամբոխը, ի տարբերություն անհատականությունների, հակված չէ ինքնուրույն եզրահանգումների, մտածելու, փնտրելու, քննելու և վերջապես գիտակցելու: Սովորաբար ամբոխ ասելով՝ առաջին հերթին պատկերացնում ենք միտինգներն ու փողոցային երթերը: Իրականում ամբոխը կամ ամբոխայինը մտածողության կերպ է, որը ենթադրում է մտքի և վարքի նույնացված և շաբլոնացված վիճակներ: Ամբոխային պատկերացումների ներկապնակը ներառում է բոլոր ոլորտները՝ սկսած սոցիալ - քաղաքական հայացքներից, հանրային ընկալումներից մինչև անգամ նորաձևություն և կենցաղ: Չկա մի տեղ, ուր ամբոխային մտածողությունն իր արմատները չունենա: Անգամ խիստ անհատականացված թվացող պարագաներում, օրինակ՝ մոդա, սեփական տան կահավորում և այլն, այս մտածողությունը գերիշխող է: Այսինքն՝ ոչ թե հատկապես ես ինչ եմ ուզում, այլ ինչպես են վարվում բոլորը: Ահա այսպես ամենուրեք մարդիկ վախենում

են տեր լինել իրենց անհատականությանը և մեխանիկորեն հետևում են ընդունված ձևերին և չափանիշներին: Հետաքրքիր է, որ մարդիկ մի տեսակ նույնիսկ իրենց երջանիկ են զգում ամբոխի մեջ: Ինչո՞ւ է այդպես: Ինչո՞ւ է ամբոխային երջանկությունը այդպես վարակիչ: Պարզվում է՝ ամբոխի մեջ մարդն ավելի է գահավիժում, դառնում անգիտակից: Սա մասամբ նման է թմրադեղի: Այստեղ մարդիկ հիմնավորապես կորցնում են իրենց սեփական անհատականությունը: Այլևս չկա անհանգստանալու պատճառ, այլևս չկա պատասխանատվություն կրելու անհրաժեշտություն: Մտաբերենք թեկուզ 2018 թ. դեպքերը, երբ մարզերից ու Երևանի թաղամասերից մարդկանց հոծ խմբերը աննկարագրելի հրճվանքով գնում էին կենտրոնական հրապարակ: Մարդիկ ասես կորցրել էին ռացիոնալ մտածողությունը և ինքնամոռաց տրվել էին հույզերին: Գաղափարներ ու նպատակներ այս գործընթացում անհրաժեշտ չեն, էմոցիաները բավարար են քաղաքական էքստազն ապահովելու համար: Իսկ թե ինչ իրադարձություն է տեղի ունենում, կարևոր չէ, այդ մասին ամենալավը գիտի լիդերը, իսկ իրենք հավատում են նրան: Այլ կերպ ասած՝ ամբոխը շատ նման է այն ծույլիկ աշակերտին, որը մաթեմատիկական խնդիրը գրելուց հետո ալարում է ուղեղը շարժել և իսկույն բացում է վերջին էջերում գրված պատասխանը և արտագրում է: Կամ էլ՝ վիզը ծռում դեպի կողքի

նստածը և նրանից «թխում» գրածը, իսկ դա իր տարբերակն է, թե ոչ, շատ էլ կարևոր չէ: Ամբոխը միայն պատրաստի մտքեր ու գնահատականներ է ընկալում, նա չի կարողանում ինքնուրույն հասնել եզրահանգումների: Ամբոխը չի սիրում միայնակներին, նա ընդունում է միայն կեղծ մարդկանց, որոնք նմանակում են մեկը մյուսին: Ամբոխը նաև ատում է նրան, ով իրեն պահում է արժանապատիվ, պնդում է իր իրավունքների մասին, պաշտպանում իր ազատությունը, գործում է իր հայեցողությամբ՝ անկախ նրանից, թե ինչ հետևանքներ են լինելու: Իսկ ընդհանրականը այն է, որ նա միշտ ագրեսիվ է բոլոր իրադրություններում: Բոլորս տեսել ենք, թե ինչպես են ցուցարարները նույնիսկ եվրոպական, այսպես կոչված, քաղաքակիրթ երկրներում գլխավերևում տանելով «Խաղաղություն և համերաշխություն» կարգախոսով պաստառներ՝ միաժամանակ պատրաստ են իրենց հակառակորդների կոկորդները կրծել, ոտքերի տակ տրորել նրանց: Անհնար է ամբոխին ակտիվացնել ու մղել «սխրանքների» դրական, մարդասիրական կոչերով: Նրան հարկավոր է տալ թունավոր հրահանգներ: Օրինակ՝ 2008 թ. մարտի 1-2-ի դեպքերի ժամանակ Ալիկ Արզումանյանը և նրա Նիկոլ անունով ճարպիկ տղան հատուկ հետևում էին, որ ամբոխի տոնուսը չթուլանա, գործը հասնի արյունոտ բախումների: Հետո կանցնեն տարիներ, և ճարպիկ տղուն «ՀԱԿ-ի ակսակալը» իր դեմքը փրկելու համար կանվանի «ազգակործան պատուհաս»: Օտար կենտրոնների տեխնոլոգները լավ էին հաշվարկել, երբ հրապարակ էին նետել «Քայլ արա, մերժիր Սերժին» կոչը: Բարի և դրական խոսքը կարող է նույնիսկ նյարդայնացնել ամբոխին, նրա վառելիքը, նրա «բենզինը» բացասական հույզերն են, վրեժն ու արյուն պահանջող հրահանգները: Ամբոխին պետք է հրամցնել մի քանի պարզեցված ֆրազ և ապա մատների վրա խաղացնել կամ ինչպես հիմա են ասում՝ մանիպուլյացիայի ենթարկել: Հիշենք թեկուզ այն, թե ինչպես են մտքի պատրաստի կաղապարները արագ տարածվում և տեղավորվում ամբոխի ուղեղում: Այդպես վարվեց, օրինակ, Լենինը իր պրոլետարական հեղափոխությունը իրականացնելիս («հողը՝ գյուղացուն, կորչեն բուրժուաները»), այդպես արեց Ադոլֆ Հիտլերը իր նացիոնալ-սոցիալիզմի գաղափարը կյանքի կոչելիս («գերմանացիները ընտրյալ ազգ են, մարդկության սանիտարներ»), կամ երբ Ժիրինովսկին էր քարոզարշավներին հրապարակ նետում իր «ավազակները պետք է նստեն բանտերում» կոչը, որով նրանք ահռելի քանակի ձայներ էին ապահովում, և վերջապես մեր օրերում Նիկոլի «թավշյա զառանցանքը» («կոռուպցիան մեր թշնամին է, մերժի՛ր Սերժին») և այլն: Այն գործիչները, որոնք ելնելով իրենց մարդկային պարկեշտ նկարագրից, ընտրություններին առաջարկել են ռացիոնալ, կառուցողական և մարդասիրական կարգախոսներ, դաժանորեն պատժվել են ամբոխի կողմից: Դրանք ամբոխին հետաքրքիր չեն, այդտեղ ադրենալին չկա: Խոստումները մարդկանց պահում են ամբոխի մեջ, քանի որ այդ խոստումները տառացիորեն ոչինչ չեն նշանակում: Կարելի է խոստանալ ամեն ինչ և ինչքան շատ ու ճոխ, այնքան լավ, որովհետև «խոստում» նշանակում է վաղը, իսկ վաղը երբեք էլ չի գալիս, վաղը երբևիցե պատասխանատվություն չի ենթադրել: Ամբոխները հեղափոխությունների և լիդերների համար խաղալիք են, հույժ պիտանի զենք, առանց նրա հասարակական ու քաղաքական համակարգերը ցնցելն անկարելի է: Բայց ամբոխն առանց ավանտյուրիստ լիդերի քանի՞ գրոշ արժե… Եթե գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Հայնեն մի պահ հայտնվեր մեր օրերի Հայաստանում, իր աչքով կտեսներ, թե ժամանակին ինչքան ճիշտ է բնութագրել լիդերին, ասելով. «Նա, ով ուզում է ազդել ամբոխի վրա, պետք է տիրապետի շառլատանի հմտություններին…»: Կրկին մտաբերենք հազար անգամ ասված ճշմարտությունը, այն է՝ «Ամբոխի լիդեր լինելու ցանկությունը ծնվում է այն մարդկանց մոտ, որոնք ակնհայտորեն ունեն թերարժեքության բարդույթ: Մոլի ձգտումը դեպի իշխանություն բացարձակ ցուցիչն է այն բանի, որ մարդն իրեն մյուսներից ցածր է զգում և փորձում աշխարհին ապացուցել, որ դա այդպես չէ: Նիկոլի ապրած կյանքն ու վարքագիծը ամենայն ճշգրտությամբ հաստատում են այս միտքը: Պատեհապաշտ ու վախկոտ այս մարդկային տեսակին բավական լավ է բնութագրել Ֆրիդրիխ Նիցշեն. նա ծաղրանքով ասել է. «Նայեք, նա փախչում է մարդկանցից, իսկ մարդիկ վազում են նրա հետևից, որովհետև նա առջևում է, առաջնորդ է, իսկ հետապնդողներն էլ հոտ են….»: Կա ևս մի ուշագրավ բան, որ շատ բնորոշ է «ամբոխ և լիդեր» սիրախաղին:

«Ամբոխի սերը,- ինչպես նկատել է քաղտեխնոլոգներից մեկը,- շատ նման է արաբական հեքիաթներում ապրող կախարդ ու ցանկասեր կնոջը, որը ոչ միայն լքում է իր սիրեկաններին, այլև երբ լրանում է քառասուն օրը, նա ստիպում է առաջնորդին դաժան ձևերով քավել սեփական մեղքերը այն բանի համար, որ ինչոր պահի նա իրեն դուր է եկել»: Նիկոլ փառաբանելու և Նիկոլ հայհոյելու միջև եղած տարածությունը, ինչպես տեսանք, կես քայլ է և հաստատում է այս կեղտոտ «սիրո» գոյության փաստը: Ներկայում ապրում ենք ավելի բարդ ժամանակներում, երբ ամբոխը գրեթե փոխել է թե՛ իր գրանցումը և թե՛ իր բնակության վայրը: Ամբոխն արդեն ապրում է նաև սոցցանցերում՝ «Twitter»-ում, «Facebook»-ում, «Telegram» ալիքներում և այլուր: Սրանք ամբոխի ինքնարտահայտման առավել վտանգավոր գոտիներն են: Այստեղ արդեն ամենատարրական պատասխանատվության մասին խոսելն ավելորդ է: Պատահական չէ, որ քաղաքական գործիչների «հին գվարդիան» այլևս չի կարողանում գլուխ հանել սոցցանցերում ապրող ամբոխից, էլ չենք խոսում նրան կառավարելու, զսպելու և անհրաժեշտության դեպքում՝ ուղղորդելու մասին: Սոցցանցերի ամբոխը առանձին ու բարդ թեմա է՝ արժանի հատուկ վերլուծության: Կփորձենք առաջիկայում դրան ևս անդրադառնալ: Հիմա միայն ասենք հետևյալը: Ամբոխը, ինչպես ասացինք հոդվածի սկզբում, կոլեկտիվ անգիտակցականն է, և մարդիկ միայն իրենց կամքով են դրան մաս կազմում: Բայց մեծ հաշվով պրոբլեմը ամբոխի մեջ չէ, պրոբլեմը մարդն է՝ ես, դուք, մյուսները… Եվ քանի դեռ մենք չենք համագործակցում նրա հետ, ամբոխը ոչինչ չի կարող անել մեզ: Ամբոխը չէ, որ մեզ իր գիրկն է քաշում, այդ մենք ենք մեզ նետում նրա գիրկը, միայն մարդկանց սեփական անգիտակցականն է դրա պատճառը: Ու պետք է հիշել, որ պատասխանատվությունը դնելով մեկ ուրիշի վրա, մարդը երբեք չի ազատագրվի տառապանքից:

Հրաժարվելով ամբոխի հետ համագործակցելուց՝ մարդն արդեն ապրում է կոլեկտիվ գիտակցականի տիրույթում, նրա արարքները ձեռք են բերում այլ որակ, նոր ու լուսավոր իմաստ, դրանք ամբողջովին պարուրված են պատասխանատվության զգացումով, խորունկ սիրով դեպի իր մերձավորը, իր երկիրն ու պետությունը: Կոլեկտիվ գիտակցականով ապրող մարդը երբեք չի ասի՝ «Կոտրվի այս ձեռքը, որ Նիկոլ ընտրեց…»: Նա չի անում բաներ, որոնց համար հետո գլխին կտա, նա լավ գիտի ինչ է անում և ինչու: Եվ վերջապես ամենակարևորը, ինչն այս օրերին խիստ արդիական է մեզ համար, հենց ամբոխն է ապազգայնության հումքը, նրա սուբստրատը: ■

Երրորդ համաշխարհային պատերազմի ուրվականը

Լուսինե Մխիթարյան
Միջազգայնագետ, լրագրող

Խորհրդային Միության փլուզումից հետո առաջին անգամ ընթանում է աշխարհի քաղաքական և տնտեսական քարտեզների վերաձևում: Նախևառաջ տեղի է ունենում քաղաքական ուժային կենտրոնների հստակեցման գործընթաց, վերադասավորումներ են իրականացվում վերջին տասնամյակների ընթացքում ձևավորված կոմունիկացիոն ենթակառուցվածքներում, ինչպես նաև լրջագույն փոփոխություններ են կատարվում սոցիալ-հասարակական և անհատական մակարդակում՝ պայմանավորված տեխնոլոգիական հեղափոխությամբ:

Գոյություն ունեցող ստատուս-քվոյի փոփոխմանն ուղղված քայլերը բնականաբար բախումների ու հակամարտությունների պատճառ պետք է դառնային: Տարածաշրջանային պատերազմները, լոկալ բախումներն այլևս դուրս են գալիս տարածաշրջանային նշանակության տիրույթից և անմիջականորեն առնչվում են համակարգային փոփոխություններին: Ռեսուրսների, կոմունիկացիաների, ազդեցության գոտիների նկատմամբ վերահսկողության հասնելու համար պայքարը լրացուցիչ մարտահրավերներ է ստեղծում, այդ թվում՝ ապագայի նկատմամբ անորոշության աճով, միգրացիոն մեծ հոսքերով և այլն:

Ազդեցության գոտիների վերաբաժանումն ընթանում է փուլային տարբերակով. դրանցից մեկը մեր տարածաշրջանում Հայաստանի՝ որպես քաղաքական սուբյեկտի դերի վերացումն էր թուրք-ադրբեջանական տանդեմի ջանքերով: Դրա տրամաբանական շարունակությունը պետք է դառնային ռուսական ազդեցության նվազեցմանն ուղղված զարգացումներն՝ արդեն արևմտյան ուղղությամբ: 2022 թվականի փետրվարի 24-ից Արևմուտք-Ռուսաստան անմիջական առճակատումը ռազմական դրսևորում ստացավ: Դրան զուգահեռ Արևմուտքը փորձում է մեկուսացնել Ռուսաստանին համաշխարհային տնտեսական, քաղաքական համակարգից՝ ընդլայնելով իր ազդեցությունը հետխորհրդային մի շարք տարածքներում:

21-րդ դարի աշխարհաքաղաքական էպիկենտրոններից է համարվում Հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, որտեղ բնակվում է մոլորակի բնակչության մոտ 60 տոկոսը, որին բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 60 տոկոսը: Այդտեղով են անցնում հիմնական ծովային ուղիները, իսկ միայն Մալակկայի նեղուցով իրականացվում է ծովային առևտրի տարանցման 25 տոկոսը[1]: Գոյություն ունեցող համակարգի փոփոխության համար նախադրյալներ է ստեղծում Չինաստանի և ԱՄՆ-ի միջև աճող լարվածությունը: Վերջինիս համար հիմնական մարտահրավերներից է Չինաստանի տնտեսական հզորությանը հակազդելն ու աշխարհում առաջատար դիրքի պահպանումը: Այդ նպատակով Միացյալ Նահանգներն

ավելի ակտիվորեն է ներգրավվում տարածաշրջանում՝ ստեղծելով դաշինքներ և գործընկերություններ, նախաձեռնում է տնտեսական աջակցության ծրագրեր: Այդ մոտեցումներն ամրագրված են 2022 թ. հոկտեմբերին հրապարակված ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության մեջ, որտեղ Չինաստանը ներկայացված է որպես «միակ մրցակիցը՝ միջազգային կարգը փոխելու մտադրությամբ և այդ նպատակին հասնելու համար տնտեսական, դիվանագիտական, ռազմական և տեխնոլոգիական հզորության աճով»[2]: Չինաստանն իր հերթին ավելի մեծ դերակատարություն ստանձնելու ցանկություն է դրսևորում և առաջ է քաշում անվտանգության ճարտարապետության իր հայեցակարգը:

Աշխարհաքաղաքական մակարդակում դերակատար լինելու հայտ են ներկայացնում Թուրքիան և Հնդկաստանը. Թուրքիան գերտերություն դառնալու ծրագիրը ձգտում է իրականացնել «թուրանական աշխարհի» միջոցով, իսկ Հնդկաստանը կարծես թե չի հրաժարվում «Akhand Bharat»՝ մեծ կամ անբաժան Հնդկաստան ունենալու ձգտումից (այն երկար տարիներ քննարկվել է հնդիկ ազգայնականների կողմից): Գաղափարի հիմքում բոլոր այն տարածքների միավորումն է, որոնք եղել են նախքան բրիտանական գաղութացումը: Այդ իմաստով խորհրդանշական էր Հնդկաստանի կառավարության կողմից անցած տարվա G20-ի գագաթնաժողովի նյութերում Հնդկաստանից բացի՝ Բհարատ անվան օգտագործումը: Նշենք, որ երկրի անվանափոխության հարցը նոր չէ, սակայն



ուշագրավ է այն, որ Հնդկաստանի խորհրդարանի նոր շենքում կախված է մեծ Հնդկաստանի քարտեզը, որը ներառում է Աֆղանստանի մի մասը, ամբողջ Պակիստանը, Նեպալը, Բանգլադեշը, Շրի Լանկան և Մյանմարը: Հարևան պետությունների պաշտոնական բողոքին ի պատասխան՝ Հնդկաստանի կառավարությունը հայտարարել էր, որ քարտեզը ցույց է տալիս պատմական կայսրությունները և թերակղզում ոչ թե քաղաքական, այլ մշակութային միասնությունը[3]: Հնդկաստանի կշռի մեծացմանը զուգահեռ ուժային կենտրոնները փորձում են վերջինիս ներգրավել իրենց «ճամբար»: Արևմուտքը ձգտում է նաև օգտագործել Հնդկաստանի ներուժը Պեկինին և Մոսկվային հավասարակշռելու համար: Մասնավորապես փորձ է արվում նվազեցնել չինական մատակարարումներից կախվածությունը, և այդ հարցում առաջացող «խոռոչը» լցնելու համար կարևորում են Հնդկաստանի դերը:

Միջազգային խաղացողների համար առաջնահերթ է դառնում համագործակցության շրջանակների ընդլայնումն ու նոր դաշնակիցների ձեռքբերումը: Ուկրաինական ճակատի նկատմամբ «հետաքրքրությունը» մասամբ թուլացավ, երբ թեժացավ իրավիճակը Մերձավոր Արևելքում: 2023 թ. հոկտեմբերի 7-ից ռազմական բախումներ սկսվեցին Իսրայելի և Գազայի միջև: Ի պատասխան Իսրայելի գործողությունների՝ քաղաքական խաղի մեջ մտավ Եմենի հյուսիսում իշխող «Անսար Ալլահ» (հութիներ) շարժումը՝ հայտարարելով, որ հարվածներ է հասցնելու Իսրայելի տարածքին և թույլ չի տա, որ այդ երկրի հետ կապված նավերն անցնեն Կարմիր ծովի և Բաբ-Էլ-Մանդեբի նեղուցի ջրերով, քանի դեռ չեն դադարեցվել ռազմական գործողությունները Պաղեստինի տարածքում: Նշենք, որ անցյալ տարվա նոյեմբերից հութիները հարձակումներ են գործում Կարմիր ծովում և Ադենի ծոցում տասնյակ քաղաքացիական նավերի վրա: Դրան ի պատասխան՝ այս տարվա հունվարի 12-ին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի զինված ուժերը սկսեցին կանոնավոր հարվածներ հասցնել Եմենի տարբեր նահանգներում գտնվող ապստամբների ռազմական օբյեկտներին: Հունվարի վերջին Մոսկվայում կայացավ հութիների պատվիրակության հանդիպումը Ռուսաստանի փոխարտգործնախարար Միխայիլ Բոգդանովի հետ, իսկ փետրվարի վերջին Բոգդանովը հայտնեց, որ ռուսական պատվիրակությունն այցելել է Եմեն, և Մոսկվան կապի մեջ է Եմենի հակամարտության բոլոր կողմերի հետ: Մարտի 17-ին շարժման քաղբյուրոյի անդամ Ալի ալ Քահումը X սոցիալական ցանցի իր էջում գրեց, որ համագործակցում են Ռուսաստանի, Չինաստանի, ինչպես նաև BRICS երկրների հետ Արևմուտքի դեմ պայքարում՝ ոչնչացնելու համար միաբևեռ աշխարհի գաղափարը: Փաստացի այս զարգացումների արդյունքում ռազմական գործողությունների ծանրության կենտրոնը հեռացավ Ռուսաստանի սահմաններից:

Արևմուտքն իր հերթին է քայլեր ձեռնարկում դաշնակիցներ ձեռք բերելու և համագործակցության շրջանակների ընդլայնման ուղղությամբ: Այդ իմաստով Ուկրաինայում ռազմական գործողությունների սկսվելուց ի վեր Արևմուտքի համար առավել կենսական էր դարձել Ֆինլանդիայի և Շվեդիայի անդամակցումը Հյուսիսատլանտյան դաշինքին: Թեև ԽՍՀՄ փլուզումից հետո Ֆինլանդիան և Շվեդիան 1995 թ. անդամագրվեցին Եվրամիությանը, սակայն մինչ այս պահը շարունակում էին ռազմական չեզոքություն պահպանել: Այսպես՝ Շվեդիան ավելի քան 200 տարի որևէ ռազմական դաշինքի մաս չէր կազմել, անգամ Համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքում չեզոք էր մնացել: Մարտի 7-ին Շվեդիան դարձավ ՆԱՏՕ-ի 32-րդ անդամ երկիրը, երբ Վաշինգտոնում ԱՄՆ կառավարությանը հանձնեց Հյուսիսատլանտյան պայմանագրին միանալու իր փաստաթուղթը: Արդեն մարտի 11-ին երկրի դրոշն առաջին անգամ բարձրացվեց ՆԱՏՕ-ի կենտրոնակայանում ռազմական դաշինքին երկրի անդամակցության պաշտոնական արարողության ժամանակ:

Ֆինլանդիան, որը մինչև 1944 թ. սեպտեմբերը կռվել էր նացիստական Գերմանիայի կողմից, պատերազմի ավարտից հետո լավ հարաբերություններ էր պահպանում Խորհրդային Միության հետ և ռազմական դաշինքների մեջ չէր ընդգրկվել: Հյուսիսատլանտյան դաշինքին Ֆինլանդիան միացել է անցած տարվա ապրիլի 4-ին, որի հետևանքով Ռուսաստանի հետ ՆԱՏՕ-ի ընդհանուր սահմանը կրկնապատկվել է՝ հասնելով 2600 կմ-ի: Նշենք, որ Ֆինլանդիայի և Ռուսաստանի պետական սահմանը 1300 կմ է. հյուսիսում Բարենցի ծովից մինչև հարավում Ֆիննական ծոցը հիմնականում անտառներ են, մեծ բնակավայրեր գրեթե չկան, իսկ սահմանային գիծը հիմնականում ամրացված չէ[4]: Ստրատեգիական և դիրքային բարելավումներից բացի՝ (Շվեդիայի օդային տարածքը կարող է օգտագործվել, օրինակ, դեպի մերձբալթյան երկրներ զորքեր կամ բեռներ ուղարկելու համար) սկանդինավյան երկու զարգացած երկրների մուտքը քաղաքական և ռազմավարական առումով երկակի նշանակություն է ստանում. մի կողմից՝ այն հարված էր Ռուսաստանին, մյուս կողմից՝ նվազեցնում է դաշինքի մանևրելու հնարավորությու-

Ռումինիայի այս ռազմաբազան վերածվելու է ՆԱՏՕ -ի բազայի

նը, քանի որ Ռուսաստան-ՆԱՏՕ ռազմական բախման պարագայում ռազմական չեզոքություն պահպանող պետությունների թիվը նվազում է: Ի դեպ, 2024 թ. հունվար-մայիս ամիսներին անցկացվում են ՆԱՏՕ-ի «Steadfast Defender 2024» զորավարժությունները, որին մասնակցում է 90 հազար զինվորական: Գերմանիայում, Լեհաստանում, Բալթյան երկրներում, ինչպես նաև Հյուսիսային ծովում անցկացվող զորավարժությունները համարվում են ամենախոշորը Սառը պատերազմի ավարտից հետո: Նշվում է, որ զորավարժությունների ժամանակ իմիտացնելու են Երրորդ համաշխարհային պատերազմի բռնկումը ՆԱՏՕ-ի անդամներից մեկի վրա Օկասուս անունով հորինված թշնամու կողմից (որը շատ նման է Ռուսաստանին) ենթադրյալ հարձակումից հետո[5]: Այն ՆԱՏՕ-ի առաջին խոշոր զորավարժությունն է, որին Շվեդիան և Ֆինլանդիան մասնակցում են որպես ռազմական դաշինքի լիիրավ անդամներ: Ակնհայտ է, որ զորավարժությունները կոչված են զսպելու Մոսկվային: ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ Միրչա Ջոանեն վերջերս կարծիք էր հայտնել, որ դաշինքի երկրները պետք է պատրաստվեն Ռուսաստանի հետ ևս մի քանի տարվա լարված հարաբերությունների:

ՆԱՏՕ-ն իր ներկայությունն ընդլայնում է նաև արևելյան թևում: Ռումինիայի իշխանությունները 2,5 միլիարդ եվրո են հատկացրել Եվրոպայում ՆԱՏՕ-ի ամենամեծ ռազմաբազայի կառուցման համար, որը Մոլդովայի սահմանից 300 կմ հեռավորության վրա է գտնվում: Բազան կառուցվում է Կոնստանտա կոմսությունում գտնվող «Միխայիլ Կոգալնիչանու» կայազորային բազայի հիմքի վրա: Գործող ռազմական օբյեկտի տարածքը կավելացվի 2.3 հազար հեկտարով՝ հասնելով 2.8 հազար հեկտարի, բազայի ընդհանուր պարագիծը կկազմի 30 կմ: Հին ռազմաբազան կարող է տեղավորել մոտ 3 հազար զինվորական, իսկ նորը նախատեսված է մինչև 10 հազար զինվորականի և նրանց ընտանիքների համար: Բազայի ընդլայնման ու արդիականացման առաջին փուլը նախատեսվում է ավարտել 5 տարում: Քիշնևի մոտ նույնպես նախատեսվում է նոր ռազմական բազա կառուցել, մասնավորապես 26 հեկտար տարածքի վրա զրոյից ստեղծվելու են ենթակառուցվածքներ, ինչը թույլ կտա ԵՄ և ՆԱՏՕ-ի ժամանակակից չափանիշներին համապատասխան տեխնիկայով զորամաս տեղակայել: Ըստ մոլդովական մամուլի՝ այդ նպատակների համար հատկացվել է 6,7 մլն դոլար[6]:

Ամփոփելով՝ նշենք, որ աշխարհի որևէ անկյունում տեղի ունեցող զարգացումները փոխկապակցված են և փոխպայմանավորված: Ներկայիս քաղաքական, տնտեսական, ռազմական, անգամ տեխնոլոգիական, կրթական գործընթացներն ընկած են տարածաշրջանային և գլոբալ անվտանգության ճարտարապետության փոխակերպման հիմքում: Դժվար է ասել, թե ինչպիսին կլինի աշխարհի քաղաքական, տնտեսական, գաղափարական պատկերը վերաձևումից հետո, սակայն ակնհայտ է, որ «հնից» «նորի» անցումը դեռ երկար կտևի: Քանի դեռ օջախային, լոկալ բախումները, հակամարտությունները ծառայում են գլոբալ նպատակին, այն է՝ քաղաքատնտեսական քարտեզի վերաձևմանը, ռեսուրսների վերաբաժանմանը, ուժային կենտրոնների հստակեցմանը, Երրորդ համաշխարհային պատերազմի վտանգը հետաձգվում, սակայն չի վերանում:

Հղում

1. https://securityconference.org/en/publications/munich-security-report-2024/.
2. https://www.whitehouse.gov/wp-content/uploads/2022/10/Biden-Harris-Administrations-National-Security-Strategy-10.2022.pdf.
3. https://parstoday.ir/ru/radio/world-i189900.
4. https://www.dw.com/ru/finlandia-vstupila-v-nato-cto-eto-izmenit/a-65224496.
5. https://www.abc.es/internacional/otan-convoca-mayores-maniobras-historia-simular-estadillo-20240117125628-nt.html?ref=https%3A%2F%2Fwww.abc.es%2Finternacional%2Fotan-convoca-mayores-maniobras-historia-simular-estadillo-20240117125628-nt.html.
6. https://eadaily.com/ru/news/2024/03/14/eto-budet-amerikanskiy-gorod-rumyniya-stroit-bazu-nato-na-granice-s-moldaviey.

Հովանավոր պետությունների դերը ներկայիս աշխարհակարգում. ունի՞ արդյոք Հայաստանը աշխարհաքաղաքական հովանավոր

Ամերիկյան հետազոտությունների հայկական կենտրոն

Համաշխարհային պատմության ընթացքի հետ աշխարհակարգի ձևավորման, զարգացման և փոփոխման գործընթացները հասկանալու և վերլուծելու համար անհրաժեշտ է ուշադրությունը սևեռել միջազգային հարաբերությունների համակարգերի վրա, որոնց հաջորդափոխման արդյունքում աշխարհին «խաղի նոր կանոններ» են թելադրվում: Այդ համակարգերի փոփոխությունը կարելի է խմբավորել հետևյալ կերպ. բազմաբևեռ աշխարհից անցումը երկբևեռի, երկբևեռից՝ միաբևեռ աշխարհի և միաբևեռից անցումը նոր աշխարհակարգի: Ըստ այդմ՝ բազմաբևեռ աշխարհակարգի մեջ կարելի է ներառել միջազգային հարաբերությունների հետևյալ համակարգերը՝ Վեստֆալյան, Վիեննայի և Վերսալ-Վաշինգտոնյան, որոնցից առաջին երկուսն ունեին եվրոպակենտրոն բնույթ: Երկբևեռ աշխարհակարգի հիմքերը դրվեցին միջազգային հարաբերությունների Յալթա-Պոտսդամյան համակարգի ժամանակ: Իսկ միաբևեռ և նոր աշխարհակարգերը ձևավորվեցին և միմյանց հաջորդեցին Սառը պատերազմի ավարտից հետո:

Ներկայիս միջազգային հարաբերությունների համակարգը լավ հասկանալու համար նախ անհրաժեշտ է կարճ անդրադառնալ նախկին գործող աշխարհակարգերին: Ընդհանրապես, աշխարհակարգը հարաբերությունների որոշակի համակարգ է, որը սահմանում ու կարգավորում է երկրների միջև հարաբերությունները: Աշխարհակարգերը սկսել են ձևավորվել 16-րդ դարում, երբ Եվրոպայում աստիճանաբար զարգանում էին «գերտերությունների» և գաղութատիրական երկրների համակարգերը[1]: Այդ շրջանը համընկնում է միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգի գոյության հետ, որը ձևավորվել է համաեվրոպական 30-ամյա պատերազմին հաջորդած 1648 թ. Վեստֆալյան հաշտության արդյունքում և ընդգրկում է մինչև 1815 թ. ընկած ժամանակահատվածը:

Միջազգային հարաբերությունների հաջորդ համակարգը սկսվեց ձևավորվել Ֆրանսիական հեղափոխությանը հաջորդած նապոլեոնյան պատերազմներից հետո, որոնք ավարտվեցին Ֆրանսիայի պարտությամբ: Վիեննայի վեհաժողովը 1814 թ. ամփոփեց արդյունքները և վերականգնեց Նապոլեոնի կողմից խախտված ազգային ինքնիշխանության սկզբունքը: Ձևավորվեց միջազգային հարաբերությունների նոր համակարգ՝ հայտնի որպես «Վիեննայի համակարգ» կամ «Եվրոպական համերգ»[2]:

Սակայն շուտով ուժերի հավասարակշռությունը խախտվեց, և «Եվրոպական համերգում» ի հայտ եկավ առաջնորդ, որը ստիպեց մյուսներին միավորվել ինքնապաշտպանության նպատակով: Գերմանիան հավակնում էր ոչ միայն իր տնտեսական ազդեցությունը տարածելու, այլ նաև քաղաքականը, ինչը ստիպեց Ֆրանսիային, Ռուսաստանին, Բրիտանիային դաշինք կազմել Գերմանիայի դեմ՝ նույնիսկ հրավիրելով օվկիանոսի այն կողմում գտնվող «հսկային»՝ ԱՄՆ-ին: Ուժերի հավասարակշռության խախտումն էլ հանգեցրեց համակարգի փլուզմանը[3]: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը պաշտոնապես ազդարարվեց Վերսալ-Վաշինգտոնյան պայմանագրերի կնքմամբ, որոնց հիմքի վրա էլ ձևավորվեց միջազգային հարաբերությունների նոր՝ Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: Վերսալյան պայմանագիրը ստորագրվել է Փարիզում 1919-1920 թթ.: Պայմանագիրը վավերացրել են Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, սակայն ԱՄՆ-ն այդպես էլ այն չի վավերացրել: Վերսալյան խաղաղության պայմանագիրը կնքվեց հոգուտ հաղթած պետությունների[4]:

ԱՄՆ-ն չցանկացավ վավերացնել Վերսալյան պայմանագիրը, որի արդյունքում հրաժարվեց Ազգերի լիգայում իր մասնակցությունից: Պատճառը բոլշևիկների կողմից հրապարակված Անտանտի երկրների միջև ստորագրված գաղտնի փաստաթղթերն

էին, որոնց գոյության մասին Վ. Վիլսոնը ոչինչ չգիտեր: Սրա հետևանքով ԱՄՆ-ն նոր համաժողով հրավիրեց՝ Վաշինգտոնյան համաժողովը: Այսպիսով՝ ստեղծվեց միջազգային հարաբերությունների նոր համակարգ՝ Վերսալ-Վաշինգտոնյան համակարգը: Անցումը բազմաբևեռ աշխարհակարգից երկբևեռի տեղի է ունեցել Յալթայում և Պոտսդամում 1945 թ. տեղի ունեցած համաժողովների ընթացքում, որոնք էլ հայտնի են միջազգային հարաբերությունների Յալթա-Պոտսդամյան համակարգ անվանումով: Այդ համաժողովներից հետո պարզ դարձավ, որ բազմաբևեռ աշխարհի ռազմական ուժի, տնտեսական, քաղաքական, գաղափարախոսական համադրելիությունը դադարել էր գոյություն ունենալ: Ի տարբերություն Եվրոպայի՝ ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո տնտեսապես համեմատաբար հզոր դուրս եկան[5]: «Սառը պատերազմի» շրջանում պարբերաբար մեծանում էր երկու գերտերությունների միջև լարվածությունը, սակայն հաջողվում էր խուսափել ռազմական բախումից, քանի որ լուռ համաձայնությամբ աշխարհը գրեթե ամբողջությամբ բաժանվել էր ԽՍՀՄ և ԱՄՆ ազդեցության գոտիների, և այդ բաժանման սահմանները որևէ մեկը չէր խախտում: ԽՍՀՄ փլուզումով մեկնարկեց ազդեցության գոտիների վերաբաժանման մի նոր գործընթաց, ինչը ստեղծեց միանգամայն նոր աշխարհաքաղաքական իրավիճակ մի շարք տարածաշրջաններում: Այս շրջանում շատ ամերիկյան քաղաքագետներ հետևողականորեն փորձում էին ձևավորել միաբևեռ աշխարհակարգի հայեցակարգը՝ հիմնավորելով Միացյալ Նահանգների նոր դերակատարությունը միջազգային հարաբերություններում:

Այսպիսով՝ եթե Վեստֆալյան և Վիեննայի միջազգային համակարգերը աչքի էին ընկնում իրենց «եվրոպակենտրոնությամբ», ապա Վերսալ-Վաշինգտոնյան միջազգային համակարգը, որում իր ուրույն տեղը գրավեց ԱՄՆ-ը, փաստացիորեն դարձավ բազմաբևեռ վերջին աշխարհակարգը, որին հաջորդելու եկավ Յալթա-Պոտսդամյան միջազգային երկբևեռ համակարգը՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի գերակայությամբ: ԽՍՀՄ փլուզումից և Սառը պատերազմի ավարտից հետո գլոբալ գերտերության կարգավիճակը պահպանեց միայն Միացյալ Նահանգները[6]:

Այդուհանդերձ միաբևեռ աշխարհակարգը երկար չգոյատևեց: Ի հայտ եկան նոր գերտերություններ՝ որպես ԱՄՆ հիմնական հակառակորդներ: Այս անգամ նոր գերտերություններ ի հայտ եկան ոչ միայն արևմտյան, այլև արևելյան ճակատում նույնպես, հանձինս՝ Չինաստանի, ինչպես նաև Ռուսաստանի՝ փլուզված ԽՍՀՄ-ի հիմքերի վրա: Հենց այս երեք գերտերություններն էլ ներկայում բազմաթիվ երկրների համար հովանավոր պետություններ են:

Գերտերությունների գերակայությամբ ձևավորված աշխարհակարգերի պայմաններում փոքր երկրների համար բավական բարդ է սեփական աշխարհաքաղաքական շահերի սպասարկումը, և վերջիններս հաճախ փնտրում են հովանի՝ մեծ պետությունների հետ դաշինքներ կազմելով կամ միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին միանալով[7]: Փոքր պետությունները սա անում են իրենց տնտեսական, քաղաքական և սոցիալական խնդիրները մեղմելու համար: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ փոքր պետություններին անհրաժեշտ է դիվանագիտական, ռազմական, տնտեսական և վարչական աջակցություն այս ավելի մեծ միավորումներից կամ պետություններից: Այս ամենը ձեռք բերելու համար փոքր պետությունները առավել հաճախ են պատրաստ զիջելու իրենց ինքնիշխանության մի մասը, քան մեծ պետությունները: Դա պայմանավորված է նրանով, որ փոքր պետություններում գոյատևման և բարգավաճման հեռանկարները սերտորեն կապված են նման մեծ պետություններից ստացվող աջակցությունից[8]:

Այդուհանդերձ այդ աջակցությունն ու դաշինքները ոչ միայն անհրաժեշտ են փոքր պետություններին, այլև տարածաշրջանային մակարդակով խոշոր ազդեցություն ունեցող պետություններին: Այնուամենայնիվ, կախված պետության ազդեցության աստիճանից, ինքնիշխանության զիջման մակարդակները տարբերվում են:

Ներկայիս աշխարհաքաղաքական գործընթացներին հետևելով՝ ակնհայտ է դառնում, որ գրեթե ոչ մի երկիր չկա, որը չունենա, այսպես կոչված, հովանավոր կամ պաշտպան երկիր, որը կապահովի տվյալ պետության տնտեսական և քաղաքական համակարգի անձեռնմխելիությունը կամ ֆիզիկական անվտանգությունը: Օրինակ՝ ինչպես պետք է Իսրայելը ապահովեր իր անվտանգությունը, եթե չլիներ Միացյալ Նահանգների շարունակական աջակցությունը, կամ ինչ կլիներ Բելառուսի հետ առանց ռուսական աջակցության՝ որպես միութենական պետություն, կամ ինչ կլիներ Հյուսիսային Կորեայի հետ առանց Չինաստանի աջակցության: Իհարկե, սա չի նշանա-

կում, որ Իսրայելը կամ Հյուսիսային Կորեան կդադարեին գոյություն ունենալ, բայց նրանք չէին ունենա այնպիսի ազդեցություն իրենց տարածաշրջանների անվտանգության վրա, ինչպիսին այժմ ունեն:

Հարկ է նշել, որ այնպիսի հզոր գերտերություններ, ինչպիսիք են Գերմանիան և Ֆրանսիան, նույնպես գտնվում են Միացյալ Նահանգների հովանու ներքո, քանի որ երկուսն էլ մի անվտանգային կառույցի՝ ՆԱՏՕ-ի անդամ են, որի ղեկին գտնվում է ԱՄՆ-ը: Ավելի լայն տեսանկյունից մենք կարող ենք տեսնել, որ նույնիսկ չեզոք երկրները, ինչպիսիք են Ավստրիան և Շվեյցարիան, մեծ մասամբ գտնվում են ՆԱՏՕ-ի և համաեվրոպական անվտանգության համակարգի հովանու ներքո, որն իր հերթին ապահովվում է Միացյալ Նահանգների կողմից: Միաժամանակ կան որոշակի պետություններ, ինչպիսիք են Հնդկաստանը, Իրանը կամ Թուրքիան, որոնք քիչ թե շատ անկախ են գործում: Բայց միևնույնն է, նրանք բոլորն էլ իրենց տեղն ունեն բարձրագույն լիգայի հիմնական խաղացողների կողմից ստեղծված և պահպանվող ընդհանուր անվտանգության համակարգում:

Այսինքն՝ աշխարհի բոլոր պետություններն ունեն իրենց «մեծ եղբայրը»: Հետաքրքիրն այն է, որ Իրանը, Հնդկաստանը, Թուրքիան և որոշ նման այլ երկրներ «մեծ եղբայրների» ակումբում չեն, բայց նրանք իրենց հերթին ունեն իրենց հովանու ներքո գտնվող երկրները, որոնք շարունակում են գտնվել միջազգային հարաբերությունների ընդհանուր համակարգում:

Եվ իհարկե, Հարավային Կովկասն էլ բացառություն չէ: ԱՄՆ-ը կարելի է համարել Վրաստանի «մեծ եղբայրը», Ադրբեջանինը՝ իհարկե, Թուրքիան է, բայց Ադրբեջանն ամեն ինչ անում է նաև Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ պահպանելու համար՝ փորձելով միաժամանակ երկու «մեծ եղբայր» ունենալ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա 2018 թ. հեղափոխությունից հետո և հատկապես 2020 թ. պատերազմից հետո անհայտ է՝ ունի՞ արդյոք Հայաստանը «մեծ եղբայր», թե՞ փնտրում է մեկին:

Վերակողմնորոշումը դեպի Միացյալ Նահանգներ և Եվրոպա, ինչպես նաև Ռուսաստանի հետ առկա լարվածությունը ապացույցն են նրա, որ Հայաստանը չի կարող գտնել իր տեղը այն միջավայրում, որտեղ հայտնվել է: Երևանը, կարծես, հայտնվել է երկընտրանքի առջև: Բացարձակապես կարևոր չէ, թե ով է պատասխանատու հայ-ռուսական ռազմավարական հարաբերությունների այս սահմանագծին հասնելու համար: Փաստն այն է, որ Հայաստանը չունի աշխարհաքաղաքական հովանավոր, որը կապահովի նրան անվտանգության երաշխիքներով: Իհարկե, այս վակուումը երկար շարունակվել չի կարող, և Հայաստանը ստիպված կլինի ընտրություն կատարել աշխարհաքաղաքական կենտրոնների միջև, կամ, որ ավելի վատ է, Հայաստանին կպարտադրվի արդեն իսկ կայացված որոշում, որից Երևանը չի կարողանա խուսափել: Եվ դարձյալ այդ որոշումը ընդունելը շատ ցավոտ կլինի: Հայաստանի միակ շանսը հնարավորինս արագ կողմնորոշվելն ու հստակ քայլեր ձեռնարկելն է դեպի որևէ աշխարհաքաղաքական կենտրոն՝ լինի դա Վաշինգտոնը, Մոսկվան, թե Պեկինը, որպեսզի խուսափի ամբողջական փլուզումից:

Հղում

1. Гринин Л., Новый Мировой Порядок и Эпоха Глобализации: Американская Гегемония: Апогей и Ослабление. Что Дальше?, Век глобализации, №2 (16), 2015, с. 3-18:
2. Международные отношения и модели международных систем, https://studopedia.su/6_10348_tema--mezhdunarodnie-otnosheniya-i-modeli-mezhdunarodnih-sistem.html, (04.03.2024):
3. Международные отношения…, նույն տեղում:
4. Версальский договор. Основные положения, http://libraryno.ru/4-1-versal-skiy-dogovor-osnovnye-polozheniya-2013_istoriya_megdunar_otn/, (04.03.2024):
5. Заключение. Завершение Формирования Глобальной Системы Мирополитических Отношений, http://www.obraforum.ru/lib/book1/conclusion, (05.03.2024):
6. Սուրեն Սարգսյան, Ամիա Գևորգյան, Անահիտ Մուրադյան, Հայկական քաղաքագիտական հանդես, 2 (14), 2020, 05-36, էջ 95-133:
7. Hilmarrson H., Small States Under Pressure, https://www.social-europe.eu/small-states-pressure, (05.03.2024):
8. Thorhallsson B., Steinsson S., The Theory of Shelter, Presented at the Conference: “Small States and the New Security Environment” at University of Iceland, Reykjavik, 26 June, 2018, https://uni.hi.is/baldurt/files/2018/07/The-Theory-of-Shelter3909.pdf, (06.03.2024):

... Դուք ձեր արիւնէն է, որ պէտք է վախնաք

Մովսէս Ծիրանի
Արվեստաբանութեան դոկտոր

Վենետիկ, մայիս, 2000: Հռոմէն մինչեւ Վենետիկ հասնիմ, Փերքորսիե ցուցասրահի տնօրէնը՝ Անթոնիօ Գուատրիօ, յանկարծամահ եղած էր, եւ կազմակերպուելիք ցուցահանդէսը՝ յետաձգուած: Հակառակ անոր, որ կինը՝ Մանուէլա Ֆերացցիոնի, խոստացած էր մեր պայմանագիրը նոյնութեամբ գործադրել, սակայն ես ներքնապէս հանգիստ չէի... հարազատ մը կորսնցուցած ըլլալու ցաւը կը ապրէի: Այդ օրերուն Մուրատ Ռափայէլեան վարժարանը վերածուած էր հիւրանոցի, ուր կ'ապրէր նաեւ գեղանկարիչ Գր. Սգայեանը: Երբ տրամադրութիւնս փոխելու համար մտայ իր սենեակը, յանկարծ Հայր Յարութիւն Պզտիկեանը եկաւ եւ հրաւիրեց մեզ իւրայատուկ փիցայի տեսակ մը ճաշակելու: Երեքով դուրս ելանք. Հայր Յարութիւնը ճանապարհին կը փորձէր զուարթ մթնոլորտ մը ստեղծել: Քամփօ Սանթա Մարկարիթա հրապարակը հասանք, մեզ դիմաւորեցին երկու երիտասարդներ, որոնց հեռակայ արտայայտութիւնները բարեկամական էին ու նշանակալից: Հայր Յարութիւնը իր իւրայատուկ հիւմորով ըսաւ.

– Ահաւասիկ քեզի կը ներկայացնեմ կէս թուրք, կէս հայ մը՝ Արան եւ ամբողջական թուրք մը՝ Օսմանը, լաւ տղաք են... մերոնցական:

Մինչ կը շարունակէր զիս ծանօթացնել, արդէն իսկ Արային ձեռքը սեղմած էի, սակայն երբ կարգը եկաւ Օսմանին, բնազդաբար ձեռքս քաշեցի... Մեր աչքերը իրարու հանդիպեցան, եւ Օսմանին ձեռքը մնաց օդին մէջ...:

Այս ակնթարթային միջադէպը դարաւոր պատմութիւն եւ սարսռազդեցիկ առհասական զգացողութիւն կը պարունակէր իր մէջ... երկուստեք: Հայր Յարութիւնն ու Արան շարունակեցին խօսակցութիւնը, Օսմանն ու ես չհամարձակեցանք անգամ մը եւս իրարու... նայիլ: Ընթրիքը փառաւոր էր, ամէն ինչ լաւ կ'ընթանար: Սակայն Օսմանին աչքերը բազմաթիւ հարցականներ կը ստեղծէին մէջս: Ինչո՞ւ... Ինչո՞ւ եւ ինչո՞ւ:

Յոգնածութեան պատրուակով վերադարձայ պանդոկ՝ Մուրատ Ռափայէլեան վարժարան եւ անկողին մտայ: Օսմանին աչքերն ու ինչուները կը տանջէին զիս, անկարելի էր քնանալ: Կէս գիշեր էր արդէն, երբ բնազդային մղումով անկողնէն ելայ, բնազդաբար ուղղուեցայ դէպի Քամփօ Սանթա Մարկարիթա:

Հրապարակը սկսած էր դատարկուիլ: Մնայ առաջին հանդիպած բացօթեայ սրճարանը եւ գարեջուր ապսպրեցի: Թխադէմ իտալուհիին կիսաբաց կուրծքերն ու անշպար աչքերը թէեւ յոգնած կը թուէին ըլլալ,

սակայն համարձակ ու ինքնավստահ տեսք ունէր: Առանց կարծիքս առնելու՝ մէկի փոխարէն երկու շիշ եւ երկու գաւաթ դրաւ դիմացս՝ բացատրելով, թէ հնարաւոր էր, որ երկար նստիմ, իսկ իրենք սրճարանը պիտի գոցէին: Չառարկեցի: Վենետիկեան կէսգիշերային զեփիւռը, որ կոյուղիի գարշահոտը իրեն հետ բերելու սովորութիւն ունէր, յապաղած կը թուէր ըլլալ: Ձեռքս կը դողար, եւ մատներս ակամայ կը թմբկահարէին սեղանը: Գարեջուր լեցնելու ատեն գաւաթը յորդեցաւ, ոտքի ելայ եւ յանկարծ Օսմանը տեսայ դիմացս: Չզարմացայ, եւ ոչ ալ ինք զարմացած էր: Միաժամանակ մեր ձեռքերը երկարեցինք ու սեղմեցինք բնականէն աւելի երկար ու տարբեր...: Հաշտութեան առաջին քայլը յաջող էր: Նստանք, երկրորդ գաւաթը դիմացը դրի եւ գարեջուրը լեցուցի զգուշութեամբ:

Օսմանը առարկեց.

– Թերեւս ուրիշի մը կը սպասէիք:

– Ո՛չ, գիտէի, որ պիտի գաս, աւելի ճիշդը՝ կ'ուզէի, որ գաս...

– Իսկ ես չկրցայ քնանալ, բնազդաբար հոս եկայ, ուրիշ հասցէ չունէի...

– Կը հասկնամ, ես սխալ վարուեցայ հետդ, ոչ մարդկային, աւելի ճիշդը՝ ոչ թէ չուզեցի, այլ չկրցայ, շատ

բան կուտակուած է մէջս՝ մեր մէջ, այդ կուտակումները շրջանցելը դիւրին չէ, հոգեկան բարդ հարցեր կան...:

– Ըսածներդ ճիշդ են, բացատրելի, Արային հետ շատ խօսած ենք այս մասին, եկուր՝ խմենք իր կենացը եւ բացատրեմ, թէ ինչո՞ւ: Հայր Յարութիւնն ըսաւ, որ ան կէս թուրք է եւ կէս հայ, կ՚ուզեմ սրբագրել. Արան թէ՛ թուրք է եւ թէ՛ հայ, եւ հոս է իր տագնապի բանալին ու տառապանքին աղբիւրը: Ան թէ՛ անմեղ զոհ է եւ թէ՛ ոճրագործ: Անձնասպանութիւն գործած եւ ողջ մնացած ըլլալու տանջալից վիճակի մէջ կը գտնուի: Մեր երկուքին պարագան աւելի մխիթարական է, քան իրը. դուն անմեղ զոհն ես, ես ոճիր գործած մեղադրեալը, մեր կեցուածքները յստակ են, իսկ Արան երկուքն է միաժամանակ: Այս կացութիւնը մէկ կողմէ՝ կապարի նման կը ճնշէ իր խղճին եւ միւս կողմէ՝ մրուրի պէս նստած է անոր ներաշխարհին խորքը: Ան տեսակ մը անիծեալ ծնունդ է, զինք մխիթարելը դիւրին չէ, թերեւս անկարելի: Սակայն ես կը փորձեմ ըմբռնել քու կացութիւնդ, աւելի ճիշդը՝ կը փորձեմ հասկնալ քեզ եւ կամ ձեզ ընդհանրապէս...

– Ի զուր մի՛ փորձեր հասկնալ մեզ, Օսմա՛ն: Դուք չէք կրնար կարծիք կազմել մեր ցաւի խորութեան ու տեսակի մասին: Որքան ալ փորձէք մարդկային վերաբերմունք ցուցաբերել, որքան ալ ուզէք լայնախոհ եւ արդարամիտ ըլլալ, որքան ալ մարդկայնօրէն սիրէք մեզ եւ գնահատէք մեր ազգային արժանիքները, դուք պիտի չկրնաք ըմբռնել մեր ահաւոր կացութիւնը... արդարամտութիւնը յարաբերական իմաստ ունի ձեր քով... ի վերջոյ թուրք էք:

– Ներողութի՛ւն, ի՞նչ ըսել է՝ ի վերջոյ թուրք էք: Թուրքը մարդ չէ՞, թուրքը չի՞ կրնար վեհանձն եւ կամ մարդկային ըլլալ:

– Խնդրեմ... ի հարկէ մարդ էք, կրնաք նաեւ վեհանձն ու մարդկային ըլլալ, ինչպէս դուն, Թանէր Աքչամը եւ ուրիշներ: Ձտարիւն ազգ կամ ժողովուրդ գոյութիւն չունի, բացառութիւն չեն նաեւ ո՛չ հայերը եւ ո՛չ ալ թուրքերը, սակայն պէտք է նկատի ունենաք, որ թուրքը տակաւին մարդկայնօրէն քաղաքակրթուած չէ իբրեւ ժողովուրդ եւ ոչ ալ կազմաւորուած է իբրեւ ազգ: Դուք նոյնիսկ մեր օրերուն կ՚առաջնորդուիք անասնական բնազդով, այսինքն՝ նախնադարեան հորդաներու նման...:

– Կոտորածներո՞ւն կ՚ակնարկէք...

– Կոտորածներ շատ եղած են պատմութեան ընթացքին, հիմա ալ տեղի կ՚ունենան տարբեր երկիրներու մէջ, թէեւ եղեռնը այլ բնոյթ ու բովանդակութիւն ունի, սակայն իմ խօսքը կը վերաբերի ձեր մշակած ու գործադրած ժամանակակից ռազմավարութեան ու մարտավարութեան, որոնք հիմնուած են աւելի անտառային, քան մարդասիրական...:

– Ինչպէ՞ս... ինչպէ՞ս...

– Դուք ձեր պատմութեան ընթացքին եղած էք միշտ նուաճող ու յարձակողապաշտ: Ձեր հայրենիքը դուք բռնագրաւած էք ուրիշներէն, կողոպտած էք թէ՛ բնիկ ժողովուրդները եւ թէ՛ դրացիները, այս պատճառով ալ դուք չէք գիտեր, թէ ի՞նչ կը նշանակէ ինքնապաշտպանութիւն եւ աւելի ճիշդը՝ հայրենիքի կամ սեփական հողի պաշտպանութիւն: Նոյնիսկ մարդկային իրաւունքներու այս լուսաւոր դարուն բիրտ ուժի կը դիմէք քաղաքական թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին հարցերը լուծելու պարագային:

– Ինչպէ՞ս...

– Օրինակի համար՝ ուժի դիրքերէ սպառնալիքներ կ՚ուղղէք այն բոլոր պետութիւններուն եւ կազմակերպութիւններուն, որոնք կը ճանչնան եւ կամ հակամէտ են ճանչնալու Հայոց ցեղասպանութիւնը: Ձարտուղի եւ ապօրէն միջոցներով կ՚արգելակէք այն բոլոր դրական վերաբերումները (նոյնիսկ արուեստի պարագային), որոնք մարդկայնական են եւ կ՚առնչուին ցեղասպանութեան եւ չէք անդրադառնար, որ ձեր սպառնալիքներով նախ կը հաստատէք ցեղասպանութեան ճշմարտացիութիւնը եւ ապա մարդն ու մարդկայինը շրջանցելով՝ կը վերադառնաք նախնադարեան ժամանակներուն, երբ տակաւին նախամարդը կ՚առաջնորդուէր անասնական բնազդով եւ ոչ թէ առողջ դատողութեամբ:

– Կ՚ընդունիմ, որ մեր ժողովուրդին մեծամասնութիւնը տակաւին մարմնական պահանջները բաւարարելու առօրեայ մտահոգութիւնը ունի եւ զարգացած չէ, սակայն երկիրը կ՚առաջնորդուի կրթուած ու դատողութեան տէր անձնաւորութիւններով:

– Խնդիրը այս է արդէն, դատողութիւն ունեցողներն իսկ անմարդկային միջոցներու կը դիմեն, եւ այս է պատճառը, որ դուք չէք կրնար ըմբռնել մեր ցաւի մեծութիւնն ու խորութիւնը...:

– Լաւ, բայց ինչո՞ւ...

Թուրք պապերդ հայ պարմանի կոյսերուն սեռային առաջին հաճոյքը փոխարինած էն ցաւագին բռնաբարումներով, երբ անոնք սահմանուած էին տեղի ունենալու սիրային զգացական գեղեցիկ պահերու ընթացքին, ուր կեանքը կը գեղեցկանայ այնքան, որքան սիրոյ առաջին պտուղը: Ասկէ աւելի անմարդկային վիրաւորանք կրնա՞յ ըլլալ:

– Ինչպէ՞ս...

– Ժամանակին Կիպրոսի յոյն-թրքական սահմա-

նին վրայ յոյն պատանի մը, երբ դրօշակ կը զետեղէր, թուրք զինուոր մը կրակեց անոր վրայ ու սպաննեց:

– Կրնայ ըլլալ, յետոյ...:

– Մինչեւ հոս կը հասկնամ, զինուորը հրահանգներ ունի եւ կամ հնարաւոր է, որ գիտակից չըլլայ իր կատարած ոճիրին: Սակայն, երբ երկրին վարչապետը՝ Թանսու Չիլլեր, կին ըլլալով հանդերձ, կ'արդարացնէ այդ արարքը, այն ատեն խնդիրը կը փոխուի, որովհետեւ ի յայտ կու գայ թուրքին անմարդկային նկարագիրը՝ ազգային խառնուածքը գիտակցական գետնի վրայ: Մինչ Լիզպոնի մէջ հայ տղաքը անձնասպան եղան, սակայն խնայեցին թուրք դեսպանին կինն ու զաւակը, իսկ թուրք բանաստեղծը արդարութիւնը կ'ուզէ կապել սուրի ծայրին եւ քաղաքակրթութիւնը՝ ձիու սմբակներուն, որպէսզի քաշկոտէ զայն ամայքներու մէջ: Մինչ «կանանց երբէք ձեռք տալու չէ» կ'երգէր վրէժխնդիր հայ ֆետային, թուրք զինուորը պետական որոշումով հրահանգ կը ստանար կեդրոնէն, որպէսզի յղի կիներուն արգանդները խողխողէր սաղմերն իսկ ոչնչացնելու համար: Այո՛, Օսմա՛ն, ի վերջոյ թուրք էք... Ինչպէս մոռնանք այն վիրաւորանքը, որ քու պապերդ հասցուցած են հայու էութեան. մեր ազգային արժանապատուութիւնը տրորած էք՝ առանց անդրադառնալու, որ այս եւ նմանօրինակ արարքներով ինքնաբերաբար դուրս կու գաք մարդկային սահմաններէն...: Մի՛ մոռնար, որ ձեր հերոսականութեան չափանիշը (ձեր դիւցազներգութիւնը վկայ) գլուխ կտրելու քանակով կը չափուի՝ առանց նկատի առնելու, որ այդ գլուխները թշնամական են, թէ բարեկամական:... Թեթեւ հով մը սկսաւ փչել, եւ վենետիկեան կոյուղիի գարշահոտը իր ներկայութիւնը զգալի դարձուց...:

Օսմանը զարմացած ու զայրացած կը թուէր ըլլալ միաժամանակ: Քիչ մը տատամսոտ ոճով ըսաւ.

– Ինչո՞ւ անպայման կ'ուզես հակաճառեմ քեզի, ինչո՞ւ բրտօրէն կը վիրաւորես ազգային արժանապատուութիւնս, երբ ես պատրաստ եմ քու դատդ պաշտպանելու, ցեղասպանութեան հարցով քու կողքիդ կանգնելու եւ իմ ազգիս շահերուն դէմ գործելու: Բոլոր թուրքերը չէ, որ ոճրագործ են, կամ թուրքը ամբողջովին ժխտական յատկութիւններով չէ օժտուած: Հայերն ալ գէշ մարդիկ ու ոճրագործներ ունեցած են եւ ունին իրենց մէջ, դուք վրէժ լուծեցիք ջարդարարներէն ու շարունակեցիք ահաբեկչութիւնը, որ մերժուած ու քննադատուած է միջազգայնօրէն: Վրէժխնդրութիւնն ալ ոճրագործութիւն է:

– Ներողութի՛ւն, հոս պէտք է, որ կանգ առնէք՝ ճշդում մը ընելու եւ կամ, աւելի ճիշդը, հարցը յստակացնելու համար: Այն, ինչ որ ըրին մեր ահաբեկիչները, յատկապէս անոնք, որ սպաննեցին Թալէաթը, Էնվէրն ու անոնց ընկերները, այդ մէկը վրէժխնդրութիւն չէր...

– Հապա ի՞նչ էր...

– Այդ մէկը արդարադատութեան հատուցում էր, տեսակ մը աստուածահաճոյ արարք, այն իմաստով, որ մաքրագործուեցան անոնք, որոնց սերմերը՝ ժառանգները, կրնային ապագային ոչնչացնել այլ ազնիւ ցեղեր ու ազգեր եւս...: Իսկ ինչ կը վերաբերի վրէժխնդրութեան, այդ մէկը ուրիշ բան է արդէն:

– Եթէ վրէժխնդրութիւն չէ ահաբեկումը, հապա ի՞նչ է:

– Մեր պարագային մեր ազգային վրէժը կը լուծուէր, եթէ երբէք վառելանիւթով ողողէինք ամբողջ Թուրքիան ու այրէինք զայն՝ ծայրէծայր մաքրագործելով երկրագունդը թրքական վայրըսեէն...:

Օսմանը սահմոկած էր, ոտքի ելաւ, աչքերը լայն բացած՝ գոչեց.

– Ահաւոր է այս մէկը, այդքա՞ն կ'ատէք մեզ...:

– Ինչո՞ւ, միայն մե՞նք է, որ կ'ատենք ձեզ: Կը տեսնե՞ս այս երկրարկանի շէնքը, որ չոր ու անհրապոյր գիծերով կառուցուած է հրապարակին մէջտեղը: Գիտե՞ս, թէ ո՞վ բնակած է անոր մէջ:

– Գիտեմ, Վենետիկի դահճապետին բնակարանն է, սակայն ի՞նչ կապ ունի մեր զրոյցին հետ:

–Վենետիկի բոլոր շէնքերը իրարու փակած են եւ շրջապատուած դրացիներով՝ բացի այս մէկէն: Ո՛չ ոք ուզած է դրացի ըլլալ դահճապետի մը: Թուրքիան շրջապատուած է եօթը երկիրներով, անոնք բոլորն ալ թշնամիներ են, բոլորն ալ կ'ատեն թուրքը: Երբէք մտածո՞ւմ էք այս մասին... մտածո՞ւմ էք, թէ ինչո՞ւ թուրքը բարեկամ-դրացի չունի...:

– Նախ՝ բոլորը չեն, օրինակի համար՝ վրացիները, որոնք քրիստոնեայ են, լաւ են մեզի հետ...:

– Խօսքս ժողովուրդներու մասին է եւ ոչ՝ պետական կամ դրացիական յարաբերութիւններուն, որոնք փոխադարձ շահերու վրայ հիմնուած կ'ըլլան ընդհանրապէս: Հնարաւոր է, որ Հայաստանն ալ բարիդրացիական կապեր հաստատէ Թուրքիոյ հետ, սակայն հայը պիտի չդադրի ձեզ ատելէ՝ մարդասէր ու մարդկայնական ըլլալով հանդերձ:

– Ահաւո՞ր է, ահաւո՞ր...:

– Սակայն դուք պէտք չունիք վախնալու մեզմէ, ըսել կ'ուզեմ՝ հայերէն: Դուք ձեր արիւնէն է, որ պէտք է վախնաք, այն արիւնէն, որ թրքական է եւ ակամայ կը հոսի հայկական երակներու մէջ:

– Դարձեալ չեմ հասկնար...

– Քու պապերդ բռնաբարեցին ու լլկեցին նաեւ մեր մայրերը, քոյրերն ու մանաւանդ մանկամարդ աղջիկները: Ողջ մնացած այդ աղջնակներէն որոշները թրքական սաղմը կրեցին իրենց մէջ յաճախ անգիտակցաբար: Եղան մայրեր, որոնք իրենց ձեռքերով իրենց երեխաները խեղդեցին, եղան նաեւ ուրիշներ, որոնք անսալով իրենց մայրական բնազդին՝ սնուցին թրքական արիւնը հայու մէջ: Ահաւասիկ այդ արիւնէն է, որ դուք կը վախնաք: Դուք գիտէք, թէ հայը վրէժխնդիր չէ, այլ՝ ստեղծագործ ժողովուրդ: Կան Սինան փաշային, Պալեաններուն եւ շատերու օրինակները:

– Սինանը, այո՛, մեր ճարտարապետութեան փառքն է...

– Սինանը հայ էր եւ միակ հայը չէ, որ թրքական մշակոյթի փառքերէն կը համարուի: Դուք զայն դաստիարակեցիք իբրեւ ենիչերի, այսինքն՝ իբրեւ մարդասպան, սակայն ան հայ էր եւ դարձաւ ստեղծագործող ճարտարապետ: Իսկ այն բոլոր թրքական սաղմերը, որոնք դրուեցան հայ ժողովուրդի մէջ, վտանգ են ձեզի համար: Այն իմաստով, որ յանկարծ անոնցմէ մէկը կրնայ հասնիլ ղեկավար դիրքի եւ ուզէ վրէժ լուծել թուրքերէն. ո՛չ արհեստագիտութիւնը կը պակսի հայուն եւ ո՛չ ալ քաջութիւնը... հետեւանքը կրնաք երեւակայել: Երբ հայ Սինանը վերադարձաւ իր արմատներուն, գիտակցաբար դարձաւ ստեղծագործող, իսկ եթէ ծագումով թուրք հայ ղեկավարը դառնայ իր արմատներուն... անգիտակցաբար ի՞նչ կրնայ ըլլալ...:

– Մովսէս, եղբա՛յր, ես կ'ուզէի քեզ տեսնել ցաւդ կիսելու համար, սակայն դուն զիս կը մղես ազգային ինքնապաշտպանութեան: Դուն կը խօսիս քաջութեան մասին, կը կարծես, թէ թուրքին կը պակսի՞ այդ քաջութիւնը...:

– Ներողութի՛ւն, քաջութիւնը տեղ մը վեհանձնութիւն կ'ենթադրէ, իսկ վայրագութիւնը տակաւին քաջութիւն չէ, դուք ոչ թէ քաջ էք, այլ ռազմատենչ, որ հիմնուած է վախկոտութեան, անգթութեան ու մանաւանդ ընչաքաղցութեան վրայ...:

– Մենք վախկո՞տ, ըսել կ'ուզես՝ թուրքը վախկո՞տ ժողովուրդ է...:

– Ըսել չեմ ուզեր, այլ այդպէս է: Դուք ձեր յանցանքներէն է, որ կը վախնաք: Յանցագործ ժողովուրդը կը կռուի թալանի, բռնագրաւման եւ կամ բռնաբարելու համար, բոլորն ալ անասնական պահանջները գոհացնելու կը ծառայեն, իսկ քաջը կը կռուի ինքնապաշտպանութեան, պատուախնդրութեան եւ թէկուզ ուրոյն մշակոյթ մը ապրեցնելու համար:

– Բայց մեր պատմութիւնը...

– Ձեր պատմութիւնը կը վկայէ, թէ վերջին երկու հարիւր տարիներու ընթացքին ոչ մէկ յաղթանակ արձանագրած է թուրքը... դուք ռազմատենչ էք, բայց ռազմունակ չէք, վայրագ էք, բայց քաջ չէք...: Ասոնք տարբեր բաներ են...:

– Ինչպէս չէ, մի՛ մոռնար, որ...:

– Գիտեմ, կ'ակնարկէք Առաջին համաշխարհային պատերազմի վերջաւորութեան յոյներու դէմ տարած ձեր յաղթանակին, նախ՝ այդ մէկը մասնակի երեւոյթ է եւ ապա՝ մի՛ մոռնաք, որ դուք յաղթեցիք շնորհիւ ֆրանսացիներու եւ յատկապէս անգլիացիներու օգնութեան: Դուք նոյնիսկ չկրցաք յաղթել ժողովուրդի մը, որ ջարդուած, տկարացած ու քամուած էր թէ՛ ֆիզիքապէս եւ թէ՛ հոգեպէս: Եւ Մուսա լերան վրայ, եւ Սարդարապատի մէջ խայտառակօրէն պարտուեցաք: Սարդարապատի եւ Մուսա լերան վրայ կռուող ձեր սպաներն իսկ կը վկայեն հայ ժողովուրդի քաջութեան մասին:

– Թուրքը վախկո՞տ, չեմ կրնար երեւակայել... իսկ եթէ պատահի, որ այսօր պատերազմ սկսի մեր եւ ձեր միջեւ...

– Անկասկած, որ դուք պիտի պարտուիք...

– Ծիծաղելի է, Մովսէս, իսկապէս այդպէ՞ս կը հաւատաս, քեզի նման մտածողները շա՞տ են հայերու մէջ...:

– Ծիծաղելին այս մակերեսային դատումն է, որուն համաձայն՝ ժամանակաւոր յաղթանակները կու գան ու կ'երթան...: Այո՛, հակառակ ձեր թուաքանակի եւ ռազմական արհեստագիտութեան տարբերութեան՝ ի վերջոյ դուք դատապարտուած էք պարտութեան: Բացատրեմ: Քիւրտերը ամէնէն տկար, աղքատ, անուս եւ ռազմականօրէն թոյլ ժողովուրդ են, դուք՝ ընդհակառակը, դուք ձեզ Եւրոպայի մակարդակին կը դասէք բազմակողմանիօրէն: Կրցա՞ծ էք, կրնա՞ք ընկճել եւ կամ ծունկի բերել զանոնք: Չէ՞ք կրնար ու պիտի չկրնաք ալ, եւ գիտէք՝ ինչո՞ւ...:

– Ինչո՞ւ...

– Մարդը, իբրեւ բանական արարած, արժէք մը ունի, այդ արժէքը կախեալ չէ իր մտային կարողականութենէն, իր ուժէն, իր հարստութենէն, ուսումէն եւ կամ հագած հագուստէն: Այդ արժէքը կայ, անվիճելի է, մարդու «ես»-ն է, ատիկա իր ինքնուրոյնութիւնն ու գոյութեան իմաստն է: Երբ մարդ դուրս կու գայ պայքարի՝ այդ ԱՐԺԷՔԸ պաշտպանելու, կը դառնայ անպարտելի, նոյնիսկ եթէ ցեղասպաններ, ծայրահեղ անգութ ըլլալով, որոշեն ոչնչացնել զայն:

– Մենք ծայրահեղօրէ՞ն անգութ ենք...

– Այո՛, եւ ձեր անգթութիւնը ու անխղճութիւնը վաւերացուած են պատմականօրէն ու կնքուած ձեր մեծագոյն սուլթանի՝ Սելիմ Բ.ի կողմէ:

– Ինչպէ՞ս...

– Սուլթան Սելիմ Բ.ն չորս արու զաւակ ունէր, ան իրմէ ետք աւելի զօրաւոր սուլթան մը ունենալու եւ յատկապէս միահեծան իշխանութիւն հաստատելու համար մասնագէտ խորհրդատուներու միջոցով ընտրեց ամենաառողջ, ամենախելացի եւ ամենաանգութ զաւակը՝ իբրեւ իրեն արժանի յաջորդ, իսկ միւսները տարբեր միջոցներով եւ տարբեր առիթներով սպաննել տուաւ: Ան նոյնիսկ չյարգեց իր սեփական զաւակներուն անվիճելի իրաւունքը, անոնց ապրելու իրաւունքը: Եթէ այս է թուրքին հեռատեսութիւնն ու

հայրենասիրական դրսեւորումը, ապա բնականաբար ան բնաւ պիտի չմտածէ այլ անմեղներու ոչնչացումով եւ կամ անմարդկային չարչարանքներու մասին: Հոս Սուլթան Սելիմ Բ.ն պատմականօրէն անգթութեան չափանիշ կը սահմանէր: Իրմէ ետք ո՛չ Սթալինը եւ ո՛չ ալ մողոլներու արքան՝ Օրանկզէպը, կրցան գերազանցել զինք: Ինչպէս որ սուլթան Սելիմ Բ.ն ձախողեցաւ իր ապագայ ծրագիրներուն մէջ, այնպէս ալ դուք պիտի պարտուիք ու վերադարձնէք մեր հայրենիքն ու իրաւունքները, որովհետեւ մենք գիտենք գնահատել մարդկային անվիճելի արժէքները (նաեւ ձերը), իսկ դուք՝ ո՛չ: Ահաւասիկ, թէ ինչու դուք դատապարտուած էք պարտութեան:

– Կը փորձեմ թափանցել ձեր խօսքերուն խորքը, սակայն շատ բան երազային կը թուի ինծի, պէտք է իրապաշտ մօտեցում ցուցաբերել կեանքին հանդէպ, որ իրապէս դաժան է եւ անգութ...:

– Անկասկած, որ կեանքը դաժան է ու անգութ, սակայն երբ մարդու անուրանալի եւ անվիճելի արժէքները չեն գնահատուած, երբ ներքնապէս խոցուած արժանապատուութեան տէր ազգեր ելած են սրբազան պայքարի, յաճախ անոնց երազները իրականութիւն դարձած են...

– Ես գիտեմ, որ խոցուած ու ցաւոտ սիրտն է, որ կը խօսի իւրաքանչիւր հայու մէջ, ես չեկայ հետդ վիճելու, այլ եկած էի քեզմէ ներողութիւն խնդրելու...

– Օսմա՛ն, ես կը համակրիմ քեզի, հայրս կ՚ըսէր, թէ ինք հաւատարիմ թուրք ընկերներ ունեցած է, բոլոր թուրքերը չէ, որ վատ են, սակայն եթէ Քրիստոս ծնած ըլլար Հայոց ցեղասպանութենէն ետք, կը կարծե՞ս, թէ պիտի ներէր ձեզի: Եւ ապա կը կարծե՞ս, թէ ցեղասպանութիւնը ճանչնալով եւ ներողութիւն խնդրելով՝ հարցը կը վերջանայ, թէ նո՛ր կը սկսի...: Հապա հատուցո՛ւմը, արիւնը, որ թափեցաւ, մարդկային եւ մշակութային կորուստնե՛րը, որոնք համեմատական են: Ներողութիւն խնդրելէ առաջ մտածա՞ծ էք այս մասին: Այն երկիրները, որոնք այսօր կը ճանչնան ցեղասպանութեան իրողութիւնը, կը կարծե՞ս, որ իրապէս մարդկային արժէքներով օժտուած են, թէ... Այո՛, անոնց շատերու աչքերուն առջեւ եւ նոյնիսկ ոմանց գիտակցութեամբ տեղի ունեցաւ Եղեռնը, սակայն այս մէկը եւս չի նսեմացներ ձեր արարքին տարողութիւնն ու յանցանքը: Դուք ձեր պապերուն սխալը կրնաք դարմանել միայն ու միայն արդար եւ ամբողջական հատուցմամբ... Գարեջուրը վերջացած էր, հրապարակին լամբերը, իբրեւ լուսատու, սկսած էին իրենց ուժը կորսնցնել: Վաղ առաւօտեան Բորեասը արթնցած էր, ու վենետիկեան գարշահոտը կը յամենար: Այնքան քրտնած էի, որ պէտքը կը զգայի ներքնաշապիկս փոխելու: Օսմանը ոտքի ելաւ: Ես ալ: Օսմանը ձեռքս սեղմեց երկու ձեռքով, ես ձախ ձեռքս անոր աջ ուսին դրի եւ իրարու նայեցանք անխօս: Երկուքս ալ գլուխնիս շարժեցինք իբրեւ հաւանութեան նշան: Ի՞նչ բանի հաւանութիւն կու տայինք, չե՛մ գիտեր: Օսմանը գիտէ՞ր. դժուար թէ: Անոր աչքերը, որոնք կարեկցանքէ աւելի սարսափ կ՚արտայայտէին, թաց էին ու կարմրած: Մարդ էր Օսմանը, լաւ մարդ, լաւ թուրք: Ես շատ առաջ գացած էի, քան պէտք էր: Առնուազն այդպէս կը զգայի բաժանման պահուն: Ան քանի մը քայլ յետընթաց երթալէ ետք շտկուեցաւ ու ձեռքով մնաք-բարովի նշան տալով՝ մեկնեցաւ... Մինչ Օսմանը կը հեռանար, վենետիկեան առաւօտեան անդորրութեան մէջ հեռո՛ւն, շա՛տ հեռուն շուն մը կը կաղկանձէր...

Հայ հեղափոխության նահապետի գործն ու պատգամը
(Քրիստափոր Միքայելյանի հիշատակին)

Անի Մելքոնյան
Պատմաբան

«Մեծ մարդը – սպասուելիք օգնութիւնն է, մխիթարութիւնը, Մեսսիան, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կ'ուղարկէ այս կամ այն ժողովրդի եւ կամ մարդկութեան համար: Մեծ մարդը – պարզատես, վշտակիր, հերոս երեւալով՝ հոգեբանօրէն կը փոխի իր միջավայրը: Նրանով կ'արժէքաւորուի, կ'իմաստնանայ, կը վեհանայ կեանքը: Նրա խօսքը կ'ազդէ՝ որպէս հրեշէկ կայծը՝ բռնկեցնելով իրեն հետ առնչող սրտերն ու զգացումները: Նրա ներկայութիւնը կ'ազնուացնէ, կը թեւաւորէ, կը գօտեպնդէ հոգիները:

Նրա շնորհիւ անկարելին կը դառնայ միայն դժուարին, դժուարինը՝ կարելի: Երազները կը դառնան նպատակ, նպատակները՝ իրականութիւն: Կը փոխէ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը...

Քրիստափորը կը փրկէ հայ պատմութեան պրէստիժը:

Մեղմ ասած՝ շնորհիւ Քրիստափորի օտար լծերի տակ ստրկօրէն հոգեւարող, հոգեւոր հօտի փոխարէն՝ այսօր կայ անկախ եւ ստեղծագործ քաղաքական ժողովուրդը եւ յաւիտենական արժէքներից Մայիսի 28-ը:

Այսօր քսաներորդ դարի շեմքում կանգնած հայութիւնը նախայեղափոխական շրջանի ստրուկների եւ առեւտրական միջնորդների արհամարհուած հօտը չէ, որին աշխարհը կը զլանար անկախութեան իրաւունքը, այլ մարդկութեան գնահատականին արժանացած քաղաքական մի ժողովուրդ՝ վիրաւոր, բայց ազատ հայրենիքն ունենալու իրաւունքը ձեռքին:

Մի ժողովուրդ, որը Քրիստափորի թողած անմեռ արժէքների գիտակցութեամբ եւ պաշտամունքով կը շարունակէ գոռալ մարդկութեան երեսին. «ոչ ոքի ի վնաս, իմ եւ մարդկութեան երջանկութեան համար անկախ ապրիլ կ'ուզեմ»:

«Փառք հայ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը եւ պատմութիւնը վերաստեղծող Մեծ Քրիստափորին»[1],– այս խոսքերը Գարեգին Նժդեհը ձոնել է հայ ազատագրական պայքարի գաղափարախոս, կազմակերպիչ և առաջնորդ Քրիստափոր Միքայելյանին, մարդու, որի խոսքն ու գործը ազգային և հեղափոխական մտքի դաստիարակության դպրոց են, սերունդ կրթելու լավագույն վարդապետություն, օրինակ և ճանապարհ:

Հայ հեղափոխության նահապետը, մարդակերտ, փոքրամարմին հսկան ծնվել է 1859 թ. հոկտեմբերի 18-ին հայկական Նախիջևանի Գողթն գավառի Վերին Ագուլիս գյուղում: Երեք տարեկանում Քրիստափորը կորցրել է մորը, իսկ տասը տարեկանում՝ հորը:

Տասնմեկ տարեկանում թեմական դպրոցի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ նա տեղափոխվում է Թիֆլիս՝ ուսումը շարունակելու, որն ավարտելուց հետո վերադառնում է հայրենի Վերին Ագուլիս՝ ուսուցչություն անելու: «Դպրության գործին համահավասար նա զբաղվում էր ժողովրդական լայն զանգվածների դաստիարակության գործով: Քրիստափորը կազմակերպում էր կանանց, երիտասարդների, արհեստավորների ինքնազարգացման խմբեր»[2], ասել է, թե՝ կրթում էր հասարակության բոլոր շերտերին, ինչը չէր կարող իր դրական ազդեցությունը չթողնել ազգային-ազատագրական պայքարի հետագա զարգացման վրա:

1885 թ. ցարական կառավարությունը առաջին անգամ որոշեց փակել հայկական դպրոցները, ինչը ազդակ եղավ, որպեսզի Քրիստափորն ամբողջապես նվիրվեր ազգային դատին: Այդ նպատակով նա մեկնեց Մոսկվա՝ ուսումը շարունակելու: Քրիստափորը նյութական միջոցներ չուներ, և այս հարցում նրան աջակցում է ժամանակի հայության ոգին՝ ազատագրական պայքարի գաղափարական ակունքները ձևավորած Րաֆֆին, որը բացառիկ ուշադրություն և հայրական գուրգուրանք էր տածում Քրիստափորի հանդեպ:

Իր մոսկովյան բարեկամ Մելքոն Փանյանին Րաֆֆին գրում է. «Պ. Միքայելյանը լավ վարժապետ է, իսկ նրա բարոյականության մասին կարող եք հավատացած լինել, որ ամենապատվական երիտասարդ է»[3]:

Քրիստափորը Կովկաս վերադարձավ 1888 թ., «երբ խմորում էր մտաւոր եւ յեղափոխական մի ուժգին շարժում թրքահայերի օգտին: Նա անմիջապէս նետուեց այդ հոսանքի մէջ ու մի քանի ընկերների հետ յղացաւ միտք՝ հիմնելու յեղափոխական մի մեծ կուսակցութիւն – Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ունենալով իբրեւ օրգան «Դրօշակը»[4]:

Սրա մասին մանրամասները՝ մի փոքր ուշ, այժմ այն մասին, թե ինչ տրամադրություններ էին այդ օրերին Կովկասում:

19-րդ դարի երկրորդ կեսին ռուսահայ երիտասարդության սիրտն ու միտքը ուղղված էր նրան, թե ինչպես աջակցել Օսմանյան Թուրքիայի բարբարոսական լծի տակ օր օրի մաշվող արևմտահայության փրկության գործին:

Ռաֆֆու, Ծերենցի, Պատկանյանի ու Գրիգոր Արծրունու գաղափարներով տոգորված կովկասահայ երիտասարդությունը, հատկապես Թիֆլիսում ու Շուշիում, անհանգիստ եռուզեռի մեջ էր:

Թեև արդեն տարածում էին գտել «մշակական հոսանքը», «Արմենիայի» գաղափարները և Հնչակյան կուսակցության քարոզչությունը, բայց դրանցից ոչ մեկը ազգային գաղափարներով սնված կովկասահայ երիտասարդության համար միավորող գործոն չեղավ:

Այդ դերը ստանձնեց «Երիտասարդ Հայաստան» խմբակը (որն այլ կերպ կոչվում էր նաև «Յուժնիե նոմերա», որովհետև նրա անդամների մի մասը «Յուժնիե նոմերա» հյուրանոցում էին հավաքվում): Այս խմբակը պետք է դառնար Հայ Յեղափոխական Դաշնակցության նախակարապետը:

Իր առաջին վճռական քայլերն անող ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ բախտորոշ էր 1890 թ. ամառը (հուլիս-օգոստոս ամիսներ), երբ հեղափոխականորեն տրամադրված տարբեր խմբերի հետ ժողովների արդյունքում ծնունդ առավ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը:

Ծանր երկունքով ծնունդ առավ Դաշնակցությունը՝ հանդիպելով տարբեր մոտեցումներ ու աշխարհընկալումներ ունեցող երիտասարդների բուռն վեճերին. «Ծրագրված վեճերը շարունակվում էին շաբաթներ, ամիսներ, ամեն մեկը համարում էր իրեն անսխալական և չէր ուզում որևէ զիջումներ անել: Քրիստափորն էր, որ շնորհիվ իր հմայիչ բնավորության միջնորդ հանդիսացավ խմբակների մեջ և ամենից շատ նպաստեց Հայ Յեղափոխական Դաշնակցության կազմվելուն»[5]:

Դաշնակցության հիմնադրմանը մասնակցում էին «…. ամէն գոյնի ու գաղափարի մարդիկ…»[6], որոնք քաղաքական, սոցիալական հայացքներով, գաղափարախոսական «հոսանքներով» տարբերվում էին միմյանցից, բայց «բոլոր այդ երիտասարդներուն համար նոյնն էր օրուան հրատապ կարգախօսը,– թրքահայութեան ազատագրումը յեղափոխական կռուի ճամբով:

Քրիստափոր Միքայելյան

Ուստի շնորհիւ իր ուժեղ անհատականութեան Քրիստափոր Միքայէլեան՝ Սիմօն Զաւարեանի անմիջական գործակցութեամբ յաջողեցաւ 1890 Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն ընթացքին, այդ հասարակ յայտարարին շուրջ համախմբել եւ ստեղծել «Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը»»[7]:

Նետվելով ազգային-ազատագրական պայքարի հորձանուտի մեջ և «տասը տարի շարունակ Կովկասում շրջապատուած ամէն տեսակ նեղութիւններով՝ նա եղավ Դաշնակցութեան հոգին»[8]:

Կյանքի դժվարին պայմաններն ու անվերջանալի թվացող զրկանքները չփոխեցին Քրիստափորին, և ինչպես Ավ. Ահարոնյանն է իրավացիորեն շեշտում. «Ամբոխային այն եղկելի ու մեղկ մտածումը, թե կյանքը, դժվարին պարագաները փոխեցին մարդուն, Քրիստափորին մինչև իր մահը անծանոթ մնաց, քսան, թե քառասուն տարեկան Քրիստափորը բացարձակապես նույն գաղափարապաշտն է»[9], և նաև դրա շնորհիվ է, որ Քրիստափորի գործունեությունը միայն հեղափոխական ու քաղաքական չէր, նա շարունակում էր կրթել, գրել, դաստիարակել և ուղղություն ցույց տալ, նա հայ երիտասարդությանը ուղղորդում էր դեպի ազգային խնդիրներ՝ «դեպի Երկիր»:

Ներազգային գործունեությանը զուգահեռ Քրիստափորը հսկայական աշխատանք կատարեց նաև միջազգային ասպարեզում հայանպաստ հասարակական կարծիք ձևավորելու գործում:

Նրա ջանքերով 1900 թ. նոյեմբերին Փարիզում հիմնադրվեց ֆրանսալեզու «Pro Armenia» թերթը, որին աշխատակցում և թղթակցում էին այնպիսի հեղինակավոր քաղաքական, հասարակական գործիչներ, ինչպիսիք էին Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորե-

Ռաֆֆի

սը, Ժորժ Կլեմանսոն, Ֆրանսիս դը Պրեսանսեն և ուրիշներ: Թերթի խմբագիր էր նշանակվել նույնպիսի նշանավոր գործիչ Պիեռ Քիյարը: Քրիստափորի ակտիվ ջանքերով թերթը նպատակ ուներ շուրջը համախմբելու Եվրոպայի հայտնի հայասերներին և պաշտպանելու ու առաջ մղելու Հայ դատը: Թերթը հաջողությամբ իր առաքելությունն իրականացրեց նաև Քրիստափորի ողբերգական մահվանից հետո՝ մինչև 1914 թվականը:

Եվրոպական պետությունների և ցարական Ռուսաստանի «Հայկական հարցում» վարած երկդիմի քաղաքականությանը զուգահեռ, երբ հայ հեղափոխականները հուսահատ կռիվ էին մղում արևմտահայության փրկության համար, թուրքական ցեղասպանական քաղաքականությանը 1894-1896 թթ. զոհ գնացին 300.000 հայեր, ինչը էլ ավելի բորբոքեց հայության ցասումը:

Հայությունը վրեժխնդրությամբ էր լցված՝ մինչև օձիքը քրիստոնյա ժողովուրդների արյան մեջ թաթախված գազանի՝ «մեծ մարդասպան» Աբդուլ Համիդ 2-րդի նկատմամբ, և նրան ահաբեկելու մտքեր էին խմորվում:

Արյունոտ սուլթան «Աբդուլ Համիդին ոչնչացնելու նպատակին իրեն հատուկ անսպառ եռանդով ձեռնամուխ է լինում Քրիստափոր Միքայելյանը»[10]:

Եկավ վճռական պահը, և Դաշնակցության Սոֆիայի ընդհանուր ժողովը (1904 թ. հունվար) Պոլսում ու Իզմիրում ցուցական գործունեությունը վերսկսելու որոշում ընդունեց, իսկ Պոլսի ցուցական գործունեությունը «դաւ մըն էր սուլթան Համիդի կյանքին դեմ»[11], և ՀՅԴ-ն «այո» ասաց Քրիստափորի ծրագրին ու գործի անցնելով արյունոտ սուլթանի դեմ՝ «նա հղանում է ազգերի պատմության մեջ արձանագրված ամենախիզախ դավադրություններից մեկը, և ինքն էլ ամբողջ էությամբ նվիրվում այդ հանդուգն ձեռնարկի իրականացմանը»[12]:

Սամուել Ֆայն կեղծանվամբ ծպտված Քրիստափորը 1904 թ. մինչև 1905-ի գարունը շրջում է Թուրքիայում ու Բալկաններում, ուսումնասիրում միջավայրը ու մշակում ծրագրեր. «Վտանգի ենթարկելով իր կյանքը՝ Քրիստափորը բազմիցս թափանցում է սուլթանի նստավայրը, ներկա լինում Սելամլըքի արարողություններին՝ ճշտելով ամենաչնչին մանրուքն անգամ»[13]:

Ցավոք սրտի, Քրիստափորին վիճակված չէր իրագործել իր ծրագիրը:

Հեղափոխության տեսաբանն ու առաջնորդը որոշել էր անձամբ մասնակցել նռնակների պատրաստությանը, որոնցով ծրագրված էր ոչնչացնել հայության դահիճ սուլթանին: 1905 թ. մարտի 17-ին Բուլղարիայի Վիտոշ լեռան լանջին հնչած ձեռնառումբերի պայթյունը ցնցող ազդեցություն ունեցավ հայ հեղափոխականների համար. իր գործակից Վռամշապուհ Քենտիրյանի հետ փորձարկման ժամանակ նահատակվել էր Ավ. Իսահակյանի բնորոշմամբ՝ հեղափոխության մարգարեն՝ Քրիստափորը….

Քրիստափորի նահատակվելուց չորս ամիս անց «Ելտրզի ռումբը» պայթեց, ու թեև ցանկալի արդյունքը չունեցավ՝ սուլթանը պատահականորեն ողջ մնաց, բայց այդ ռումբի ձայները ցնցող ազդեցություն ունեցան ազատագրական պայքարի առաջնորդի նահատակությունից հուսալքված հայության վրա:

Քրիստափորը նահատակվեց, իսկ նրա խոսքն ու գո՞ործը, նրա գաղափարնե՞ը:

Հայության համար կենաց ու մահու կռվի այդ օրերին սեփական «ես»-ից այն կողմ ոչինչ չտեսնողները թուրքական բռնապետությունում հայության կոտորածների մեղավոր համարում էին ոչ թե թուրքական ոճրագործ պետությանն ու արյունոտ սուլթանին, այլ հայ հեղափոխությանը: Այս իմաստազուրկ դատարկաբանությանը Քրիստափորը «Ամբոխային տրամաբանություն» հոդվածում տալիս է հստակ պատասխան՝ իրավացիորեն նշելով, որ այդ մեղադրանքները «ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիճաղանջ ճիչեր… դրանք բոլորը խղճուկ մտքի արտայայտութիւններ են, որոնց տակ թաքնուում է կամ փափուկ կեանքի սիրահար հակայեղափոխականի դժգոյն ու անտարբեր դէմքը, կամ թէ եսամոլ իմաստակի աղքատիկ հոգին»[14]:

Ամբոխային տրամաբանության դրոշակակիրները չէին կարող կամ համառորեն չէին ուզում տեսնել այն ակնհայտ ճշմարտությունը, որի մասին ահազանգում էր Քրիստափորը. «Հայկական կեանքը վաղուց եկել, կանգ էր առել մի խոշոր տիլեմայի առաջ – կամ անպայման բնաջնջում՝ իբրեւ մի ամբողջութիւն, իբրեւ մի հայրենիքի տէր ժողովուրդ, կամ թէ դիմադրութիւն՝

կեանք, պատիւ, ստացուածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի դէմ»[15]:

Եվ միթե այսօր էլ հայությունը նույն մարտահրավերների առջև չի կանգնած՝ բնաջնջում կամ դիմադրություն, և միթե ավելի քան մեկ դար անց հայության մի ստվար հատված նույնպիսի մահաբեր թմբիրի մեջ չէ, և միթե թշնամին նույն ցեղասպան բարբարոսը չէ, ինչպիսին քրիստափորյան օրերում էր, ուստի հարց է ծագում՝ ինչպե՞ս կարելի էր վերադառնալ նույն տագնապալի օրերին:

Կարելի՛ է, եթե երկրիդ ղեկավարները ամբոխային տրամաբանության ծնունդ են, դրա կրողն ու քարոզիչը:

Արևմտահայության մահավճիռն արդեն կայացված էր, և մինչ Քրիստափորն ու Դաշնակցությունը պայքարում էին պատմության անիվը այլ ուղղությամբ պտտելու և այդ մահավճռից հայությանը ազատելու համար, ժամանակի «առաջադեմ» «խաղաղասերները», այսպես կոչված, «միջին ուղիներ», «խաղաղ պատերազմ» էին առաջարկում ջարդի ու կոտորածի դեմ: Այս երևույթների մասին Քրիստափորը ասում է իր դիպուկ խոսքը. «Միջին ուղիների սիրահարները, ինչպէս վայել է իրենց, ի հարկէ, այստեղ էլ գտնում էին մի երրորդ ելք՝ կարծելով, թէ հայ ժողովուրդը իր կուլտուրական հակումների շնորհիւ յաղթող պիտի հանդիսանայ իրեն շրջապատող տխուր մթնոլորտում՝ առանց զէնքի դիմելու եւ դրանով պիտի աւետէ աշխարհին մի նոր սկզբունք, որ մարդկային պատմութիւնը իր ամբողջ տարածութեան վրայ միշտ անտես է արել, այն, որ կարելի է ազատութիւն ձեռք բերել լոկ «քաղաքակրթական խաղաղ պատերազմով»»[16]: Համեմատենք մերօրյա «խաղաղասերների» հետ, միթե նույն մտավոր գաճաճները չեն, որոնք նույն ցեղասպան գազանին փորձում են «դիմակայել» սնանկ ու կեղծ «խաղաղության օրակարգով»:

Իսկապե՞ս մերօրյա «խաղաղասերները» կարծում են, որ ցեղասպանությանը հնարավոր է դիմակայել՝ զինաթափվելով ու «ժողովրդավարություն և քաղաքակրթություն» խաղալով, հատկապես, եթե հետևողականորեն ջնջում են հազարամյակների քաղաքակրթությունը կամ հարմարեցնում այն թշնամու պահանջներին՝ քաղաքակրթական պատերազմ մղելով ավելի շատ հայության, քան թշնամու դեմ՝ համոզելով մեզ, որ «քաղաքակրթություն» նշանակում է «բացարձակ եւ անդարձ այլասերում, գարշելի հակումների մի «հրէական» կառուցվածք, մի այլանդակ, մի հրէշաւոր տիպ, որի առաջ միայն զգուանք պիտի զգայ ամէն մի օրինաւոր արարած,– ահա այն սոսկալի հեռանկարը, որ այսօր սպառնում է մեր ազգութեան գուցէ աւելի, քան երբեւիցէ»[17]: Նույն հեռանկարը չե՞ն այսօր Հայաստանում իշխողները «ապագա կա» կարգախոսի ներքո առաջարկում հայ ազգին՝ պղծելով ազգային բոլոր սրբությունները, դպրոցական ծրագրերով լայնատարած այլասերումի ճահիճն են ներքաշում նույնիսկ երեխաներին:

Ուստի Քրիստափորի գաղափարական հետնորդների ու հետևորդների պատմական առաքելությունն

Վիրոշ լեռը

ու պարտականությունը արտաքին թշնամու դեմ պայքարելուց զատ՝ նաև այդ զգվանք առաջացնող հակումների ու այլասերման դեմ պայքարն է, իսկ ինչպե՞ս: Պատասխանը դարձյալ տալիս է Քրիստափորը. «Ինչ միջոց կարող է ներկայ պայմաններում լինել ավելի նպատակայարմար այդ բարոյական այլասեռման դէմ կռուելու համար, քան յեղափոխական ուղին…»[18]:

Հայ հեղափոխության նահապետի ու ազատագրական պայքարի կնքահոր կյանքը, գործը, գաղափարն ու պատգամը պայքարն է՝ մշտական կռիվը և՛ արտաքին թշնամու, և՛ արատավոր բարքերի դեմ. «Յարատեւ կռիւ,– յաճախ եւ երկար ժամանակ գուցէ անյաջող՝ չնայած երբեմն նոյնիսկ իր լայն ծաւալին – ահա՛, թէ ուր է մեր փրկութեան բանալին: Պահպանե՞նք, շարունակե՞նք կռիւը, որպէս զի լայնանայ, ընդարձակուի եւ ընդարձակուելով՝ յարատեւի,– ահա՛ դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը»[19]:

Այսօր Հայաստանի թուրքական շահերի սպասարկու իշխանությունների և նրանց դաշնակից թուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ պայքարողներն իրենց պայքարի ճանապարհին պետք է ուղենիշ դարձնեն Քրիստափորի այն կարևոր դիտարկումը, որ «ոչ մի հասարակական շարժում չէ կարող յարատեւել եւ մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգերի մէջ, նրա ընդարձակ խաւերում»[20], ասել է, թե՝ այսօրվա պայքարի առաջնորդները պայքարի տարատեսակ միջոցներին զուգահեռ պետք է անեն այն, ինչին իրենց կյանքի մեծ մասը նվիրեցին ՀՅԴ հիմնադիրները՝ կրթել ժողովրդին, ընդ որում, ժողովրդի բոլոր շերտերին և կրթել ազգային գաղափարախոսությամբ, որի հիմքում կդրվի հայությանը թողած Քրիստափորի ազգային նպատակ հանդիսացող պատգամը. «Պատռել է հարկավոր քարտեզների վրա այս կամ այն ավազակապետի կամքով գծված սահմանները: Ջնջել է հարկավոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից և որոնք, առհասարակ,

մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատև են լինում:

Ոչ մի բռնություն, ոչ մի հալածանք, ոչ մի սահման չի կարող բաժանել մի ժողովրդի, եթե նա տոգորված է ընդհանուր շահերի գիտակցությամբ, ունի նաև կռվելու անսասան վճռողականություն և կապված, միացած է դարերով սնված ու պահպանված ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերով»[21]:

Միայն այս գաղափարախոսությամբ սնված ազգը կարող է գիտակցել, որ. «...Եթե իրավունքը իր պաշտպանության համար կռիվ է պահանջում, ապա կռիվը իր հաղթանակի համար նեցուկ պիտի ունենա ուժը: Ուժն է, որ կառավարում է այս աշխարհը, և մենք ձեռք կբերենք մեր ուզածները, երբ ուժ կունենանք»[22], իսկ ուժ ունենալու համար պետք է անսալ Քրիստափորի կամքին և ջնջել հայության միջև արտաքին թշմանու և ներքին տականքի ձեռքով գծված բաժանարար գծերը, կրթել հասարակությանը ազգային միասնության ոգով այն գիտակցությամբ, որ չկա առանձին գյումրեցի, երևանցի, վանաձորցի, այուսեցի, արցախցի, սփյուռքահայ, կա մեկ միասնական հայ ազգ, որի թշնամին նույնն է, հետևաբար ազգային նպատակն ու ուխտն էլ պետք է նույնը լինեն՝ ազգային հարատև կռիվ.... մինչև Քրիստափորի, Ռոստոմի, Զավարյանի, Արամի, Դրոյի, Նժդեհի ու նրանց գաղափարակից և զինակից ընկերների նպատակի իրագործումը՝ Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի իրագործումը:

Ավելի քան մեկ դար առաջ հայ հեղափոխության նահապետ Քրիստափորը պայքարի կոչ էր հնչեցնում, և այդ «կոչը արկածախնդրություն չէր, այլ ամուր համոզում, որ մի ժողովուրդ իր ստրկական վիճակից կործանման տանող ճանապարհից կարող է դուրս գալ միայն այն դեպքում, երբ ունակ կլինի ուժով և ինքնազոհողությամբ նվաճելու ազատությունը»[23]: Շատ արդիական ու իրատեսական կոչ նաև մերօրյա իրականության համար:

119 տարի է անցել հայոց հարատև կռվի գաղափարական կնքահայր Քրիստափորի նահատակությունից, բայց նա այսօր էլ հայոց պատմության հավերժական էջերից պայքարի կոչ է հնչեցնում, և այդ կոչով կրթված ու դաստիարակված «պիտի գան նորերը՝ աւելի ուժեղները, պիտի գան աւելի վճռական սերունդներ, ու կռիւը պիտի շարունակուի»:

Ծանոթագրություններ

1. «Հայաստան», ազգային, գրական, քաղաքական շաբաթաթերթ, Սոֆիա, 1924, յուլիս 4:
2. Մազմանյան Պ., Քրիստափոր Միքայելյան, էջ 227, https://arar.sci.am/dlibra/publication/182565/edition/165796/content:
3. «Արարատ», էջմիածին, 1913, № Զ, էջ 584:
4. Քիյար Փ., Քրիստափոր Միքայէլեան, Փարիզ, 1905, Յեղափոխականի մտքերը, Պէյրութ, 1981, էջ 22:
5. Քրիստափոր Միքայելյան, https://www.youtube.com/watch?v=LHGJnPSDqWc&t=1045s:
6. Վարանդեան Մ., Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 55:
7. Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988, էջ 20-21:
8. Քիյար Փ., Քրիստափոր Միքայէլեան, Փարիզ, 1905, Յեղափոխականի մտքերը, Պէյրութ, 1981, էջ 22:
9. Ահարոնեան Ա., Երկերի ժողովածու, Քրիստափոր Միքայէլեան, Թէհրան, 1982, հ. Ե., էջ 280:
10. Գրիգորյան Հ., Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Հայագիտական հանրագիտարան, էջ 11, http://www.armin.am/images/menus/2406/H_Grigoryan.pdf:
11. Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք)՝ նվիրված Հ.Յ.Դ. 113-ամյակին, Բ հատ., էջ 383:
12. Գրիգորյան Հ., Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), Հայագիտական հանրագիտարան, էջ 12:
13. Նույնը, էջ 12-13:
14. Միքայէլեան Ք., Ամբոխային տրամաբանութիւն, Յեղափոխականի մտքերը, Պէյրութ, 1981, էջ 64:
15. Նույնը, էջ 70:
16. Նույնը, էջ 70-71:
17. Միքայէլեան Ք., Պատմական չարիք, Յեղափոխականի մտքերը, էջ 158:
18. Նույնը, էջ 159:
19. Միքայէլեան Ք., Ամբոխային տրամաբանութիւն, Յեղափոխականի մտքերը, 124:
20. Միքայէլեան Ք., Յեղափոխականի մտքերը, Ժընեւ, 1906, էջ 48:
21. Քրիստափոր Միքայելյան, https://www.youtube.com/watch?v=LHGJnPSDqWc&t=1045s:
22. 1905 թ.-ի մարտի 17-ի Վիտոշի խորհուրդը և Քրիստափորյան ավանդը, http://armenian-community.ge/News/434:
23. Քրիստափոր Միքայելյան, https://www.youtube.com/watch?v=LHGJnPSDqWc&t=1045s:

Օգտագործված գրականություն

ա) Գրականություն

1. Ահարոնեան Ա., Երկերի ժողովածու, Քրիստափոր Միքայէլեան, Թէհրան, 1982, հ. Ե.
2. Միքայէլեան Ք., Յեղափոխականի մտքերը, Դ, տպագրութիւն, Պէյրութ, 1981
3. Միքայէլեան Ք., Յեղափոխականի մտքերը, Ժընեւ, 1906
4. Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք)՝ նվիրված Հ.Յ.Դ. 113-ամյակին, Բ հատ.
5. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992
6. Տասնապետեան Հ., Հ.Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), Աթէնք, 1988

բ) Մամուլի նյութեր

1. «Արարատ», էջմիածին, 1913, № Զ
2. «Հայաստան», ազգային, գրական, քաղաքական շաբաթաթերթ, Սոֆիա, 1924, յուլիս 4

գ) Համացանցի նյութեր

1. https://arar.sci.am/dlibra/publication/182565/edition/165796/content
2. http://www.armin.am/images/menus/2406/H_Grigoryan.pdf
3. http://armenian-community.ge/News/434
4. https://www.youtube.com/watch?v=LHGJnPSDqWc&t=1045s

Հանուն հայության վաղվա օրվա

Մարգարիտա Խաչատրյան
Բանասիրական գիտությունների դոկտոր

««Համազգայինի» (յուշեր, վկայութիւններ, խորհրդածութիւններ եւ մտածումներ)» գիրքը («Վահէ Սէթեան» հրատարակչատուն, 2023) անդրադարձ է հայակենտրոն ու հայապահպան այս միության մոտ մեկդարյա պատմության էջերին: Շնորհավորական ուղերձների մեջ ոչ միայն գնահատվում է համահայկական այս մեծ միության գործունեությունն անցած տասնամյակների ընթացքում, այլև խոսվում է ներկայի ու ապագայի հեռանկարի մասին: «Հատորը լոյս կը տեսնէ մեկենասութեամբ «Համազգայինի» բարեկամի մը՝ ի յիշատակ հրատարակչատան վաստակաշատ նախկին տնօրէն Երուանդ Մոնոֆարեանի» արձանագրումը հուզիչ է և հաստատում է՝ «Համազգայինի» տևական գոյության հիմքերից կարևորագույնները նվիրումն ու անսակարկ ծառայությունն են, որոնց հետ զուգահեռվում են արժանավորների գործը գնահատելու ավանդույթը և անանուն նվիրաբերումները: Հազարավոր օրինակներին գումարվում է այս գիրքը, որտեղ ներկայացված է միության անդամներից մի քանի տասնյակի խոսքը:

«Համազգայինի» կեդրոնական վարչության ատենապետ Զաքար Քեշիշյանի շնորհավորական ուղերձում հիշատակվում են միության հիմնադիր «լուսամիտ այրերի»՝ Նիկոլ Աղբալյանի, Լևոն Շանթի, Համո Օհանջանյանի, Գասպար Իփեկյանի, Սիմոն Վրացյանի պայծառ անունները: Այս «մարգարէատիպ» ՀԱՅ մարդկանց սկսած գործն այսօր շարունակում են համահայկական միության տասնինը շրջաններում ամեն օր գործող հայ մարդիկ, որոնց բաժին է ընկել «հայութեան համար ամէնէն դժնդակ եւ օրհասական օրերուն» աշխատելու տքնանքը: «Համազգայինի», ուրեմն և ամբողջ հայության առջև ծառացել են մի քանի խնդիրներ («Արեւմտահայերէնը կը դասուի վտանգուած լեզուներու շարքին», «Սփիւռքը հետզհետէ կը կորսնցնէ իր երբեմնի կենսունակութիւնը», «Հայախօսութիւնն ու հայեցի մտածելակերպը աղէտալի անկումի մէջ են գրեթէ ամէնուրեք», «Օտարամոլութեան ախտը կրկին ջուրի երես դուրս ելած է» և այլն), բայց ամենավտանգավորը «անբնական ու դժվար բացատրելի» անտարբերությունն է, որը խաթարում է «հայրենիքին համար ու հայրենական հեռանկարով ապրելու մեր գոյերթին գաղափարական իմաստը», քանի որ և՛ Հայաստանի Հանրապետությունում, և՛ Սփյուռքում աննախադեպ հաջողության են հասել «պառակտման ճամբով հայութիւնը տկարացնելու միտող ապազգային եւ օտարակեդրոն փորձերը»:

Մեր ազգային կյանքի այս տխուր պատկերը փոխելու հարցում շատ մեծ դեր ունի «Համազգայինը», որ «կեանք է ու կենսակերպ», «առաքելութիւն է», «նուիրաբերում է», «յանձնառութիւն է», «ազգային ինքնութեան գիտակցում ու անկէ ամբողջական կառչածութիւն է» և ամենակարևորը՝ «երիտասարդութիւն է»:

1928-ին «Համազգայինի» հիմնադիրները «ոգեղէն հայրենիքի» տեսլականով համախմբեցին աշխարհասփյուռ հայությանը, «դարձան տիտաններ՝ իրենց կեանքով ու ամենակարեւորը՝ իրենց կտակած մեծ ժառանգութեամբ», և տասնամյակներ անց ամեն մի համազգայնական հավատարիմ է նրանց պատգամներին ու երախտիքի խոսք է հղում տիտանական այդ սերնդի ժառանգորդ, միության նահապետ, պատմաբան ու հասարակական նշանավոր գործիչ Երվանդ Փամբուքեանին:

Անցած տասնամյակները միության անդամները նշանավորել են հայկական ճեմարանների, վարժարանների, դպրոցների բացումով ու դասագրքերի արարումով (այո՛, արարումով)։ Հեշտ է ասել այդ մասին, իսկ ճշմարտությունը սա է. նույնիսկ պետական համակարգ ունեցող մեր երկրում ցայսօր չկան աշակերտին և ուսանողին հայ պահող, մարդ պահող դասագրքեր, որոնք արժանի են բառի երկու արմատներից առաջինի բո՛ւն իմաստին՝ դաս տալուն, այլ բառով՝ ուսուցանելուն, խրատելուն և դաստիարակելուն։ Դրանք մեր ազգային պատմության ու մտածելակերպի, մեր մշակույթի ու նկարագրի հետ ոչ մի առնչություն չունեցող գրքեր են, որոնց վայ-հեղինակները կամա, թե ակամա ծառայում են ինչ-որ անհայտ ուժերի շատ բացահայտ նպատակների իրագործմանը …

«Ինչո՞ւ» հարցի պատասխանը չունեմ։ Համոզված եմ՝ ոչ մի ՀԱՅ մարդ չունի։

Ժողովուրդներն այսպես են կորցնում հող ու պատմություն, ազգային դիմագիծ ու ամենահաղթ միասնականություն, այսպես են խեղաթյուրվում ներկան ու անցյալը, իսկ ապագայի մասին միայն բարբաջում են ընտրությունից ընտրություն …

Մինչև վերջերս թվում էր՝ մեր սահմաններից դուրս կատարվող անմարդկային ու անբացատրելի տեղաշարժերը մեզ չեն սպառնում, բայց այսօր ցավ ի սիրտ պիտի գրեմ, որ հայության նոր սերունդները «ապահայկական միջավայրին մէջ» են մեծանում ոչ միայն Սփյուռքում. եթե սա է առաջադիմությունը, ուրեմն պետք է ազգովին կռվենք նաև… առաջադիմություն կոչվող այս խառնակության դեմ։ Այլապես արժեզրկած կլինենք այն ամենը, ինչով օտարության մեջ պահել ու պահպանել ենք մեր ազգային դիմագիծը և ապրելու կամքը։

«Անտիտղոս, բայց իրաւ ընկեր եւ ազնիւ…» քանի-քանի՜ նվիրյալների ջանքերի շնորհիվ է տասնամյակներ շարունակ ապրել ու ապրում «Համազգային» հսկա այս կառույցը, քանի-քանի՜ հայ մարդ կարող է հպարտությամբ կրկնել Վրեժ-Արմենի խոսքը. «Ես զաւակն եմ «Համազգայինի», «Ու ես կը մնամ անոր զաւակը, անոր համեստ մէկ զինուորեալը» կամ դոկտոր Հրանտ Մարգարյանի նման համոզված պնդել, որ ամեն հայ պիտի ապրի ու գործի «հաւատքի ճամբով՝ հանուն Հայաստանի եւ հայութեան»։

Սա է «Համազգայինի»՝ սերունդից սերունդ փոխանցվող ոգին, հոգևոր ու մշակութային այն ջահը՝ «Լեւոն Շանթի ու Նիկոլ Աղբալեանի նման տեսլական ունեցող անձնաւորութիւններու ձեռամբ վերցուած ջահը», որ այսօր էլ «յատուկ առաքելութիւն ունի՝ լուսաւորելու մեր մշակութային, կրթական ու գրական աշխարհը»։

««Համազգայինի» (յուշեր, վկայութիւններ, խորհրդածութիւններ եւ մտածումներ)» գրքում շատ հետաքրքիր էջեր կան, ծանոթ ու հարազատ անուններ, կարևոր պատմական տեղեկություններ, որոնք հայապահպան այս միության և մեր ազգային պատմության համար արժեքավոր փաստեր են։ Ընթերցողն այս գրքում, անպայման, կգտնի միության հոբելյանի առիթով ասված հարգանքի ու խոնարհումի խոսքեր, նորից ու նորից կառնչվի նվիրական բազում անունների և հուսամ՝ կփնտրի իրեն այսօր հուզող հարցերի պատասխանները հայ Սփյուռքի գոյատևման ու ամենօրյա մաքառման պատմության մեջ։

Իմ կյանքում, փա՛ռք Աստծո, շատ-շատերի կողքին կա նաև Մարգար և Էլիզ Շարապխանյան ամոլի անմնացորդ նվիրումի ու ծառայության օրինակը …

Ավարտեմ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ Արքեպիսկոպոս Փանոսեանի «Ի խնդիր մշակութային նոր ու խիզախ խոյանքի» խոսքից հատվածով. «Պէտք է հաւատանք, որ տակաւին մեր ժողովուրդին մէջ կայ այդ ազգային յանդգնութեան ոգին, եւ կան անոնք, որ կրնան նուիրումով եւ աննահանջ կամքով աշխատանքը շարունակել, որպէսզի քիչ մը քաղցրանայ ու հայանայ մեր կեանքը»։

Տա՛ Աստված … ■

Երբ չենք յարգեր երթեւեկի կանոնները

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ
Ճարտարապետ, գրող, հրապարակագիր, «Հորիզոն»-ի ու «Հորիզոն գրական»-ի աւագ խմբագիր

Լսա՞ծ էք, որ մարդիկ չուզեն յարգել երեթեւեկի կանոնները:

Բոլորս ալ կը գիտակցինք, որ եթէ չյարգենք, կրնանք արկածի մը պատճառ դառնալ եւ վտանգել ուրիշին կամ մեր սեփական կեանքը: Եւ ի հարկէ նաեւ կրնանք... յիմարի տեղ դրուիլ:

Կը յարգենք, որովհետեւ կանոնները դրուած են պատկան մարմինի մը կողմէ:

Կը յարգենք, որովհետեւ առանց այդ կանոններուն կարելի չէ ապահով երթեւեկել:

Կը յարգենք, որովհետեւ կը տուգանուինք, եթէ չյարգենք այդ կանոնները:

Այսքան պարզ է խնդիրը՝ գրուած կանոններու պարագային:

Կան նաեւ չգրուած կանոններ: Այո՛, երթեւեկի չգրուած կանոններէն են քաղաքավարութիւնը, ուրիշին հանդէպ յարգանքը, ուրիշին ճամբայ տալու վեհանձնութիւնը եւ այլն:

Բայց միայն երթեւեկը չէ, որ իր կանոնները ունի:

Մեր կեանքի շատ ոլորտներ ու մարզեր այդպէս սահմանուած են գրուած ու չգրուած կանոններով: Մենք սակայն յաճախ տրամադրուած ենք չյարգելու զանոնք, չենթարկուելու անոնց, խուսափելու անոնցմէ՝ թաքուն շահ մը կամ առաւելութիւն մը ձեռք ձգելու մտադրութեամբ, նոյնիսկ սեփական կամքը ցուցադրելու համար՝ առանց երբէք անդրադառնալու, որ այդ ընելով՝ մենք հաւաքականութիւնը կը զրկենք



շահերէ կամ առաւելութիւններէ, զորս պիտի վայելէինք մենք եւս իբր մասնիկը այդ հաւաքականութեան:

Այդպիսի պարագաներ են, օրինակ, պետական օրինաւոր հարկերէ խուսափումը, անաշխատ վարձատրութիւն ստանալը, կեղծ վկայականներ ձեռք ձգելը եւ այլն, եւ այլն:

Հակաօրինական մեր կեցուածքները կը փորձենք պատրուակել կամ արդարացնել «մարդկային» իրաւունքներու հիման վրայ «սեփական կարծիք» ունենալու յաւակնութեամբ եւ տարբեր պատճառաբանութիւններով:

Յօդուածիս նպատակը, սակայն, այս հարցերու արծարծումը չէ, այլ անոնց զուգահեռը ընելն է մեր ինքնութեան պահպանման երեւոյթին հետ:

Այո՛, հայ ըլլալն ալ իր կանոններն ունի, ունենալու է:

Գիտեմ՝ ինչ կրնան ըլլալ գալիք առարկութիւնները: Անոնց ակնարկեմ ըսելիքս ըսելէ առաջ:

- Հայ ըլլալը կանոն չի կրնար ունենալ:
- Ո՞վ իրաւունք ունի նման կանոններ դնելու:
- Ամեն հայ, որ հայ եմ կ՚ըսէ՝ հայ է:
- Սապէս կեցուածք ունեցողը հայ կ՚ըլլայ, հակառակ կեցուածքը՝ ոչ:
- Հայ ըլլալու տարբեր ձեւեր կան:
- Եւ այլն...

Այսպէս մտածողները յաճախ անուանի մարդիկ են, մտաւորականներ, որոնք արուեստական կը նկատեն ամեն կաշկանդում, սահմանում, պարագայացում:

Սակայն... սակայն կա՛ն, այո՛, կա՛ն գործօններ, որոնց անտեսումը շատ ալ տարբեր չէ կամ չի կրնար ըլլալ երթեւեկի կանոններու անտեսումէն, որուն հետեւանքը կ՚ըլլայ քաոս: Այժմէն աւելցնեմ նաեւ, որ ինքնութեան գործօններու անտեսումը յաճախ կրնայ

ըլլալ ակամայ կամ անգիտակցական, բայց չի դադրիր բացասական ըլլալէ, բացասական հետեւանքներ ունենալէ:

Այդ գործօնները ազգային պետութեան մը մէջ օրէնքներով կը սահմանուին, բայց ոչ միայն պետական օրէնքներով, այլեւ աւանդաբար, մանաւանդ պատմութեան աւանդներով, մեր պարագային՝ վերապրումի առհաւութեամբ:

Նշեմ այդ գործօններէն գլխաւորները.

- Սեփական հողի վրայ ապրիլը:
- Սեփական հողի պաշտպանութեան պատրաստ ըլլալը:
- Սփիւռքի մէջ՝ հայութեան մէջ եւ հայօրէն ապրիլը:
- Հայ կեանքին մասնակից ըլլալը:
- Հայերէն խօսիլը, կարդալը, գրելը:
- Հայ լեզուին ու մշակոյթին զարգացման նպաստելը:
- Հայութեան արժանապատուութիւնը բարձր պահելը:
- Հայութեան, հայկականութեան դեսպան հանդիսանալը:
- Հայ ընտանիք կազմելը:
- Զաւակը հայ մեծցնելը:

Այս բոլորին մասին յաճախ արտայայտուած եմ, անհրաժեշտ չէ անոնց կարեւորութիւնը անգամ մը եւս շեշտելը: Կ'ուզեմ, սակայն, անդրադառնալ վերջին կէտին, որուն մասին շատ անգամ տարակարծիք եմ եղած ինծի շատ սիրելի ընկերներու, բարեկամներու հետ:

Զարմանալի ու անընդունելի եմ գտած, որ իրենց հայութեան անքակտելիօրէն փարած մարդիկ, երբ հարցը իրենց զաւակներուն է հասած, նոյնքան նախանձախնդիր չեն ուզած ըլլալ այս տեսակէտէն, - «այդքան հայ ըլլալու պէտք չունին», «այդքան լաւ հայերէն գիտնալու պէտք չունին», «այդքան յանձնառու ըլլալու պէտք չունին» եւ նման մտքերով անոնք հակադրուած են ինծի:

Անոնք իրենց զաւակները չեն ղրկած հայկական վարժարան, - ամենօրեայ վարժարան, ուր որ այդ կարելիութիւնը կայ,- կամ կանուխէն հանած են անկէ՝ օտար վարժարանը գերադաս նկատելով, զանոնք հեռու պահած են ազգային միւս հաստատութիւններէն՝ եկեղեցիէն, ակումբէն, կուսակցութիւններէն եւ միութիւններէն, մամուլէն, չեն մտահոգուած, երբ իրենց զաւակներն ու թոռները դարձած են ոչ հայախօս:

Իրաւամբ հարց պէտք չէ՞ տալ նմաններուն, թէ իրե՛նք ինչո՞ւ հայ կը մնան, հայութեան կապուած կը մնան,- աննպատակութեամբ, սովորամոլութեամբ, ճակատագրապաշտութեամբ, ուրիշ բան ըլլալու անկարողութեամբ, թէ՞ ինչ:

Հայ ըլլալը նպատակ է ինքնին:

Հայ ըլլալը մարտահրաւէր է նաեւ:

Հայ ըլլալը հպարտութիւն է մանաւանդ:

Բայց վերջին հաշուով ի՞նչ իմաստ ունի մեր հայ ըլլալը, եթէ այդ նպատակը, այդ մարտահրաւէրն ու այդ հպարտութիւնը չյաջողինք մեր յաջորդներուն փոխանցել: Փոխանցել մեր պատմութեամբ, մեր լեզուով ու մշակոյթով, մանաւանդ մեր դատով:

Թէ՛ հայրենիքի մէջ, թէ՛ Սփիւռքի:

Իսկ փոխանցել կարենալու համար մենք ալ երթեւեկի մեր կանոնները պէտք է ունենանք ու յարգենք...

ՀՅԴ Բիւրոյի յայտարարութիւնը



Վերջին շաբաթների ընթացքում Նիկոլ Փաշինեանն ու իր վարչակազմը ևս մէկ անգամ ցնցել են Հայաստանն ու հայոց աշխարհը՝ բացայայտելով իրենց հերթական միակողմանի զիջումների պատրաստակամութիւնը: Այս անգամ հերթը Տաւուշի մարզինն է: ՀՀ ներկայ իշխանութեան վարած ազգակործան քաղաքականութեան հետևանքով թշնամուն են յանձնւում ռազմավարական նշանակութեան տարածքներ, ինչը առաջացնելու է անվտանգային լրջագոյն սպառնալիքներ:

Արցախի յանձնումը միայն սկիզբ էր: ՀՀ իշխանութիւնը ամէն կերպ մոռացութեան է տալիս Արցախն ու Արցախի հարցը: Արցախի իրաւունքների բարձրացման և հետապնդման բացառիկ լիազօրութիւն ունեն Արցախի ժողովրդի կողմից ընտրուած պետական մարմինները: Այդ մարմինները վարկաբեկելը և նրանց գործունէութեանը խոչընդոտելը նշանակում է հրաժարուել այդ իրաւունքներից:

Արցախի կարգավիճակի և արցախահայերի հաւաքական վերադարձի իրաւունքի հարցերը հայութեան օրակարգի վրայ են և մինչև չլուծուեն այդ հարցերը, չի կարող լինել արժանապատիւ և իրական խաղաղութիւն:

Հ.Յ.Դաշնակցութիւնը անցնող տարիների ընթացքում բազմիցս զգուշացրել է Հայաստանի և Արցախի նկատմամբ թշնամիներից եկող վտանգների ու սպառնալիքների մասին, որոնց առջև գիտակցաբար և համոզումով տեղի է տալիս ՀՀ իշխանութիւնը:

Անհրաժեշտ է վերջ դնել ազգային արժէքների ու կառոյցների դէմ պայքարելու քաղաքականութեանը և կենտրոնանալ Հայոց բանակի մարտունակութեան բարձրացման ու հզօրացման վրայ:

Համոզուած ենք՝ Հայաստանում և Սփիւռքում բոլոր առողջ, ազգային ուժերի համախմբումը հրատապ անհրաժեշտութիւն է: Օրակարգը մէկն է՝ հայկական պետականութեան փրկութիւնը:

28 Մարտ, 2024 թ.

Ծնվել է 1995 թ. մարտի 17-ին Վայոց ձորի Արենի գյուղում, նահատակվել է 2020 թ. հոկտեմբերի 31-ին Արցախի հյուսիսային սահմանների պաշտպանության ժամանակ:
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության անդամ:
Սովորում էր Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում:

ԴՐՕՇԱԿ